7616

2004

1234
67890

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ ։

Հաւաքեալ 'ի քերականական մատենից
երեւելի հեղինակաց ։

Յաշխատասիրութենէ Պատուելի Գրիգոր Դպրի Փեշտըմալճեան ։

'Ի Պատրիարգութեան Թագաւորեալ մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ Տ՟ն Ստեփաննոսի ամենապատիւ և վեհափառ Արք Եպիսկոպոսի ։

ՀԱԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI · 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԵՐԵՎԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՏՊԵԱԼ ՎԵՐՍՏԻՆ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

1835 ՅՕՐԹԱԳԻՒՂ ՌՄՁԴ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՊՕՂՈՍԻ ԱՐԱՊԵԱՆ
ԱՊՈՒՉԵԽՑԻՈՅ ։

[illegible stamp]
125
ԱՓ-081

Հ

Ուր կերթաս ե

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

# ԱՌԱՋԱԲԱՆ

Գիտնութիւն արուեստի Քերականութեան՝ որով լինի մուտ 'ի զանազան մակացութիւնս, պայծառ քան զլոյս միջօրէի յայտնի գոլով ամենեցուն, յօժարին բազումք յուսումն նորին բերել եռանդեամբ, բայց սակաւք գտանին 'ի կատարումն արուեստին հասեալ։

Եւ այսմ խակութեան չերևի այլ ինչ պատճառ իրաւացի, բայց եթէ գաղջութիւն ուսանողաց. որք առ 'ի քերել յանձանց զկարճամտութեանն բամբասանս, ոմն զյոյժ ընդարձակութիւն քերականութեանն պատճառէ, և ոմն զկարի համառօտութիւնն, և այլ ոմն զչափաւորին ծանրագին և դժուարագիւտ լինել։

Եւ զոր օրինակ՝ իմաստուն բժիշկ զօգտակար ինչ փոշի՝ զոր չախորժէ առնուլ հիւանդացեալն, խոհական խորհրդով պատուիրէ դեղագործողին յայլ ինն ատրաղ յեղանակել՝ 'ի մածուկ կամ յօշարակ, առ 'ի դրդել զախորժակ ախտացելումն՝ յարբումն դեղոյն օգտակար.. թ՛ան։

Այսպէս և մեք այժմ ըստ սորասու դեղագործողի զքերականական վարդապետութիւնս և զկանոնս այլովքն հանդերձ՝ նորոգ կարգաւ այլ ոչ նորոգ քննութեամբ 'ի մէջ մատուցաք, բաւական համարելով զորդի և զվայելմի հեղինակաց բազմաջիրան երկասիրութիւն առ երկայնամիտ խուզողութիւն կարևորացն ամենայնի։

Ո՛չ ուրեք երբէք տեսանի 'ի սմա փիլիսոփայական բաժանումն և գտումն բառից և բանից, և ոչ նշմարանք ուղղութեան իրիք երևելի հեղինակաց. այլ որ ինչ միանգամ փոքր մի մթին կամ դժուարահաս թուէր առ խելամտութիւն աշակերտելոց, այնոքիկ և եթ պարզաբանեալ դնին առ հեշտընկալ լինելոյ։

Յառաջնում մասին քերականութեանս՝ որ ուսուցանէ պարզաբար զութ մասունս բանին, թէ 'ի հոլովս անուանց և թէ 'ի խոնարհմունս բայից և թէ յայլ մասունս բանի, ուր ուրեք կարևոր մեզ թուեցաւ՝ յաւելաք դնել զառաձկական նշանակութիւնս, ոչ այնքան 'ի ստուգութիւն՝ քան թէ 'ի ծանօթութիւն իմաստից բառին։

Իսկ յերկրորդումն՝ ուր ուսանողին կանոնք համառօտութեան մասանց բանին, զոր հայկականաւ վարիլ բառական վարկոք. և որչափ ինչ մարթ էր համառօտ՝ բայց գրեթէ ոչ ինչ պակաս կամ կրճատ յորոց պէտս ունին ուսանողք՝ հոգացաք նշանակել զամենայն.

Եղանակ վարդապետութեան կանոնաց և տարրաղ կարգաւորութեան նիւթոյն՝ զոր կալաք ՚ի բովանդակ ընթացս գործոյս, է այն զոր ՚ի սկզբանէ և այսր սովոր էաք վարել ՚ի դասատուութեան մերում իբրև դիւրահեշտ առ ուսուցանել և առ ուսանիլ.

Զօրինակն բազում ուրեք ոչ նոյնութեամբ եդաք, այլ ըստ պահանջման նիւթոյն. և ոչ զտեղիսն յորոց հանեալ են նշանակեցաք, ածեալ զմտաւ թէ ոչ օգուտ ինչ են ուսանողաց. մանաւանդ զի արդէն ազդ արարեալ են ՚ի հեղինակաց.

Այսու պատճառաւ ոչ ինչ մնայ աշակերտելոյ, բայց եթէ փոյթեռանդն ջանիւ ՚ի դասատուութիւն քերականութեանս պարապել, և ուսուցչաց՝ անդանդաղ սիրով զդասն աւանդել. որով ուսանողք և ուսուցանողք ՚ի միասին վայելեսցեն յարդիւնս վաստակոց իւրեանց, և ընկալցին զգովութիւն և զվարձ յամենայն մարդկանէ.

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ։

## ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ։

Քերականութիւնն է արուեստ ուղիղ խօսելոյ։ Քանզի ուսուցանէ ըստ կանոնի կարգել զբանս ՚ի խօսելն և ՚ի գրելն, և բարւոք հասկանալ զգրաբառ լեզուն։ Եւ մասունք նորա են չորք. Գիր. Վանկ. Բառ. Բան։

Գիրն է գիծ ինչ նշանակիչ ձայնի. իսկ ձայն է հնչումն ինչ յօդելի և հեգելի. որպէս այն ձայնքս ա և բ. հեգեալ ընդ միմեանս՝ հնչեն զձայնս աբ։

Եւ այսպիսի գիրք կամ նշանք ձայնից ՚ի մեր լեզուս են երեսուն և վեց. որոց առաջինն է ա, և վերջինն ք. ընդ որս յետոյ յաւելան օ և ֆ, որով եղեն երեսուն և ութ։

Ի սոցանէ ոմանք են ձայնաւոր, որ ըստ ինքեան հանեն զձայնս իւրեանց. և են եօթն սոքա. ա. ե. է. ը. ի. ո. օ։

Իսկ ոմանք են բաղաձայն, զի չունին զպարզ հնչումն. այլ կցեալ ընդ ձայնաւոր ձայնս՝ և ՚ի միասին հեգեալ, հանեն զձայն իւրեանց. այսպիսի են այլ միւս մնացեալ ձայնքն ամ։ Իսկ Ուն ոչ է պարզ գիր, այլ յերկուց գրոց ձեւացեալ. զի ո և ւ կցեալ ընդ միմեանս՝ կազմեն զնշանագիրս Ու։

Վանկն է ձայն ինչ, որ միով հնչմամբ ելանէ 'ի բերանոյ մարդոյն՝ բաղկացութեամբ ձայնաւոր և բաղաձայն տառից. որպէս՝ Ա. պէտ. լուր. սուրբ. սուրբք. և աւելի քան զվեց գիր՝ վանկ ոչ կարէ լինել։

Բառն է ձայն նշանական. զի նշանակէ զիրս, կամ զգործողութիւս, և կամ զպարագայս իրաց կամ գործողութեանց. որպէս՝ Մարդ. դու. կարդա՛. նստեալ. վաղն. այսօր. քանզի. ո՛հ.

Բանն է կարգաւոր յօդաւորութիւն բառից, որ յայտնէ զխորհուրդս մտաց. որպէս յորժամ ասեմք՝ Զինչ օգուտ է լիութիւն տանն, յորժամ ընտանիք զիրեարս կոտորեն։

Իսկ բառքն են ութն ազգ՝ յորոց կազմի բանն, որ է՝ խօսք մարդոյ. վասն որոյ և այսոքիկ ութ ազգ բառից կոչին մասունք բանի. որք են՝ Անուն. Դերանուն. Բայ. Ընդունելութիւն. Նախադրութիւն. Մակբայ. Շաղկապ, և Միջարկութիւն.

Աստի յայտ է՝ թէ բովանդակ արհեստն քերականութեան կայանայ յերկուս յայսոսիկ. մի՝ 'ի տեղեկութիւն կազմութեան և հանգամանաց ութից մասանց բանին. և միւս՝ 'ի հմտութիւն կանոնաւոր համաձայնութեան նոցին ընդ միմեանս՝ 'ի յայտնել զիմացուածս մտաց։ Վասն որոյ և առաջիկայս Քերականութիւն յերկուս մասունս տրոհեցաւ. ուր յառաջնումն բացատրի Տեղեկութիւն մասանց բանին. և յերկրորդումն՝ Հմտութիւն համաձայնութեան նոցին։

# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ։

## Տեղեկութիւն մասանց բանին։

## ԳԼՈՒԽ Ա.

### Անուն։

ա. Անունն է մասն բանի, որով իրն կոչի, և ճանաչի լինել այս ինչ, կամ այսպիսի ինչ. ոպ՝ Ձի. գործ. առիւծ. զօրեղ. ակար. ահաւոր։ Սա բաժանի յերկուս. Գոյական, և Ածական։

Գոյականն է՝ որ միայնակ վարի ՚ի բանս, և նշանակէ զինչութիւն իրաց. ոպ՝ Մարդ. պետրոս. հոգի. մարմին. բժիշկ. ժողովուրդ. յոյս. սէր. աթոռ. տուն. եւն.

Ածականն է՝ որ միայնակ ոչ վարի ՚ի բանս, այլ պահանջէ յարել ՚ի գոյականս, և նշանակէ զորպիսութիւն իրաց. ոպ՝ Սեւ. փոքր. գեղեցկագոյն. տգեղագոյն. ամենաբարի. ամենաչար. Թափանցիկ. դիմահար. հաստատուն. անհաստատ. եւն.

բ. Գոյականն յերիս տեսակս բաժանի. Յատուկ. Հասարակ. Հաւաքական.

Յատուկն է՝ որ զմի ինչ նշանակէ, և զմիոջէ միայն ասի, և ոչ վարի յոգնականապէս. որպէս՝ Հայկ. Տիգրիս. Մասիս. Կոստանդնուպօլիս. եւն։

Հասարակն է՝ որ բազմաց պատշաճի, և զմիոյ միոյ ՚ի նոցանէ ասի. ոպ՝ Մարդ. գետ. լեառն. քաղաք. եւն.

Հաւաքականն է՝ որ եզակի ձայնիւ զբազում ինչ նշանակէ, և զմիոյ միոյ ՚ի նոցանէ ոչ ասի զատաբար՝ այլ

հաւաքապէս միայն․ որպէս՝ Ազգ․ ժողովուրդ․ բանակ․ հօտ․ եւ այլն։

Է․ Ածականն յերիս աստիճանս բաժանի․ Դրական․ Բաղդատական․ Գերադրական։

Դրականն նշանակէ զորպիսութիւն գոյականին պարզապէս առանց սաստկացուցանելոյ․ որպէս՝ Բարի․ չար․ մեծ․ փոքր․ եւ այլն։

Բաղդատականն նշանակէ զորպիսութ̃ գոյականին համեմատութ̃ ընդ այլս լինել սաստիկ․ որպ՝ Բարեգոյն․ չարագոյն․ մեծագոյն․ փոքրագոյն․ եւ այլն։ Իսկ այս կազմի մասնկամբս գոյն․ բայց երբեմն յաւելմամբ մասնկանս առ․ որպ՝ Բարի առ․ չար առ․ կամ՝ առ բարի․ առ չար․ եւ այլն։

Գերադրականն է՝ որ նշանակէ զորպիսութի գոյականին յոյժ սաստկացեալ, և ՚ի վերջին աստիճանն հասեալ․ որպ՝ Ամենաբարի․ ամենաչար․ ամենամեծ․ ամենափոքր․ եւ այլն։ Իսկ այս սովորաբար կազմի բառիւս ամէն․ բայց երբեմն յաւելմամբ ՚ի վ̃ր բաղդատականին մասնկանս առ․ որպ՝ Բարեգոյն առ․ չարագոյն առ․ կամ՝ առ բարեգոյն․ առ չարագոյն․ եւ այլն։ Ձեւանայ նաև բառիւս գեր․ որպ՝ Գերամաքուր․ գերապայծառ, եւ այլն․ որ նշանակէ ասել՝ ամենամաքուր․ ամենապայծառ․ եւ այլն։

Կարեն կազմիլ և կրկնութ̃, կամ յաւելմամբ սաստկացուցիչ բառի իմիք․ որպէս՝ Մեծամեծ․ ծանր ծանր․ ամենևին բարի․ անհնարին չար․ եւ այլն․ որ է ասել․ Ամենամեծ․ ամենածանր․ ամենաբարի․ ամենաչար․ եւ այլն։

---

## ՅՕԴՈՒԱԾ․ Ա․

Պարագայք անուանց։

Պարագայք անուանց՝ որք և Հետեւմունք կոչին, են չորք․ Ձև․ Տեսակ․ Թիւ․ Հոլով։

ա̃․ Ձևն է երկու․ Պարզ, և Բաղդ․ Պարզն է՝ յո-

րում գտանի մի միայն նշանական ձայն. որպէս՝ Լոյս. բարի. Թագաւոր, եւն. ըստ այսմ են. Յար. տար. ներ. վէր. հակ. մակ. եւն.

Բարդն է՝ յորում գտանին երկու նշանական ձայն. ո՛պ՝ Լուսապայծառ. բարեպաշտօն. Թագաւորանիստ, եւն. այսպիսի են և բառքս. Յարադիր. տարակաց. ներգործական. վերբերական. հակաճառ. մականուն. եւն.

Կան և քանի մի բառք, յորս գտանին երեք նշանական ձայնք. որպիսի են՝ Միաբանասէր. հնգետասանամեայ. ընդդիմամարտ, եւն. և այսպիսիքս կոչին Յարաբարդ.

գ. Կան և անուանք ինչ, որք յառաջոյ կցեալ ունին աննշան մասնիկ ինչ կամ տառ. ո՛պ են՝ ա. ան. տ. ապ. ամ. դժ. չ, եւն. որովք 'ի ներհական նշանակութի՞ փոխին. ո՛պ՝ ակամայ. անխրատ. տգէտ. ապերախտ. անբիծ. դժգոհ. չգոյ, եւն. և այսպիսիքս կոչին Բաղադրեալ.

դ. Ոմանք 'ի բարդ բառից՝ առանց յօդի անմիջապէս շարակցին ընդ միմեանս. որպէս՝ Լայներես. մեծակն. հացկատակ. ինքնիշխան. եւն.

Իսկ ոմանք յօդիւ շարակցին, և յօդքն են ձայնաւոր տառքս՝ ա. ե. է. ի. ւ. ու. որպէս՝ Մեծաբան. բարեսէր. գօտէպինդ. բանիբուն. առաւուր. այրուձի.

դ. Բարդութի անուանց լինի քառակի. Նախ՝ յերկուց ամբողջ բառից. ո՛պ՝ Մեծահանդէս. գեղապայծառ. կենցաղօգուտ. եւն. Երկրորդ՝ յերկուց փոփոխելոց. ո՛պ՝ Լուսատու. երկդիմի. բազմագունի. եւն. Երրորդ՝ 'ի միոջէ փոփոխելոյ 'ի սկիզբն, և 'ի միոջէ ամբողջէ 'ի վերջն. ո՛պ՝ Տանուտէր. մօրաքոյր. ականատես. եւն. Չորրորդ՝ 'ի միոջէ ամբողջէ 'ի սկիզբն, և 'ի միոջէ փոփոխելոյ 'ի վերջն. ո՛պ՝ Մեծազգի. միամօր. յոքնապիսի. եւն.

ե. Բառք՝ որք 'ի սեռական հոլովի իւրեանց փոփոխին, սովորաբար այնպիսի փոփոխութե՞ դնին 'ի սկիզբն բարդութե՞. ո՛պ բառս Սէր, 'ի սեռական հոլովի փոփոխի և լինի Սիրոյ. և բարդի Սիրայորդոր. սիրանուանդ. սի-

բարկու. ևն: Բայց յորժամ ՚ի վերջոյ դնի, մնայ անփոփոխ. որպէս՝ Աստուածասէր. մարդասէր. հոգեսէր, ևն. ըստ այսմ՝ Սրբատուփ. ամենատուր. լուսազարդ. եռալոյս. մաքրափայլ. գերամաքուր. ևն:

Գտանին և անուանք ինչ, որք ՚ի բաց թողուն զձայնաւոր տառսն սեռականին, և այնպէս բարդին ընդ յետագայ անուան. որպէս՝ Ձուկն՝ ձկան, ձկնորս. Նուռն՝ նռան, նռնաձև. Տուն՝ տան, տնտես. Սկիզբն՝ սկզբան, սկզբնամայր. ևն:

Են և անուանք ինչ, որք երբեմն փոփոխութեամբ բարդին, և երբեմն առանց փոփոխութեան. որպէս՝ Ականատես, և ակնապարար. արեանարբու, և արիւնարբու. վրիժառու, և վրէժխնդիր. անուանակիր, և անունակիր. առնակերպ, և այրակերպ. ևն.

Դ. Յոգնական անուանք ՚ի բարդելն՝ սովորաբար լինին եզական դնին՝ կորուսանելով զտառս ք. որպէս՝ Փառք, փառասէր և վեհափառ. Կամք, կամակատար և բարեկամ. Միտք, մտախաբ և կորովամիտ. Հրաշք, հրաշագեղ և մեծահրաշ. ևն: Իսկ երբեմն մինչ դնին ՚ի սկիզբն բարդութեան, զ ք տառն փոխեն ՚ի ս. և լինի անորոշ հայցական բարդին. որպէս՝ Մեղք, մեղսասէր. Օրէնք, օրէնսդէտ. Կեանք, կենսաբեր. ևն:

—

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### Տեսակք անուան:

Տեսակն անուան է երկու. Նախատիպ, և Ածանցական:

Նախատիպ կամ նախագաղափար անունն է՝ որ չունի ՚ի վերջոյ աննշան մասնիկ ինչ, և կայ յառաջին նշանակութեան իւրում, թէ գոյական իցէ անունն և թէ ածական, թէ պարզ և թէ բարդ կամ բաղադրեալ. որպէս՝ Մարդ. բարի. բարեպաշտ. անմահ. ևն:

Ածանցական անունն է՝ որ ’ի վերջոյ ունի աննշան մասնիկ ինչ․ որով և փոխեալ է յայլ իմն նշանակութիւն․ որպէս՝ Մարդկային․ բարեգոյն․ բարեպաշտուհի․ անմահութիւն․ ևն։

Ածանցականներս աննշան մասնիկք բազում են յոյժ․ յորոց ոմանք յաճախ ’ի գործածին, և կէսք դուն ուրեք․ և առ հասարակ բաժանին ’ի զանազան տեսակս, զորս համառօտիւ նշանակեսցուք ’ի ստորև։

ա․ Ոմանք կոչին Հայրանունական․ որք կցին յանուն հօր, կամ տոհմին, կամ վարդապետին, տան նշանակել զզաւակն, կամ զազգայինն, կամ զաշակերտն․ որպիսիք են՝ եան․ ցի․ ունի․ ական, ևն․ որպէս՝ Ռուբինեան․ Իսրայէլացի․ Արշակունի․ պղատոնական․ ևն։

բ․ Ոմանք՝ Ստացական․ որք կցեալ ’ի նախադասին, տան նշանակել զստացօղն, կամ զվերաբերեալն առ նա․ որպիսիք են՝ կան․ աւոր․ եղէն, կամ՝ էն․ նի․ ի, ևն․ որպէս՝ Հոգեկան․ երկնաւոր․ լուսեղէն․ նշենի․ արծաթի․ ևն։

գ․ Ոմանք՝ Գործողական․ որք կցին ’ի նախադասին՝ ցուցանեն զգործողն կամ զգործին նորա․ որպիսիք են՝ ոց․ որդ․ ան․ րան․ իչ․ կան․ ուչ․ իչ․ օղ, կամ՝ ող․ ու․ աւոր, ևն․ որպէս՝ Արարոց․ կշռորդ․ խաթան․ նուագարան․ մարտիչ․ դուժկան․ տեսուչ․ սրբիչ․ սիրօղ, կամ՝ սիրող․ երկրպագու․ աղաչաւոր․ ևն։

դ․ Ոմանք՝ Ընթակայական․ որք կցեալ ’ի նախադասին, ցուցանեն զյարմարաւորն ընթակայանալոյ նմին․ որպիսիք են՝ ցու․ ուտ․ կան․ ելի․ աւոր․ այ․ ոյ, ևն․ որպէս՝ Մահացու․ կիզանուտ․ եղծական․ գովելի․ պատժաւոր․ անուղղայ․ հաճոյ․ ևն։

ե․ Ոմանք՝ Պարունակական․ որք կցեալ ’ի նախադասին, տան նշանակել զտեղի կամ զպարունակօղ նորա․ որպիսիք են՝ ոց․ նոց․ ստան․ րան․ ան․ պան, ևն․ որպէս՝ Ծաղկոց․ հիւանդանոց․ անդաստան․ վարժարան․ կայան․ պարտիզպան․ ևն։

զ․ Ոմանք՝ Ունակական․ որք կցեալ ընդ նախադասին,

զունօղն նր ցուցանեն · որպիսիք են՝ ւոր · չան · նի · ի · եմ · ջեմ · էն · որ, եւն · որպէս՝ Թեւաւոր · բանաչան · երկոտանի · ծառայէի · խոհեմ · ուշիմ · նկարէն · հաստոր · եւն.

Է · Անունք՝ Գաւառական · որք կցեալ ընդ նախադրին, առաւելուն և սաստկացուցանեն զնշանակութի նորա · որպիսիք են՝ գին · եղ · ւէտ · լի · ատ · ատ · ա, եւն · որպ՝ Աշտագին · համեմարեղ · երանաւէտ · սքանչելի · ծաղկատ · ապառաժուտ · աղդոս · եւն.

Ը · Անունք՝ Նուազականք · որք կցեալ ընդ նախադրին, ցուցանեն զնա փոքրկացեալ կամ պակասեալ · որպիսիք են՝ ակ · իկ · ուկ · ատ, եւն · որպէս՝ Նաւակ · եզնիկ · պարուկ · ձեռնատ · եւն.

Թ · Անունք՝ Վերացական · որք կցեալ ընդ անուն ինչ, ցուցանեն զնա վերացեալ յենթակայէ · որպիսիք են՝ ումն · ութիւն · ած · ուած · էստ · իստ · ունդ · ուրդ · ոն · ոյ · եւն · որպէս՝ Գոչումն · աղաւաղութիւն · հնչումն · կոտորած · խնդրուած · գովեստ · հանդէստ · սերունդ · խառնուրդ · պաշտօն · քիշտայ · եւն.

Ժ · Անունք՝ Նոյնական · որք զնշանակութի նախադասին անփոփոխ պահեն · որպիսիք են՝ րան · ար · տէ · ոգ · ունչ · իկ, եւն · որպէս՝ Կերպարան · ախպար · անձրեւ · նորոգ · անդրունչ · կայթիկ · եւն.

ԺԱ · Անունք՝ Թուական · որք կցեն ՚ի թուական անուանս, եղանակաւորեն զնոսա · որպիսիք են՝ ակ · եակ · երորդ · կին · պատիկ · իր, եւն · որպ՝ Միակ · քառեակ · վեցերորդ · չորեքկին · եօթնպատիկ · երիր · եւն.

ԺԲ · Գոյական և անուանք ինչ Կրկնածանցական · որպ են սոքին՝ Հայր, հայրենի, հայրենական · գործ, գործաւոր, գործաւորութի · պէտք, պիտոյ, պիտանի, պիտանացու · եւն.

Տեղեկութի ձեւոց և տեսակաց անուանց կարեւոր է յոյժ ուսանողաց՝ ՚ի ճանաչել զնշանակութիս բառից · վասն այսորիկ բացատրութի սոցա փոքր մի երկար ձգեցաւ ՚ի համառօտութեան յայսմիկ:

## ՅՕԴՈՒԱԾ. Գ.

### Թիւք անուանց.

ա. Թիւք անուանց են երկու. Եզական, և Յոգնական.

Եզական. որպ՝ Այր. հիմն. ոսկր. բեռն. օր. տէր. եւն.
Եւ յոգնական. որպէս՝ Արք. հիմունք. ոսկերք. բեռինք. աւուրք. տեարք. եւն.

Գտանին և անուանք, որք ունելով 'ի վերջոյ զնշան մասնիկս ինչ, եզակի ձայնիւ լինին յոգնակի. և այսպիսի մասնիկք ոչ են ածանցականակերտ՝ այլ յոգնականակերտ. որպիսիք են սոքին՝ անի. եան. տի. իկ. չան. էր, եւն. որպ՝ Աւագանի. խոզեան. մանկտի. մարդիկ. բազմաչան. օրէր, եւն. վերջինս էր՝ միայն յաշխարհաբառ լեզուոջ 'ի գործ ածի.

բ. Գտանին և անուանք ինչ, որ բնէ իւրեանց են անյոգնական. որպ՝ Յոյս. սէր. քուն. երկիր. եւն.

Նոյնպէս և յատուկ անուանք անձանց, տեղեաց, քաղաքաց, լերանց, գետոց, եւն. որպէս՝ Պետրոս. Կիպրոս. Կարին. Մասիս. Յորդանան. և այլն.

Կան և անուանք, որք անեզականք են. որպիսիք են՝ Փառք. վարք. կեանք. խելք. կարծիք. դժոխք. և այլք բազումք.

---

## ՅՕԴՈՒԱԾ. Դ.

### Հոլովք անուանց.

ա. Հոլովք անուանց են՝ որովք փոփոխի մի և նոյն անունն՝ կամ 'ի վերջն, կամ 'ի սկիզբն, և կամ յերկոսին ևս. յորս փոփոխի և եղանակ նշանակութեան նորա, թէ իցէ եզական և թէ յոգնական. և այս հոլովք սովորաբար են տասն.

Ուղղական. Սեռական. Գործիական. Պարառական.

Հայցական · Պատմական · Բացառական · Տրական ·
Ներգործական · Կոչական ։

ե · Ուղղական հոլովն՝ ուղղակի ցուցանէ զիրն · որպ՝
Արքայ · արքայք ·

Սեռականն ցուցանէ իբրև ունօղ իրի իմիք, թէ ազգ-
ից նորա, թէ ստացուած, և թէ այլ ինչ · որպէս՝
Արքայի · արքայից ·

Գործիականն ցուցանէ զիրն իբրև միջնորդ և գործի,
որով առնեմք զինչ · որպ՝ Արքայիւ · արքայիւք ·

Պարառականն ցուցանէ զշրջապատ իրին · որպ՝ Զար-
քայիւ · զարքայիւք ·

Հայցականն ցուցանէ զիրն իբրև խնդրելի · որպէս՝
Զարքայ · զարքայս ·

Պատմականն ցուցանէ տալ կամ առնել ինչ վ՟ իրին ·
որպէս՝ Զարքայէ · զարքայից ·

Բացառականն՝ որ և սկզբնական ասի, ցուցանէ իրն այն-
պիսի՝ յորմէ ելանէ, կամ բառնի, կամ սկսանի իր ինչ ·
որպէս՝ Յարքայէ · յարքայից ·

Տրականն ցուցանէ զիրն այնպիսի՝ որում տուեալ լի-
նի, կամ առաքի, կամ պատշաճի իր ինչ · և է կրկին,
նախդրիւ և վերջահոլով · որպէս՝ Յարքայ, և արքայի ·
յարքայս, և արքայից ։ Վասն զի ա՟մ սեռական ըստ
յարմարութեան տեղւոյն կարէ լինել և տրական · որ և
կոչի վերջահոլով տրական ։

Ներգործականն ցուցանէ զիրն այնպիսի՝ յորում մնայ
իր ինչ · որպ՝ Յարքայի · յարքայս ։ Ամենայն նախդրիւ
տրական՝ կարէ լինել ներգործական · որպէս՝ Յարքայ,
յարքայս ։

Կոչականն ցուցանէ զիրն իբրև կոչեցեալ · որպ՝ Ո՛վ ար-
քայ · ո՛վ արքայք ·

զ · Անուանք ՚ի հոլովելն այլ և այլ կերպիւ փոփոխին
՚ի վերջն՝ ՚ի լինել իւրեանց սեռական և գործիական ·
ոմանք վերջանան՝ ի, իւ · ից, իւք · ոմանք՝ ի, աւ · աց,

ու. ոմանք՝ ոյ, ոջ. ոյ, ոջէ, ևն. վասն որոյ ընդ այլ և այլ օրինակօք հոլովին. և այս տարբեր օրինակք կոչին

Հոլովմունք:

Ոմանք յանուանց 'ի հոլովելն՝ անփոփոխ և անկորուստ պահեն զձայնաւոր տառս իւրեանց. ոմանք փոփոխեն, և ոմանք կորուսանեն. և այս ամենայն յայտնի տեսանի

յառաջիկայ յօրինակդ:

# ՕՐԻՆԱԿ Ա.

## Եզական.

| | | |
|---|---|---|
| Ուղղական. | Արքայ. | փատիշահ. |
| Սեռական. | արքայի. | փատիշահըն. |
| Գործիական. | արքայիւ. | փատիշահ իլէ. |
| Պարառական. | զարքայիւ. | փատիշահըն էթրաֆընտա. |
| Հայցական. | զարքայ. | փատիշահը. |
| Պատմական. | զարքայէ. | փատիշահ իչին. |
| Բացառական. | յարքայէ. | փատիշահտան. |
| Տրական. | յարքայ. | փատիշահա. |
| Ներգոյական. | յարքայի. | փատիշահտա. |
| Կոչական. | ով արքայ. | էյ փատիշահ: |

## Յոգնական.

| | | |
|---|---|---|
| Ուղղական. | Արքայք. | փատիշահլար. |
| Սեռական. | արքայից. | փատիշահլարըն. |
| Գործիական. | արքայիւք. | փատիշահլար իլէ. |
| Պարառական. | զարքայիւք. | փատիշահլարըն էթրաֆլարընտա |
| Հայցական. | զարքայս. | փատիշահլարը. |
| Պատմական. | զարքայից. | փատիշահլար իչին. |
| Բացառական. | յարքայից. | փատիշահլարտան. |
| Տրական. | յարքայս. | փատիշահլարա. |
| Ներգոյական. | յարքայս. | փատիշահլարտա. |
| Կոչական. | ով արքայք. | էյ փատիշահլար: |

Ընդ այսու օրինակաւ հոլովին և այլ բազում անուանք · յորոց ոմանք անփոփոխ և անկորուստ պահեն զձայնաւոր տառս իւրեանց · զոր օրինակ ·

Արհեստ , արհեստի , արհեստիւ · սէնահաթ ·
բան , բանի , բանիւ · սէօզ ·
գովեստ , գովեստի , գովեստիւ · մէթհ ·
զոհ , զոհի , զոհիւ · գուրպան ·
է , էի , էիւ · վար օլան շէյ ·
ընծայ , ընծայի , ընծայիւ · փէշքէշ ·
մարգարէ , մարգարէի , մարգարէիւ · փէյղամպէր ·
վկայ , վկայի , վկայիւ · շահատ ·
տօն , տօնի , տօնիւ · զիյնէթ , էօրթիւ ·
փեսայ , փեսայի , փեսայիւ · կիւվէյի ·

Ոմանք փոփոխեն զձայնաւոր տառս իւրեանց ·

Ուղէշ , ուղեշի , ուղեշիւ · թաջ ·
Ծէս , ծիսի , ծիսիւ · ատէթ ·
վէճ , վիճի , վիճիւ · մուճատէլէ ·
իղձ , ըղձի , ըղձիւ · արզու ·
փախստեայ , փախստէի , փախստէիւ · գաչգըն ·
արոյր , արուրի , արուրիւ · թիրինճ ·
ժամացոյց , ժամացուցի , ժամացուցիւ · սահաթ ·
նշոյլ , նշուլի , նշուլիւ · շավգ ·
վատթարագոյն , գունի , գունիւ · ֆէնարագ ·
տոյժ , տուժի , տուժիւ · ճէրիմէ ·

Ոմանք կորուսանեն զձայնաւոր տառս իւրեանց ·

Ատեան , ատենի , ատենիւ · տիվան ·
առիթ , առթի , առթիւ · սէպէպ ·
խիղճ , խղճի , խղճիւ · վիճտան , ինսաֆ ·
ճշմարիտ , ճշմարտի , ճշմարտիւ · սահիհ ·
բրուտ , բրտի , բրտիւ · չէօմլէքճի ·
խուլ , խլի , խլիւ · սաղըր ·

խումբ , խմբի , խմբիւ · պէօլիւկ ·
կարկուտ , կարկտի , կարկտիւ · տօլու ·
մանկուշտ , մանկշտի , մանկշտիւ · պէօլ պէօլլիւկ ·
օգուտ , օգտի , օգտիւ · ֆայտա ։

## Անէզական ։

Աղօթք , աղօթից , աղօթիւք · տուա ·
գնացք , գնացից , գնացիւք · կիտիշ ·
խնջոյք , խնջոյից , խնջոյիւք · ձիաֆէթ ·
խօսք , խօսից , խօսիւք · սէօզ ·
հրաշք , հրաշից , հրաշիւք · մուճիզաթ ։

## ՕՐԻՆԱԿ · Բ ·

| Եզական · | | Յոգնական · | |
|---|---|---|---|
| Ո · Կարգ · | Սըրայ · | Կարգք · | Սըրալար · |
| Ս · կարգի · | սըրանըն · | կարգաց · | սըրալարըն · |
| Գ · կարգաւ · | սըրայ իլէ · | կարգօք · | սըրալար իլէ · |
| Պ · զկարգաւ · | սըրանըն էրի″ · | զկարգօք · | սըրալարըն էրի″ |
| Հ · զկարգ · | սըրայը · | զկարգս · | սըրալարը · |
| Պ · զկարգէ · | սըրայ իչիւն · | զկարգաց · | սըրալար իչիւն · |
| Բ · 'ի կարգէ · | սըրատան · | 'ի կարգաց · | սըրալարտան · |
| Տ · 'ի կարգ · | սըրայա · | 'ի կարգս · | սըրալարա · |
| Ն · 'ի կարգի · | սըրատայ · | 'ի կարգս · | սըրալարտայ · |
| Կ · ով կարգ · | էյ սըրայ · | ով կարգք · | էյ սըրալար ։ |

Ընդ այսու օրինակաւ հոլովին և այլ բազում անուանք · յորոց ոմանք անփոփոխ և անկորուստ պահեն զձայնաւոր տառս իւրեանց · Որ ։

Ազգ , ազգի , ազգաւ · միլլէթ ·
առակ , առակի , առակաւ · էօրնէկ ·
բարեկամ , բարեկամի , բարեկամաւ · տօսթ ·
գաւառ , գաւառի , գաւառաւ · էյալէթ ·

դատաստան, տանի, նաւ. շէրահաթ.
բարձօղ կամ բարձող, բարձողի, ձողաւ. գալտըրըճը.
շինօղ կամ շինող, շինողի, նողաւ. եափըճը.
հոգևոր, հոգևորի, հոգևորաւ. ճանլը.
լեղու, լեղուի, լեղուաւ. աճը.
հզօր, հզօրի, հզօրաւ. գուվէթլիւ.

Ոմանք փոփոխեն զձայնաւոր տառս իւրեանց.

Գետ, գետի, գետաւ. կէօլճէ.
սպառազէն, սպառազինի, սպառազինաւ. փիւր սիլահ.
ոսկեղէն, ոսկեղինի, ոսկեղինաւ. ալթունտան.
հովիւ, հովուի, հովուաւ. չօպան.
բոյթ, բութի, բութաւ. պաշ պարմագ.
ուղեցոյց, ուղեցուցի, ուղեցուցաւ. գըլավուզ.
փարագոյր, փարագուրի, փարագուրաւ. ֆէրահ.
սամոյր, սամուրի, սամուրաւ. սամուր.
Թակոյկ, թակուկի, թակուկաւ. սէպիլ. թէսթի.

Ոմանք կորուսանեն զձայնաւոր տառս իւրեանց.

Ահեակ, ահեկի, ահեկաւ. սօլ թարաֆ.
դղեակ, դղեկի, դղեկաւ. գալէ.
բժիշկ, բժշկի, բժշկաւ; հէքիմ.
գեղեցիկ, գեղեցկի, գեղեցկաւ. կիւզէլ.
փրկիչ, փրկչի, փրկչաւ. գուրթարըճը.
մահիճ, մահճի, մահճաւ. եաթագ.
Թարգմանիչ, թարգմանչի, թարգմանչաւ. թէրճիւման.
տիկ, տկի, տկաւ. թուլում.
աղմուկ, աղմկի, աղմկաւ. վէլվէլէ.
բազում, բազմի, բազմաւ. չօգ.

Անեզականք.

Աչք, աչաց, աչօք. կէօզ.
արտասուք, արտասուաց, արտասուօք. կէօզ եաշը.

միտք, մտաց, մտօք · Փիքիր ·
արհաւիրք, հաւրաց, հաւրօք · գօրգունչ շէյլէր ·
կեանք, կենաց, կենօք · էօմիւր ·

## ՕՐԻՆԱԿ · Գ·

| Եզական· | | Յոգնական· | |
|---|---|---|---|
| Ու · Գետ · | Չայ · | Գետք · | Չայլար · |
| Ս · գետոյ | չայըն · | գետոց · | չայլարըն · |
| Գ · գետով · | չայ իլէ · | գետովք · | չայլարիլէ · |
| Պ · զգետով · | չայըն էթր'' · | զգետովք · | չայլարըն էթրա'' |
| Հ · զգետ · | չայը · | զգետս · | չայլարը · |
| Տ · զգետոյ · | չայ իչին · | զգետոց · | չայլար իչին · |
| Բ · 'ի գետոյ · | չայտան · | 'ի գետոց · | չայլարտան · |
| Տ · 'ի գետ · | չայա · | 'ի գետս · | չայլարա · |
| Ն · 'ի գետ · | չայտա · | 'ի գետս · | չայլարտա · |
| Կ · ով գետ · | Էյ չայ · | ով գետք · | Էյ չայլար · |

Ընդ այսու օրինակաւ հոլովին և այլ բազում անուանք · յորոց ոմանք անփոփոխ և անկորուստ պահեն զձայնաւոր տառս իւրեանց · Դ° ·

Աթոռ, աթոռոյ, աթոռով · Իսքէմլէ, թախթ ·
ածխուն, ածխունոյ, ածխունով · ուճաք պաշը ·
այս, այսոյ, այսով · Ճին ·
արարած, արարածոյ, արարածով · Եարատըլմըշ ·
հարուած, հարուածոյ, հարուածով · Վուրուշ ·
ձեւ, ձեւոյ, ձեւով · պիչիմ ·
դի, դիոյ, դիով · լէշ ·
ձի, ձիոյ, ձիով · աթ ·
բու, բուոյ, բուով · պայղուշ ·
քաղցու, քաղցուոյ, քաղցուով · շիրա ·
սափոր, սափորոյ, սափորով · տէսթի ·
ջրհոր, ջրհորոյ, ջրհորով · սու գույուսու ·

Ոմանք փոփոխեն զձայնաւոր տառս իւրեանց։

Անդեայ, անդեոյ, անդեով · չայըր օթլուղու ·
սէր, սիրոյ, սիրով · մուհապպէթ ·
էշ, իշոյ, իշով · էշէկ ·
ձէթ, ձիթոյ, ձիթով · զէյթ եաղը ·
անիւ, անուոյ, անուով · թէքէրլէկ ·
թիւ, թուոյ, թուով · սայը ·
պատիւ, պատուոյ, պատուով · իզզէթ ·
յոյս, յուսոյ, յուսով · ումուտ ·
բոյն, բունոյ, բունով · եուվայ ·
ունդ, ընդոյ, ընդով · թօխում · նօհուտ, բաքլայ, ֆասուլեայ դանէլի օլան շէյլէր։

Ոմանք կորուսանեն զձայնաւոր տառս իւրեանց։

Աստուած, աստուծոյ, ատուծով · Ալլահ ·
գովեալ, գովելոյ, գովելով · Մէթհ օլունմուշ ·
զարդարեալ, զարդարելոյ, զարդարելով · դօնանմըշ ·
ուղեղ, ուղղոյ, ուղղով · պէյին ·
աստուածային, ա͞ծայնոյ, ա͞ծայնով · Ալլահա մախսուս ·
անկողին, անկողնոյ, կողնով · դէօշէկ ·
անասուն, անասնոյ, անասնով · հայվան ·
բլուր, բլրոյ, բլրով · պայըր · թէփէ ·
թուզ, թզոյ, թզով · ինճիր ·
հուր, հրոյ, հրով · կմ հուրբ · աթէշ ·
ջուր, ջրոյ, ջրով, կամ ջուրբ ·
ջուրք, ջրոց, կամ ջուրց · սու ։

Անեզական։

Անուրջք, անրջոց, անրջովք · հէյալ ·
դժոխք, դժոխոց, դժոխովք · ճէհէննէմ ·
կուռք, կռոց, կռովք · փութ ·
պահք, պահոց, պահովք · փէհրիզ ·
տիք, տիոց, տիովք · եաշ ։

Ընդ այսու օրինակաւ հոլովին և մասնական անուանքն՝ Իւրաքանչիւր · երկաքանչիւր · այլ · միւս · և մի, որ է մասնական և Թուական, ունելով սոցա զխոտորումն ՚ի հոլովս ինչ · որպէս է տեսանել ՚ի տեղիս իւրեանց ։

## ՕՐԻՆԱԿ · Դ ·

### Եզական ։

| | | |
|---|---|---|
| Ուղղական · | Եկեղեցի · | Քիլիսէ · |
| Սեռական · | եկեղեցւոյ · | քիլիսէնին · |
| Գործիական · | եկեղեցեաւ · | քիլիսէ իլէ · |
| Պարառական · | զեկեղեցեաւ · | քիլիսէնին էթրաֆլարընտա · |
| Հայցական · | զեկեղեցի · | քիլիսէյի · |
| Պատմական · | զեկեղեցւոյ · | քիլիսէ իչի-ն · |
| Բացառական · | յեկեղեցւոյ · | քիլիսէտէն · |
| Տրական · | յեկեղեցի · | քիլիսէյէ · |
| Ներգոյական · | յեկեղեցւոջ · | քիլիսէտէ · |
| Կոչական · | ով եկեղեցի · | էյ քիլիսէ ։ |

### Յոգնական ։

| | | |
|---|---|---|
| Ուղղական · | Եկեղեցիք · | Քիլիսէլէր · |
| Սեռական · | եկեղեցեաց · | քիլիսէլէրին · |
| Գործիական · | եկեղեցեօք · | քիլիսէլէր իլէ · |
| Պարառական · | զեկեղեցեօք · | քիլիսէլէրին էթրաֆընտա · |
| Հայցական · | զեկեղեցիս · | քիլիսէլէրի · |
| Պատմական · | զեկեղեցեաց · | քիլիսէլէր իչի-ն · |
| Բացառական · | յեկեղեցեաց · | քիլիսէլէրտէն · |
| Տրական · | յեկեղեցիս · | քիլիսէլէրէ · |
| Ներգոյական · | յեկեղեցիս · | քիլիսէլէրտէ · |
| Կոչական · | ով եկեղեցիք · | էյ քիլիսէլէր ։ |

Ընդ այսու օրինակաւ հոլովին ամենայն բազմավանկ անուանք, որք ի վերջաւորին · իսկ միավանկքն՝ ծի · լի · մի · ձի, եւ · հոլովին ըստ երրորդ օրինակին որպէս Գետ, գետոյ · Մ ։

7/XI--1922
ԱՅԱՍ Ի ՅԱՆԻ ԱՆ...
1б498

| | | | |
|---|---|---|---|
| Այգի, | այգւոյ, | այգեաւ . | պաղ . |
| արծաթի, | արծաթւոյ, | արծաթեաւ . | կիւմիւշտէն . |
| արծուի, | արծւոյ, | արծուեաւ . | գարթալ . |
| ասուի, | ասուոյ, | ասուեաւ . | էիւն . |
| բարի, | բարւոյ, | բարեաւ . | էյի . |
| արմաւենի, | ւենւոյ, | ւենեաւ . | խուրմա աղաճը . |
| սիրելի, | սիրելւոյ, | սիրելեաւ . | սէվկիլի . |
| գոլորշի, | գոլորշւոյ, | գոլորշեաւ . | պուղու . |
| ծիրանի, | ծիրանւոյ, | ծիրանեաւ . | կըրմըզը ...... |
| գօտի, | գօտւոյ, | գօտեաւ . | գուշագ . |
| հոգի, | հոգւոյ, | հոգւով . | ճան . |
| որդի, | որդւոյ, | որդւով . | էվլատ . |

Բազումք յանուանց որք ըստ այսու օրինակաւ հոլովին, ՚ի գործիական հոլովի վերջանան՝ -ով . -ովք . ևայլն .

| | | | | |
|---|---|---|---|---|
| Աղաւնի, | նեաւ, | և նւով . | նւովք . | գէօվէրճին . |
| ասղանի, | նեաւ, | և նւով . | նւովք . | իյնէ . |
| ծերունի, | նեաւ, | և նւով . | նւովք . | գօճաման . |
| կարասի, | սեաւ, | և սւով . | սւովք . | էշեալէր . |
| մնոտի, | տեաւ, | և տւով . | տւովք . | պօշ, նաֆիլէ : |

Ոմանց ևս եզակի սեռականն՝ մանաւանդ յորժամ վարի իբրև վերջահոլով տրական, վերջանայ՝ -ոջ . վա՛յ և բացառականն լինի՝ -ոջէ . ևայլն . Տեղի, տեղւոջ, ՚ի տեղւոջէ . Տարի, տարւոջ, ՚ի տարւոջէ . ևայլն :

Ըստ այսորիկ և ներգոյականն լինի՝ ՚ի տեղւոջ . ՚ի տարւոջ . յեկեղեցւոջ . ՚ի Թզենւոջ . ՚ի բարւոջ . ևայլն .

Ոմանց ևս եզակի սեռականն և գործիականն առանց -ի- դնի ուրեք . որպէս՝ Եկեղեցոյ, եկեղեցով . աղաւնոյ, աղաւնով . այգոյ, այգով . գինոյ, գինով . բարոյ, բարով . ևայլն :

Անեզական :

Աւետիք, աւետեաց, աւետեօք . մուժտէ .

երախտիք, երախտեաց, երախտեօք · էյլիք ·
լաելիք, լաելեաց, լաելեօք · գուշլուգ ·
ընթրիք, ընթրեաց, ընթրեօք · աքշամ եէմէյի ·
կարծիք, կարծեաց, կարծեօք · Թահմին ·

Այսպէս հոլովին եւ հարցական անունս՝ Քանի՞ · զր ·

Եզ. Քանի՞, քանո՞յ, կամ քանւո՞յ · քանիւ · 'ի քանոյ ·
Յոգ. Քանի՞ք, քանեա՞ց · քանեօ՞ք · 'ի քանի՞ս · եւն ·

Նաեւ ածական անուանք ինչ՝ որք 'ի ցուցական դերանուանցս՝ Այս, այդ, այն · սոյն, դոյն, նոյն · եւ 'ի բառէս՝ Քան, ձեւացեալ են բարդութբ · որպիսի են սոքին՝ Այսքան, այդքան, այնքան · սոյնքան, դոյնքան, նոյնքան · հոլովին ընդ այսու օրինակաւ, ունելով զխոտորումն 'ի հոլովս ինչ · զր ·

Եզ. Այսքան, այսքանոյ · այսքանով, կամ այսքանեաւ ·
Յոգ. Այսքանիք, կամ այսքանք, քանեաց · քանեօք · եւն ·

Նոյն այսպէս են եւ ածականք՝ որք բարդեալք են 'ի դերանուանց սոսա եւ յանուանէս՝ Պէս · որպիսի են բառքս՝ Այսպիսի · այդպիսի · սոյնպիսի · դոյնպիսի · նոյնպիսի · զր ·

Եզ. Այսպիսի, այսպիսւոյ · այսպիսեաւ · այսպիսում ·
Յոգ. Այսպիսիք, այսպիսեաց · այսպիսեօք · եւ այլն ·

Իսկ ածականք որք կազմեալք են 'ի սոցունց՝ եւ 'ի բառէս Չափ · որպիսի են սոքին՝ Այսչափ, այդչափ, այնչափ · սոյնչափ, դոյնչափ, նոյնչափ · Նախդրիւ միայն հոլովին ·

Այս ամ ածականք՝ որք 'ի ցուցական դերանուանց սոսա, եւ 'ի բառիցս՝ Քան, պէս, չափ, ձեւացեալ են բարդութբ, կոչին եւս Աերբերական անուն ։

## ՕՐԻՆԱԿ · Ե ·

| | Եզական · | | Յոգնական ։ | |
|---|---|---|---|---|
| Ու · | Գանձ · | խազինէ · | Գանձք · | խազինէլէր · |
| Ս · | գանձու · | խազինէնին · | գանձուց · | խազինէլէրին · |

Գ. գանձու · խազինէիլէ · գանձուք · խազինէլէր իլէ ·
Պ. զգանձու · խազինէնին էթ- զգանձուք · խազինէլէրին էթ-
էթրաֆընտայ · րաֆլարընտայ ·
Հ. զգանձ · խազինէյի · զգանձս · խազինէլէրի ·
Պ. զգանձէ · խազինէ իչի՛ն զգանձուց · խազինէլէր իչի՛ն ·
Բ. 'ի գանձէ · խազինէտէն · 'ի գանձուց · խազինէլէրտէն ·
Տ. 'ի գանձ · խազինէյէ · 'ի գանձս · խազինէլէրէ ·
Ն. 'ի գանձու · խազինէտէ · 'ի գանձս · խազինէլէրտէ ·
Կ. ով գանձ · էյ խազինէ · ով գանձք · էյ խազինէլէր ·

Ընդ այսու օրինակաւ հոլովին և այլ բազում անուանք · յորոց ոմանք անփոփոխ և անկորուստ պահեն զձայնաւոր տառս իւրեանց · և ոմանք 'ի հոլովս լի՛նչ գը- նին ևս տարբեր կերպիւ · Գօ ·

Ագռաւ, ագռաւու, կամ ագռաւոյ · գարղա ·
այգ, այգու, կամ այգւոյ · ուէ · սապահ ·
առիւծ, առիւծու, կամ առիւծոյ · ասլան ·
զարդ, զարդու, զարդուէ · զինէթ ·
զօր, զօրու, զօրուէ · զօրայ, զօրաք · ասկէր ·
ժամ, ժամու, ժամաւ · սահաթ ·
նախանձ, նախանձու, նախանձուէ · հասէտ ·
նաւ, նաւու, նաւուց, նմաց · կէմի ·
սով, սովու, սովով · գըթլըգ ·
քաղց, քաղցու, քաղցով · աճլըգ ·

Ոմանք փոփոխեն զձայնաւոր տառս իւրեանց ·

Աղուէս, աղուեսու, կամ աղուիսու · թիլքի ·
դէն, դինու, կամ դինով · սիլահ ·
ինձ, ընձու · գաբլան ·
չէն, չինու · չէնլիք ·
վրէժ, վրիժու · էօճ ·
ցուլ, ցլու, կամ ցլոյ · պուղայ ·
քէն, քինու · խարէզ ·

Ընէզական :

Բարք, բարուց, բարուք · թապիէթ ·
պարտք, պարտուց, պարտուք · պօրճ ·
վարք, վարուց, վարուք · ամէլ · ադէթ ·
բովք, բովուց, բովոց, բովաց · գալը՛ը օճաղը ·
եւ նմանէն :

Ընդ այսու օրինակաւ հոլովին և ածականք ոմանք, որք և՚ի հոլովս ինչ տարբերին · զ̃ :

Ծանր, ծանու · ծանունք, ծանունց, ծանունք · աղըր ·
ծաղր, ծաղու · ծաղք, ծաղուց, ծաղուք · մասխարա ·
մանր, մանու · մանունք, մանունց, նուամբք · ուֆագ ·
բարձր, բարձու, բարձու կամ բարձամբ ·
բարձունք, բարձանց, բարձամբք · եուքսէք ·
Թանձր, ձու · Թանձունք, ձուց, ձուք · գալըն ·
քաղցր, ցու · քաղցունք, ցունց, ցուք · թաթլըը ·
փոքր, փոքու, փոքումբ, կամ փոքու ·
փոքունք, փոքունց, փոքումբք · քիւչիւք ·
յոքունք, յոքունց, յոքումբք · չօգլար ·

## ՕՐԻՆԱԿ · Զ :

Ուղղական : Յոքնական :

Ո · Հիմն · Թէմէլ · Հիմունք · Թէմէլլէր ·
Ս · Հիման · Թէմէլին · Հիմանց · Թէմէլլէրին ·
Գ · Հիմամբ · Թէմէլ իլէ · Հիմամբք · Թէմէլլէր իլէ ·
Ա · զՀիմամբ · Թէմէլին էր" · զՀիմամբք · Թէմէլլէրին էր"
Հ · զՀիմն · Թէմէլի · զՀիմունս · Թէմէլլէրի ·
Պ · զՀիմանէ · Թէմէլ իչիւն · զՀիմանց · Թէմէլլէր իչիւն ·
Բ · ՚ի Հիմանէ · Թէմէլտէն · ՚ի Հիմանց · Թէմէլլէրտէն ·
Տ · ՚ի Հիմն · Թէմէլէ · ՚ի Հիմունս · Թէմէլլէրէ ·
Ն · ՚ի Հիման · Թէմէլտէ · ՚ի Հիմունս · Թէմէլլէրտէ ·
Կ · ով Հիմն · էյ Թէմէլ · ով Հիմունք · էյ Թէմէլլէր ·

Ընդ այսու օրինակաւ հոլովին և այլ բազում անուանք • յորոց ոմանք անփոփոխ և անկորուստ պահեն ձայնաւոր տառս իւրեանց • Զ •

Աղեղն, աղեղան • աղեղունք, աղեղանց • [illegible] •
ատամն, ատաման • ատամունք, ատամանց • [illegible] •
գագաթն, թան • գագաթունք, թանց • [illegible] •
երկամն, երկաման • երկամունք, կամանց • [illegible] •
Թիկն, թիկան • թիկունք, թիկանց • [illegible] •
կայծակն, ծական • ծակունք, կանց • [illegible] •
հիւսն, հիւսան • հիւսունք, հիւսանց • [illegible] •
որմն, որման • որմունք, որմանց • [illegible] •
սերմն, սերման • սերմանք, սերմանց • [illegible] •
անուն, անուան • անուանք, անուանց • [illegible] •

Ոմանք փոփոխեն ձայնաւոր տառս իւրեանց •

Ջայլամն, ջայլեման • ջայլեմունք, մանց • [illegible]
եղէգն, եղեգան • եղեգունք, գանց • [illegible] •
ոլոռն, ոլեռան • ոլեռունք, ռանց • [illegible] •
պոյտն, պուտան • պուտունք, տանց • [illegible] •
պաշտօն, պաշտաման • պաշտամունք, մանց • [illegible] •
փայծաղն, փայծեղան • փայծեղունք, ղանց • [illegible] •

Ոմանք կորուսանեն ձայնաւոր տառս իւրեանց •

Ասեղն, ասղան • ասղունք, ասղանց • [illegible] •
բուռն, բռան • բռունք, բռանց • [illegible] •
ձուկն, ձկան • ձկունք, ձկանց • [illegible] •
նուռն, նռան • նռունք, նռանց • [illegible] •
շուրթն, շրթան • շրթունք, շրթանց • [illegible] •
սկիզբն, սկզբան • սկզբունք, սկզբանց • [illegible] •
տուն, տան • տունք, տանց • [illegible] •
խոստումն, խոստման • խոստմունք, մանց • [illegible] •
դուռն, դրան • դրունք, դրանց • [illegible] •
քիրտն, քրտան • քրտունք, քրտանց • [illegible] •

Ընդ այսու օրինակաւ հոլովին և այլ ևս անուանք, և մե՛ծ ածականք, մասնկամբքս՝ ԲԻՒՆ. ՍՈՒԶ. ՍԱԹ. որոց ոմանք փոփոխեն զձայնաւոր տառս ներքեանց. և ոմանք կորուսանեն, և 'ի հոլովս ինչ տարբերին, և նմանին այլոց հոլովմանց. Պ.

Նեղութի՛, թե՛, թբ՛. նեղութի՛ք, թե՛ց, թբ՛ք. ՏԱՐԼԸՔ.
արդարութի՛, թե՛, թբ՛. արդարութի՛ք, թե՛ց, թբ՛ք. ԱՏԱԼԷԹ
հնչիւն, ման, մամբ. հնչմունք, մանց, մամբք. ՍԷՍ. ՍԷՍԼԷՐ
կայթումն, կայթման, կայթմամբ.
կայթմունք, մանց, մամբք. ՀՕՊԼԱՅ ՉԷՔՄԷՔ.
գալուստ, գալստեան, գալստենէ, ԿԷԼՄԷՔ.
փախուստ, խստեան, տենէ. կամ փախստի, տիւ. ԳԱՉՄԱ.
աղջիկ, աղջկան. աղջկունք, աղջկանց. ԳԸԶ.
մանուկ, մանկան. մանկունք, մանկանց. ՕՂԼԱՆ.
ծաղիկ, ծաղկան. ծաղկունք, կանց.
կամ, ծաղկի, կաւ. ծաղիկք, կաց. ՉԻՉԷՔ.
անկիւն, անկեան, անկեանէ, կամ անկիւնէ.
անկիւնք, անկեանց, անկեամբք. ՔԷՕՇԷ.
արիւն, արեան, եամբ, ենէ. արիւնք, արեանց. ԳԱՆ.
կորիւն, կորեան, կորեամբ, 'ի կորիւնէ. ԷՆԻԿ.
ձիւն, ձեան, ձեամբ, 'ի ձեանէ. ԳԱՐ.
ստին, ստեան, ստեամբ, 'ի ստենէ. ԴԻԴ.
տեսիլ, տեսլեան, տեսլեամբ, լենէ.
տեսիլք, տեսլեանց. ԿԷՕՐԻՒՆԻՒՇ. ՏԻՒՇ.
ժողովուրդ, ժողովրդեան, դեամբ, դենէ.
կամ ժողովրդի, դիւ, կամ դով, դէ. ԺԷՄԱՀԱԹ.
ժողովուրդք, ժողովրդոց, դովք. ՀԱԼԳ.
ծնունդ, ծննդեան, դեամբ, դենէ.
ծնունդք, ծննդոց, դովք. ԴՕՂՈՒՇ. ՏՕՅ.
վաղիւ, վաղուեան, կամ վաղուի, 'ի վաղուէ. ԷԱՐԻՆ.
տիւ, տուընջեան, տուընջեամբ, 'ի տուընջենէ,
կամ 'ի տուէ. ՆԷՐԳ" 'ի տուընջենի. տիւք. ԿԻՒՆՏԻՒԶ.

իրաւունք , իրաւանց , իրաւամբք ․ հաք ․

## ՕՐԻՆԱԿ ․ Լ ․

Եզական ․ Յոգնական ․

Ու ․ Գառն ․ Գուզու ․ Գառինք ․ Գուզուլար ․
Ս ․ գառին ․ գուզունուն ․ գառանց ․ գուզուլարըն ․
Գ ․ գառամբ ․ գուզու իլէ ․ գառամբք ․ գուզուլարիլէ ․
Պ ․ զգառամբ ․ գուզունուն ․ զգառամբք ․ գուզուլարըն
էթրաֆընտա ․ էթրաֆլարընտա ․
Հ ․ զգառն ․ գուզույու ․ զգառինս ․ գուզուլարը ․
Պ ․ զգառանէ ․ գուզու էչէն ․ զգառանց ․ գուզուլար էչէն
Բ ․ ՚ի գառանէ ․ գուզուտան ․ ՚ի գառանց ․ գուզուլարտան ․
Տ ․ ՚ի գառն ․ գուզույա ․ ՚ի գառինս ․ գուզուլարա ․
Ն ․ ՚ի գառին ․ գուզուտա ․ ՚ի գառինս ․ գուզուլարտայ ․
Կ ․ ով գառն ․ էյ գուզու ․ ով գառինք ․ էյ գուզուլար ․

Ըստ այսու օրինակիս հոլովին և յետագայ անուանքս, անկորուստ և անփոփոխ պահելով զձայնաւոր տառս իւրեանց ․ Զ՞ ։

Բեռն , բեռին , բեռամբ , բեռանէ ․ եիւք ․
Եզն , եզին , եզամբ , եզանէ ․ էօքիւզ ․
Կաթն , կաթին , կաթամբ , կաթանէ ․ սիւտ ․
Խաշն , խաշին , խաշամբ , խաշանէ ․ գօյունլար ․
Ագն , ագին , ագամբ , ագանէ ․ ուճ , Թիլէն ․
Անձն , անձին , անձամբ , անձանէ ․ կէօվտէ ․
Դաշն , դաշին , դաշամբ , դաշանէ ․ գավիլ ․
Սառն , սառին , սառամբ , սառանէ ․ պուզ ․
Ափն , ափին , ափամբ , ափանէ ․ գըյը ․
Հարսն , հարսին , հարսամբ , հարսանէ ․ կէլին ․
Մատն , մատին , մատամբ , մատանէ ․ պարմագ ․
Լեառն , լերին , լերամբ , լեռնէ ․ լերինք ․ տաղ ․
Ձեռն , ձեռին , ռամբ , ռանէ ․ ձեռք , ռաց , ռօք ․ էլ ․

# ՕՐԻՆԱԿ · Բ։

Եզական ։ Յոգնական ։

Ո · Աղբիւր · Չէշմէ · Աղբիւրք , աղբերք ·
Ս · աղբեր · չէշմէնին · աղբերաց , աղբերց ·
Գ · աղբերբ , կամ րաւ · չէշմէիլէ · աղբերօք , աղբերբք ·
Պ · զաղբերբ , կամ րաւ · չէշմէ զաղբերօք , զաղբերբք ·
նէն էթրաֆընտա ·
Հ · զաղբիւր · չէշմէյի · զաղբիւրս , զաղբերս ·
Պ · զաղբերէ · չէշմէ իչին · զաղբերաց , զաղբերց ·
Բ · յաղբերէ · չէշմէտէն · յաղբերաց , յաղբերց ·
Տ · յաղբիւր · չէշմէյէ · յաղբիւրս , յաղբերս ·
Ն ։ յաղբեր · չէշմէտէ · յաղբիւրս , յաղբերս ·
Կ · ով աղբիւր · էյ չէշմէ · ով աղբիւրք , ով աղբերք ·

Ընդ այսու օրինակաւ հոլովին սակաւ անուանք · ո-րոց ոմանք անփոփոխ և անկորուստ պահեն զձայնաւոր տառս իւրեանց։

Ազդր , ազդեր կամ դերի , դերբ ,
դերէ · ազդերք , երաց , երօք · պուտ · խալչայ ·
եզր , եզեր , եզերբ կամ եզերաւ ,
եզերէ · եզերք , երաց , երօք · քէնար · ուճ ·
կայսր , կայսեր , կայսերաւ , կայսերէ ·
կայսերք , կայսերաց , կայսերօք · հիւնքեար ·
ոսկր , ոսկեր , ոսկերաւ , ոսկերէ ·
ոսկերք , ոսկերաց , ոսկերօք · քէմիք ·
համր , համեր , համերէ · համերց · տիլսիզ ·
ուստր , ուստեր , րաւ , տերէ · տերաց · օղլան ·
տագր , տագեր , գերբ , գերէ · գերց · գայն ·
մախր , մախեր , մախերբ · մախերաց · չէրփայ ·
տարր , տարեր , տարերբ կամ տարերաւ ,
'ի տարրէ · տարերց կամ տարերաց , րօք · էօնսուր ·

Ոմանք փոփոխեն կամ կորուսանեն զձայնաւոր տառս իւրեանց .

Ալիւր , ալեր , ալերաւ , ալերէ . ալերաց . ուն .
դուստր , դստեր , դստերբ կամ դստերաւ ,
դստերէ . դստերաց , դստերօք . գըզ .
եղջիւր , եղջեր , եղջերբ կամ եղջերաւ ,
եղջերէ . ջերաց , ջերբք կմ ջերօք . պօյնուզ .
ծնօտր , ծնօտեր , ծնօտերբ , ծնօտերաւ . ճէնէլէրի ,

Ընդ այսու օրինակաւ հոլովին և այլ քանի մի անուանք .

Աստղ , աստեղ , աստեղբ , աստեղէ .
աստեղաց կամ աստեղց , տեղօք . եըլտըզ .
անգղ , անգեղ . անգեղաց կամ անգեղց . աք պապա .
արկղ , արկեղ , արկեղբ . արկեղաց . սանտըգ .
ետղ , ետեղ , ետեղբ . եէր .
կոճղ , կոճեղ , կոճեղբ կամ կոճեղաւ . քիւթիւկ .
ոստղ , ոստեղ , ոստեղբ . [illegible] .

Առանձնական հոլովմունք .

Բայց 'ի նախակարգեալ ութից օրինակաց , որք կոչին հասարակ հոլովմունք , ընդ որովք հոլովին բազում անուանք , են և վեց օրինակք , որք կոչին Առանձնական հոլովմունք . ըստ որոց հոլովեալ անուանք՝ 'ի հոլովս ինչ համաձայնեին հասարակ հոլովմանց , և 'ի հոլովս ինչ տարբերին .

Ընդ սոքօք հոլովին ինն պարզ անուանք , որ են՝ Տէր . այր . մայր . եղբայր . քոյր . կին . օր . գիւղ կամ գեօղ . և բարդեալքն սոցին . որպէս տեսանի յառաջիկայդ .

## ՕՐԻՆԱԿ · Ա.

Տէր · Աղա · սահապ։

| | Եզական. | Յոգնական. |
|---|---|---|
| Ուղ · | Տէր · | Տեարք · |
| Սեռ · | տեառն · | տեարց, կամ տերանց · |
| Գոր · | տերամբ · | տերամբք · |
| Պատ · | զտերամբ · | զտերամբք · |
| Հայ · | զտէր · | զտեարս · |
| Պաշ · | զտեառնէ · | զտեարց, կամ զտերանց · |
| Բաց · | 'ի տեառնէ · | 'ի տեարց, կամ 'ի տերանց · |
| Տրա · | 'ի տէր, կամ ցտէր · | 'ի տեարս, կամ ց տեարս · |
| Ներ · | 'ի տեառն · | 'ի տեարս · |
| Կոչ · | ով տէր · | ով տեարք · |

Ըստ այսմ հոլովին և բարդեալք սորա.

Տանուտէր, տեառն, տերամբ. էվսահապը ·
պարտատէր, տեառն, տերամբ. պօրճլու ·
կոչնատէր, տեառն, տերամբ. զիաֆէթ էտէն ·
ամենատէր, տեառն, տերամբ. ճիհանըն սահիպի ·

Այնպէս հոլովի և անունս Այր, և բարդեալք սորա.

Այր, առն, արամբ. էր · քօճա ·
քեռայր, առն, արամբ. էնիշտէ ·

## ՕՐԻՆԱԿ · Բ.

Հայր · Պապա · պէտէր ·

| | Եզական. | Յոգնական. |
|---|---|---|
| Ուղ · | Հայր · | Հարք · |
| Սեռ · | Հօր · | Հարց, կամ հարանց · |
| Գոր · | հարբ · | հարբք · |
| Պատ · | զհարբ · | զհարբք · |

Հայց. զհայր. — զհարս.
Պատմ. զհօրէ. — զհարց, կամ զհարանց.
Բաց. 'ի հօրէ. — 'ի հարց, կամ 'ի հարանց.
Տրա. ց հայր, առ հայր. — ց հարս, կամ առ հարս.
Ներ. 'ի հօր. — 'ի հարս.
Կոչ. ով հայր. — ով հարք.

Ըստ այսմ հոլովին և բաղդեալք սորա։

Կնքահայր, կնքահօր, կնքահարբ. սաղտըճ.
Նախահայր, նախահօր, նախահարբ. ճէտտ.
Վանահայր, վանահօր, վանահարբ. ռուհպան։

Այնպէս հոլովին և անուանքս Մայր և Եղբայր, և բաղդեալք սոցին։

Մայր, մօր, մարբ. մարք, մարց, մարբք. անա.
միամայր, միամօր, միամարբ. պիր էվլատ անասը.
եղբայր, եղբօր, եղբարբ. գարտաշ.
կնքամայր, կնքամօր, կնքամարբ. սաղտըճ գարըսը.
հօրեղբայր, հօրեղբօր, հօրեղբարբ. ամուճա.

## ՕՐԻՆԱԿ Գ.

Քոյր. Գըզգարտաշ։

| | Եզական։ | Յոգնական։ |
|---|---|---|
| Ուղղական. | Քոյր. | Քորք. |
| Սեռական. | քեռ. | քերց. |
| Գործիական. | քերբ. | քերբք. |
| Պարառական. | զքերբ. | զքերբք. |
| Հայցական. | զքոյր. | զքորս. |
| Պատմական. | զքեռէ. | զքերց. |
| Բացառական. | 'ի քեռէ. | 'ի քերց. |
| Տրական. | 'ի քոյր. | 'ի քորս, կամ ց քորս. |
| Ներգոյական. | 'ի քեռ. | 'ի քորս. |
| Կոչական. | ով քոյր. | ով քորք։ |

Ըստ այսմ հոլովին և բարդեալք սորա ·

Հօրաքոյր , հօրաքեռ , հօրաքերբ · հալա ·
մօրաքոյր , մօրաքեռ , մօրաքերբ · թէյզէ ·

## ՕՐԻՆԱԿ · Դ ·

Կին · Գարը ·

| | Եզական · | Յոգնական · |
|---|---|---|
| Ուղղական · | Կին · | Կանայք · |
| Սեռական · | կնոջ · | կանանց · |
| Գործիական · | կնաւ , կամ կանամբ · | կանամբք · |
| Պարառական · | զկնաւ , կամ զկանամբ · | զկանամբք · |
| Հայցական · | զկին · | զկանայս · |
| Պատմական · | զկնոջէ · | զկանանց · |
| Բացառական · | ՚ի կնոջէ · | ՚ի կանանց · |
| Տրական · | ՚ի կին , ց կին · | ՚ի կանայս · |
| Ներգոյական · | ՚ի կնոջ · | ՚ի կանայս · |
| Կոչական · | ով կին · | ով կանայք · |

Ըստ այսմ հոլովին և բարդեալք սորա ·

Տիկին , տիկնոջ , տիկնաւ կամ տիկնամբ · խանըմ ·
առնակին , առնակնոջ , առնակնաւ · էվլի գարը ·
միակին , միակնոջ , միակնաւ · պիր գարըսը օլան էր ·

## ՕՐԻՆԱԿ · Ե ·

Գիւղ · Քէօյ ·

| | Եզական · | Յոգնական · |
|---|---|---|
| Ուղղական · | Գիւղ , կամ գեղ · | Գիւղք · |
| Սեռական · | գեղջ · | գիւղից · |
| Գործիական · | գիւղիւ · | գիւղօք · |
| Պարառական · | զգիւղիւ · | զգիւղօք · |
| Հայցական · | զգիւղ · | զգիւղս · |

| | | |
|---|---|---|
| Պատմական . | զգեղջէ . | զգիւղից . |
| Բացառական . | ՚ի գեղջէ . | ՚ի գիւղից . |
| Տրական . | ՚ի գիւղ . | ՚ի գիւղս . |
| Ներգոյական . | ՚ի գեղջ . | ՚ի գիւղս . |
| Կոչական . | ով գիւղ . | ով գիւղք : |

Ըստ այսմ հոլովին և բարդեալք սորա ։

Ձորագիւղ , գեղջ , գիւղիւ . տէրէտէ օլան քէօյ .
Նորագիւղ , գեղջ , գիւղիւ . եէնի քէօյ .
Քաղաքագիւղ , գեղջ , գիւղիւ . գասապա .
Իսկ մինչ գրեսցի Գեղ , հոլովի յայնժամ ըստ առաջին օրինակին . Գեղ , գեղի , գեղիւ . գեղք , գեղից , գեղիւք .

## ՕՐԻՆԱԿ . Ը :

Օր . Կիւն .

| | Եզական , | Յոգնական : |
|---|---|---|
| Ուղղական . | Օր . | Աւուրք . |
| Սեռական . | աւուր . | աւուրց . |
| Գործիական . | աւուրբ . | աւուրբք . |
| Պարառական . | զաւուրբ . | զաւուրբք . |
| Հայցական . | զօր . | զաւուրս . |
| Պատմական . | զօրէ . | զաւուրց . |
| Բացառական . | յօրէ . | յաւուրց . |
| Տրական . | յօր , ցօր . | յաւուրս , ցաւուրս . |
| Ներգոյական . | յաւուր . | յաւուրս . |
| Կոչական . | ով օր . | ով աւուրք : |

Ըստ այսմ հոլովին և բարդեալք սորա ։

Երկայնօր , երկայնաւուր , երկայնաւուրբ . ուզուն կիւն .
Կէսօր , կիսաւուր , կիսաւուրբ . } էօյլէն :
Միջօր , միջաւուր , միջաւուրբ . }

| ՕՐԻՆԱԿ Ա. | | ՕՐԻՆԱԿ Բ. |
|---|---|---|
| Ուղղական . | Տիգրան . | Հեղինէ . |
| Սեռական . | տիգրանայ . | հեղինեայ . |
| Գործիական . | տիգրանաւ . | հեղինեաւ . |
| Պարառական . | զ տիգրանաւ . | զ հեղինեաւ . |
| Հայցական . | զ տիգրան . | զ հեղինէ . |
| Պատմական . | զ տիգրանէ . | զ հեղինեայ . |
| Բացառական . | 'ի տիգրանէ . | 'ի հեղինեայ . |
| Տրական . | առ տիգրան . | առ հեղինէ . |
| Ներգոյական . | 'ի տիգրան . | 'ի հեղինէ . |
| Կոչական . | ով տիգրան . | ով հեղինէ . |

Ըստ առաջնոյն հոլովին և այլ յատուկ անուանք, որոց ոմանք միայն անփոփոխ.

Անակ , անակայ . անտիոք , անտիոքայ .
արամ , արամայ . մաժակ , մաժակայ .
վահրամ , վահրամայ . երասխ , երասխայ . ևն.

Ոմանք փոփոխեն կամ կորուսանեն.

Անահիտ , անահտայ . հմայեակ , հմայեկայ .
բառնաբաս , բառնաբայ . դիոս , դիայ .
արիստակէս , արիստակիսայ . գագիկ , գագկայ .
պարոյր , պարուրայ . մծբին , մծբնայ . ևն.

Ըստ երկրորդին հոլովին.

Հռիփսիմէ , հռիփսիմեայ . վահէ , վահեայ .
անդրոնիկոս , անդրոնիկեայ . հեղի , հեղեայ .
տիբերիոս , տիբերեայ . օգոստոս , օգոստեայ .
գայիանէ , գայիանեայ . եդեսիա , եդեսեայ :

Բազումք 'ի յատուկ անուանց և ոչ ըստ միոյ երկուց օրինակաց հոլովին, այլ ըստ օրինակաց հասարակ հոլովմանց.

Օմանք ըստ առաջնոյն ։

Ագաթանգեղոս , Ագաթանգեղոսի , գեղոսիւ ։
Արտաշէս , Արտաշէսի կամ Արտաշիսի , Արտաշիսիւ ։
Մովսէս , Մովսէսի կամ Մովսիսի , Մովսիսիւ ։
Սարգիս , Սարգսի , Սարգսիւ ։

Օմանք ըստ երկրորդին ։

Մուշեղ , Մուշեղի , ղաւ ։ Հնդիկ , Հնդկի , կաւ ։
պարթեւք , պարթեւաց , թեւօք ։ վէրք , վրաց , վրօք ։

Օմանք ըստ երրորդին ։

Ծատուր , Ծատրոյ , տրով ։ Հեթում , Հեթմոյ , մով ։
Թաթուլ , Թաթլոյ , Թաթլով ։ Կարին , Կարնոյ , Կարնով ։

Օմանք ըստ չորրորդին ։

Անի , Անւոյ , Անւով ։ Ակոռի , Ակոռւոյ , Ակոռւով ։

Օմանք ըստ հինգերորդին ։

Արտազ , Արտազու , զու ։ Լիբանան , Լիբանանու , նու ։
Բաղհաղ , Բաղհաղու , ղու ։ Աբդիաս , Աբդիասու , սու ։

Օմանք ըստ վեցերորդին ։

Սողիկ , Սողկան , կամբ ։ Յուսիկ , Յուսկան , կամբ ։
Գողթն , Գողթան , թամբ ։ Վարդանանք , նանց , նամբք ։

Կան եւ յատուկ անուանք ինչ , որք կրկին օրինակաւ հոլովին ։

Աբրահամ , Աբրահամու , եւ Աբրահամայ ։
Անանիա , Անանիայ , եւ Անանիայի ։
Ռոստակէս , Ռոստակեայ , եւ կէսի , եւ Ռոստակիսի ։
Դամասկոս , Դամասկոսի , եւ Դամասկեայ ։
Դաւիթ , Դաւթի , եւ Դաւթայ ։
Եփեսոս , Եփեսոսի , եւ Եփեսեայ ։
Թովմաս , Թովմասու , եւ Թովմայի ։
Ղուկաս , Ղուկասու , եւ Ղուկայ ։
Յակոբ , Յակոբայ , եւ Յակոբու ։
Որոգինէս , Որոգինեայ , եւ Որոգինի ։

Յատուկ անուանք ոչ ունին զյոգնականս․ զի զուամէ և ասիցեն, իբրև զմիոջէ միայն ասին․

Այն և հասարակ անուանք ինչ, որք զերկուս նշանակութիս ունին․ ըստ միումն նշանակութեն ընդ այսու օրինակաւ հոլովին, և ըստ միւսումն՝ ընդ այլով․ Դ̅․

| | | | |
|---|---|---|---|
| Այր , | առն , | արամբ · | Էրքէկ ատէմ · |
| այր , | այրի , | այրիւ · | Մաղարա · |
| գայլ , | գայլոյ , | գայլով · | Գուրտ · |
| գայլ , | գայլի , | գայլիւ · | Թէլէքճէ · |
| գեղ , | գեղոյ , | գեղով · | Գիւզէլլիկ · |
| գեղ , | գեղի , | գեղիւ · | Քէօյ · |
| մայր , | մօր , | մարբ · | Անա · |
| մայր , | մայրի , | մայրիւ · | Չամ աղաճը · |
| որթ , | որթոյ , | որթով · | Ասմա · |
| որթ , | որթու , | որթու · | Դանա · |
| փող , | փողոյ , | փողով · | Զուռնա, կամ Աքչէ · |
| փող , | փողի , | փողիւ · | Պօղազ · |
| օդ , | օդոյ , | օդով · | Հավա · |
| օդ , | օդի , | օդիւ · | Այաք գապը · |

Այն ևս հասարակ անուանք որք ը̅ երկուց օրինակաց հոլովին, անփոփոխ ունելով զնշանակութիս իւրեանց․

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Նշան , | նշանի , | նաւ · | նաց , | նօք · | |
| նշան , | նշանի , | նիւ · | նից , | նիւք · | Նիշան · |
| զարդ , | զարդու , | դու · | դուց , | դուք · | |
| զարդ , | զարդի , | դիւ · | դից , | դիւք · | Զինէթ · |
| ակօս , | ակօսի , | սիւ · | սից , | սիւք · | |
| ակօս , | ակօսի , | սաւ · | սաց , | սօք · | Էվլէկ · |
| աղոխ , | աղոխի , | խիւ · | խից , | խիւք · | |
| աղոխ , | աղոխոյ , | խով · | խոց , | խովք · | Գօ[illegible] · |
| ծախ , | ծախու , | խու · | խուց , | խուք · | Բէլէժ · |
| ծախ , | ծախի , | խիւ · | խից , | խիւք · | Խարճ · |

Գտանին եւս բազում անուանք, որք ոչ անկանին ընդ թուելք հոլովմամբ. այլ նախդրիւ միայն հոլովին, կամ ընդ բայի շարակցին.

| | | | |
|---|---|---|---|
| Աղաղուն . | ղապուն . | Ամբոկ . | Բեթէլ . |
| գիձին . | Նէմլէ . | դատ . | չերահաբ . |
| գուրկ . | մահրում . | խիլատ . | Էրթդի . |
| խիտտ . | ալբ . | Ծունր . | պեղ . |
| ուրախ . | շաղ . | կոչ . | պաղեր . |
| պատիր . | ալտապըձը . | Նինջ . | ոսկի . |
| տրտում . | Դըլեր . | ուրաստ . | Ենեար . |

Ընդ այսմ են և բազում բարդեալ ածականք, որք միայն նախդրիւ հոլովին.

| | |
|---|---|
| Բոցածածանչ . | աբեղ կէդէ թապաղ . |
| դիւասարսուռ . | ձէն պահմ իլէ բիբրեադէն . |
| երաղապատում . | պէող նաթլ էադէձէ . |
| խաւարասնունդ . | գարանլըգտա պէսլէյէն . |
| լամպարափայլ . | մաշալա կէդէ թապլայան . |
| մահահրաւէր . | էօլէմէ պաղըր էադէն . |
| շնորհալից . | շէօհրէթլէ թապաղ . |
| ջրահեղձոյց . | սուդա պօղուլմուշ . |
| տաղարթափթիթ . | էադրաղ իլէ աչըլմըշ . |
| վսեմափառ . | թէք էհթիշամլը . |

—

## ՅՕԴՈՒԱԾ · Ե·

### Մասնական անուանք:

Անուանք ինչ որք մասնաւորեն զնշանակութի իրիք, կամ իբրև զատեալ նշանակեն զիրս, կոչին Մասնական անուն. և են սոքին՝ Մի. որ. իմն. ինչ. միւս. այլ. մի. իւրաքանչիւր. անցնիւր. Ըստ սոսա վերաբերին և կըրկնեալքս՝ Մի մի. ինչ ինչ. եւ.

## Ոմն · պիրիսի · Ոմանք · պազըլարը ·

| | Եզական · | Յոգնական · |
|---|---|---|
| Ուղղական · | Ոմն · | Ոմանք · |
| Սեռական · | ուրումն · | ոմանց · |
| Գործիական · | ոմամբ · | ոմամբք · |
| Պարառական · | զոմամբ · | զոմամբք · |
| Հայցական · | զոմն · | զոմանս · |
| Պատմական · | զումեմնէ · | զոմանց · |
| Բացառական · | յումեմնէ · | յոմանց · |
| Տրական · | ումեմն, ուրումն · | ցոմանս · |
| Ներգոյական · | յումեմն · | յոմանս · |

| | Եզական · | Յոգնական · |
|---|---|---|
| Ուղղական · | Ոք · | Ոմանք · |
| Սեռական · | ուրուք · | ոմանց · |
| Գործիական · | ոմամբ · | ոմամբք · |
| Պարառական · | զոմամբ · | զոմամբք · |
| Հայցական · | զոք · | զոմանս · |
| Պատմական · | զումեքէ · | զոմանց · |
| Բացառական · | յումեքէ · | յոմանց · |
| Տրական · | ումեք, կամ յոք · | յոմանս · |
| Ներգոյական · | յումեք · | յոմանս · |

## Իմն, ինչ · պէր շէյ ·

| | Եզական։ | Եզական · |
|---|---|---|
| Ո · | Իմն, ինչ · | Այլ իմն, կամ այլ ինչ · |
| Ս · | իրիք · | այլոյ իրիք, կամ այլ իրիք · |
| Գ · | իւիք · | այլով իւիք, կամ այլ իւիք · |
| Պ · | զիւիք · | զայլով իւիք, կամ զայլ իւիք · |
| Հ · | զիմն, զինչ · | զայլ իմն, կամ զայլ ինչ · |

Պ. զիմեքէ. զայլմէ իմեքէ, կամ զայլ իմեքէ.
Բ. յիմեքէ. յայլմէ իմեքէ, կամ յայլ իմեքէ.
Տ. իմիք, յինչ. այլում իմիք, կամ այլ իմիք.
Ն. յիմիք. յայլում իմիք, կամ յայլ իմիք.

Բառս Ինչ՝ իբրեւ մասնական անուն՝ նախդրիւ եւս ոչ հոլովի, այլ միշտ յետադաս դնի անուանց. իսկ իբրեւ հարցական անուն՝ նախդրիւ հոլովի. Ուղ, Ինչ. Հայ, զինչ. Տրա եւ Ներ, յինչ. եւ հայցականն սորա երբեմն իբրեւ ուղղական եւս վարի.

Միւս. օ գէրէ. Այլ. պաշգա.

| | Եզական. | Եզական. |
|---|---|---|
| Ուղ. | Միւս. | Այլ. |
| Սեռ. | միւսոյ. | այլոյ. |
| Գոր. | միւսով. | այլով. |
| Պար. | զմիւսով. | զայլով. |
| Հայ. | զմիւս. | զայլ. |
| Պատ. | զմիւսմէ, կամ զմիւսոյ. | զայլմէ, կամ զայլոյ. |
Գուսար Քսի ուրացին ՚ի մեծամեծաց քահանայցն ։
Օծ Գ ՚ի նոցանէ յառաջ մատուցանէր ·
Ոչ հեռի իսկ է ծնընդաբանութիւնն ուսեալ ՚ի մէնջ ·
Օտարք յառաքելոց անտի ոչ տեսի ·
Ընդունին ՚ի ժամանակագրաց նշանակեն ·
Ոչ էինչ զանգիտեցի յօգտակարացն չպատմել ·
Օ՜ յարարածոցս այնպէս պատուեաց ած որոց զքեզ ։
Ողորմեացէ զանձն իւր ՚ի կանանցածնաց · || այսինքն
ով ՚ի կանանցածնաց ։

Ողջու ՚ի մարդկանէ մեղաւ , և ոչ զղջացաւ ·
Ս տան որոյ գործոյ ՚ի նոցանէ քարկոծ առնէք զիս ։
Վրանի ՚ի մարդկանէ ըղձան գտանել զթողութիւն ·

Դ · Ես անուանք բաղում անդամ առնուն զներա-
կան · Ողբ · Գտցէ ՚ի վէր Քսի լերանց իջէ արկեալ զնա ։
Կարգէ զկադմոս՝ և զայլ երկնաւոր որդւոց ՚ի ձախմէ ։
Եր ՚ի տան ուրանին իշխանացն փարիսեցւոց ·
Եւ զայս հրաշակին զինի իւր կարգեաց ·
Յինչ և ձեռնարկիցէ ու վարժելոցն՝ կատարէ ։

Ե · Երբեմն առնուն զներգործական · Ողբ · Ջոնի ու ՚ի
նն անուն չարունէ · Ենչ ու եղև նմա քեզ ՚ի թագաւորս ։
Ենչինչ է յամենայն տեսա չար քան զկռուն ։
Ե՞ ՚ի նաս իւրումն ոչ ծառայեաց տեսի ։
Ողջ նմանիցի տեառն յորդիս սատուծոյ ։

Զ · Թուական անուանք ինչ երբեմն առնուն և զգոր-
ծիական հոլովն · Ողբ ։

Ընկեցական չորհան Գ են հաւատացեալք ·
Սոր ստանձնաւ երկրորդ էք եպիսկոպոսացդ ·
Ընկան առաքելքն առաքինիք ՚ի բով անդր թուով
երկոտասանք ։

# ՅՕԴՈՒԱԾ. Ե.

## Համաձայնութիւն ածական անուան ընդ գոյականի։

Ածական անունն յարեալ ՚ի գոյականն՝ յայտ առնէ զորպիսութիւն իրին զոր գոյականն նշանակէ։
Ըստ դրութեան՝ ածականն կարէ դասիլ յառաջ կամ զկնի գոյականին իւրոյ, կից այնմ՝ կամ հեռի ՚ի նմանէ։
Իսկ ըստ համաձայնութեան՝ ածականն կարէ ունիլ զնոյն թիւ և զհոլով ընդ գոյականին՝ կամ ոչ ունիլ. վ՟ որոյ աւանդին այս կանոնք համաձայնութեան նոցին։

### Կանոն. Ա։

Ա. Ածականն մի ընդ բազում նախադաս եղեալ գոյականին՝ սովորաբար ոչ համաձայնի ընդ նմա՝ ոչ թուով և ոչ հոլովով, այլ դնի ուղղական. Օր.
Անապական պահակաց արժանի եղեն։ ‖ Ուր նախադաս ածականս անապական՝ դնի եզակի ուղղական. և գոյականս պահակաց՝ յոգնակի թուական.
Ազգին հրէից՝ օգնական նիզակակից ուխտաւոր բարեկամաց մերոց։ ‖ Ուր երեք ածականքդ՝ օգնական ևն, դնին եզակի ուղղական, և գոյականն բարեկամաց՝ յոգնակի թուական. Ըստ այսմ է և ՚ի սոսին։
Արքայաբար բաժակաւն զուարճացոյց զմեզ։
Ծնեալք հեթանոսք և մշտնջենական բանիւն աստուծոյ։

Բ. Բայց եթէ նախադաս ածականք իցեն բազումք, հեռաւորն դնի համաձայն, և մերձաւորն անհամաձայն. Օր. Միով խաւարային շղթայիւ ամենեքեան կապեցան։ ‖ Ուր միովն՝ համաձայն գտանի գոյականին իւրոյ՝ որ է բառս շղթայիւ. իսկ խաւարայինն անհամաձայն։ Ըստ այսմ է և ՚ի սոսին.
Մեծաւն և կատարելովն և անձեռագործ խորանաւն.
Հանդերձելոյ և յաւէժական բարեացն հասցուք.

Գ. Միավանկ ածականք, որպէս՝ Մեծ, փոքր, աջ, նոր, չար, մի, այլ, ողջ, եւն. նմանապէս երկավանկք՝ Բազում, սակաւ, բարի, բոլոր, եւն. ՚ի նախադասելն վայելչապէս համաձայնին. որպէս. Ողորմութիւն մեծաց վարձուց է առիթ.

Իսկ նա յաջոյ թեւի անդ ձեպէր զզօրսն.

՚ի սէր միաբանութեան ժողովեսցէ զորդիս նորոյ սիօնի.

Եւ այս բազմաց բանից կարօտանայր.

Բոլորով սրտիւ եկի աստ առ քեզ.

Դ. Բազմավանկ ածականք՝ որք ածանցեալ են մասնկամբքս՝ կան, ին, ւոր, գոյն, ելի, ղէն, նախադաս եղեալ՝ վայելչապէս համաձայնին, մանաւանդ եթէ ունիցին զդիմորոշ յօդ. որպէս.

Մարմնականոյն ախտից ծառայէր անմտութեամբ.

Զանկալի գերագունի և առաջնոյ պատճառին հաւանել.

Աստուածայնոյն շնորհաց արժանացաւ լինել օթարան.

Մարմնաւորօք բանիւք անհնարին է պատմել.

Ե. Եթէ գոյականն իցէ անուն անեղական, նախադաս ածականն երբեմն հոլովի միայն համաձայնի, և թողու զնի անհամաձայն. որպէս.

Հայցեմ պաղատիլ ջերմագունիւ արտասուօք.

Մեծի աւետեաց եղև առաջնորդ և միջնորդ.

Եկն յաշխարհ նորոգել զմեզ ՚ի հնոյ մեղաց.

Զ. Նախադաս ածականն եթէ իցէ ընդունելութիւն անցեալ կամ ներկայ, առաւել համաձայնութիւն վարի. որպէս.

Օտարեցոց անցիցն ընդ նոսա անյիշատակութիւն ՚ի միտս արկանէին, զի ընթացելոց տանջանաց լցցեն զպատիժս.

Առն ապերախտից սուտ եղբարցն բռնադատեցաւ.

Բայց երբեմն անհամաձայն դնի. որպէս.

Դարձան յերուսաղէմ յանուանեալ լեռնէն ձիթենեաց. || կամ ՚ի լեռնէն անուանելոյ ձիթենեաց.

Է. Համաձայնութիւն նախադաս ածականին լինի ՚ի վերջահոլովսն. որպէս ՚ի սեռականն և ՚ի գործիականն եզակի

կամ յոգնակի • բայց ոչ 'ի նախադրիւ հոլովն , յորժամ
ածականն անմիջապէս յառաջոյ դնի գոյականին ։
Մանզի վայելչաբար ասի , ծածայնոց իրաց • սակաւուք
արամբք • անցելոց ամաց ։ Բայց անվայելուչ է ասել ,
զծածայինս իրս • յծածայինս բանս • զանցեալս ամս • ԱՋ ,
Ը • Բայց եթէ 'ի մէջ երկուցն այլ բառ անկանիցի ,
համաձայնի նաև 'ի նախադրիւ հոլովն • Որ •
Յիշելով զերծանեծս նորա զանհաչ շնորհս •

Կանոն • Ե ։

Ա • Ածականն յետադաս իւրում գոյականի թէ իցէ
կից և թէ հեռի , սովորաբար համաձայնի թուով և
հոլովով • Որ •
Հօրս բարերոյ • 'ի մարդոյ չարէ • զանցելոց ամաց •
Արարմբք պատուականօք ըստ նմին չափոյ անբաւչէ ։
Բ • Բայց եթէ 'ի մէջ ածականաց եդեալ կայ գոյակա-
նըն , յետադաս ածականն ևս բազում անգամ անհա-
մաձայն դնի իբրև զնախադաս , կրկնելով միայն զնախ-
դիրն կամ զայլ նախադրութի եթէ կայցէ • Որ •
Դժնդակ վարուց և աղանդի • || փոխանակ ասելոյ ,
դժնդակ և աղանդի վարուց •
Սպասման 'ի զննութական կարգէ և յաշխարհական •
Պատուովք արդարադաք ըստ հոգևոր մասին և ըստ
մարմնաւոր • || փոխանակ , մարմնաւորին •
Գ • Յետադաս ածականն երբեմն պահի անհամաձայն
նաև առանց միջադրութե գոյականին • Որ •
Մխիթարեցան 'ի բանից անտի յուղղոյ 'ի տէրէղ և 'ի
գեղեցկէ ։ Շնորհեան պաշտօնութիւն 'ի դիմամարտից
յանէբրևայքն և յելեւելի •
Դ • Յորժամ յետադաս ածականն է ընդունելութի
անցեալ , դնի երբեմն անհամաձայն • Որ ։
Իբրև զհամբաւ առն ընթացեալ • || փոխանակ , ընթացելոյ •
Ծառոց վարսաւորաց զանազանեալ 'ի պտուղս և 'ի տե-

րեա · || փոխանակ, ղանազանելոյ · Ուանդակորդս ձե-ռացս աղտեղեալ մեղօք · || փոխանակ, աղտեղելոց մեղօք ։

Ե · Ծածկանք եղերեալք եան, եայ, ոանէ, և այլք ո-րոց հնչումն չէ սովորական կամ վայելուչ, յաճախ ան-համաձայն վարին 'ի յետադասին · Օր ։

'Ի ցեղէն չարէնեան · Պահօք տառապորէայ ։ Ըստ հրա-մանին արքունի ։ Տանն արծրունի ։

Բայց կան սակաւ ուրեք համաձայնեալք · Օր ·

Մանեօք ծաղկեէեան ։ 'Ի տաճարաց ծաղկեէեայ ։

Կապանացն հաղարամեայ · Սահակայ Բագրատունւոյ ։

Երբեմն ածականն յետադաս կամ նախադասն և՝ ոչ ինչ հայեցեալ 'ի հոլով գոյականին, դնի սեռական հոլով՝ որպէս թէ յատկացուցիչ գոյականին իցէ ։ Եւ ներհակ այսմ՝ երբեմն գոյականն դնի 'ի սեռական հոլով իբր յատկացուցիչ ածականին · և սա անցանէ 'ի հոլով գոյականին որպէս յատկացեալ ։

Զ · Ծական եղեալ 'ի հոլովս սեռական իբրև յատ-կացուցիչ գոյականին ։ Եւ շինեցին զամրակողմն զգլուխ քաղաքին 'ի պարիսպս ամուրս, յաշտարակս հզօրաց · || փոխանակ ասելոյ, յաշտարակս հզօրս ։

Զլեզու մարդկան ոչ որ կարէ հնազանդել, զի թու-նօք մահաբերէն · || փոխանակ, լի մահաբեր թունօք ։

Փառաբանչօքն անմահից · || փոխանակ, անմահ փառաբանչօք ։

Զեռամբդ նորոգողի, մատամբդ կենդանաբաշխի, յար-կայուԷդ անեղծի, երեսօքդ լուսաբերականի · || այսինքն նո-րոգօղ ձեռամբդ, կենսաբաշխ մատամբդ, եւն ։

Եւս դրուժ յաճախ տեսանի յանցել ընդունելութիւն · Օր ։

Ոծցին իւղով 'ի մրրոյ պարզելոյ · || այսինքն պարզելով ։

Խմով արեանց վասն ձեր հեղլոյ · || այսինքն հեղլով ։

Զի հարուածք դարձելոցն 'ի թողութ մեղաց՝ լինին պատուհասիւքն 'ի վերայ եկելոյն 'ի տեառնէ · || այսինքն պատուհասիւքն 'ի վերայ եկելովք ։

Ըետարանական ուռկանաւն արկելոյ ՚ի ծով. || այսինքն ուռկանաւն արկելով.

է. Գոյական եդեալ ՚ի հոլովս սեռական իբրեւ յատկացուցիչ ածականին: Որդելականք հաստանոյ ՚ի կուսաստանաց անտի ՚ի դրունս և ՚ի պարիսպս ընթանային. || փոխանակ ասելոյ, որդելական կուսանք.

Իբրեւ թէ բաշխել նոցա զՏաճկանաց տարեւորն. || փոխանակ, զտարեւոր դաճկանն.

Եւ ասէն զհանգիստն յաղգի ազգի տրամութեանց գիշերայնում ժնոյ. || փոխանակ, գիշերային քնոյ:

Կանոն. Ժ:

Եթէ ածականն իցէ նախադաս և եթէ գոյականն, սովորաբար նախդիրն դնի ՚ի վերայ նախադասին:

ա. Ածականն նախադաս եղեալ առնու զնախդիրն. օր.

Ա՝ի ինչ մարմնական ՚ի հոգեւոր գործս խառնեսցուք:
|| Ուր նախդիրդ ՚ի՝ եդեալ է ՚ի վր(այ) նախադաս ածականին, որ է բառդ հոգեւոր: Նոյն այսմ է և ՚ի սոսին:
Որ մոլորեցուցանէն զայլս յուղւոյ հաւատոց և ՚ի սուրբ վարուց, զդիւացն զկարգ ունին:
Ուսուցանէ ՚ի մեզ զգեղեցիկ բոյս առաքինութեան:
Սքանչանային ընդ անհաս խորհուրդն աստուծոյ:

բ. Եթէ նախադաս ածականք իցեն բազում, և ունիցին զշաղկապդ և, նախդիրն սովորաբար դնի ՚ի վերայ ամենայն ածականաց. օր.

Ընկաք ՚ի ցաւալից և ՚ի բազմածուփ կենցաղս:
Պարտ է մեզ կորուսանել ՚ի սրտէ զընդունայն և զաղիրտ և զանօրէն խորհուրդս:
Լին յանբան և յանկոխ և յանջուր և յանպտուղ երկրին:

Բայց յաճախ ուրեք նախդիրն ՚ի վերայ առաջնոյն միայն դնի և յիւրաքանչիւրսն ոչ կրկնի. զոր օրինակ.
Հոգեալք ՚ի կենդանի և կենդանարար գլուխն մեր քս.
Լցցուք շնորհաշար և անկարգ խառնակութիւնս:

Դ. Եթէ նախադաս ածականք իցեն առանց շաղկապի,
նախդիրն սովորաբար դնի 'ի վր առաջնոյն միայն. Օր.
Հրաժարեցոյց 'ի հեթանոսական անկարգ շատախօսուէն.
Մի՛ խոտորեսջիք չարքունական՝ անխոտոր պողոտայէն.
Խմացեալ զմահառիթ նենգաւոր շունչ պատրանաց նոցա.

Բայց երբեմն 'ի վերայ ամենեցուն ևս դնի. Օր.
Անկան յածակիր 'ի լուսեղէն սպասաւորութենէն.
'Ի բաց ընկեցին զմարմնաւոր զդժնդակ մեծութիւն.
զԱստուածախօս զաստուածապատում զաւետապարգև
վարդապետութի միածնին ոյ կարգեցին ամ ազգաց.

Ե. Երբեմն նախդիրն ոչ միայն դնի 'ի վր նախադաս ա-
ծականին, այլև կրկնի 'ի վր յետադաս գոյականին. Օր.
Ածեր 'ի վերայ նոցա զանհնարին զմեղուղ.
Կեանս զբարձրանշան զհռչակաւոր՝ և զյանկարծա-
հաս զմնա հոգւոյն սրբոյ.
ԶԱնցաւոր 'ի կեանս սակաւ աշխատելով՝ յերկինս
յաւիտենանս յաւիտենից թագաւորեսցուք.

Կանոն. Է.

Ա. Եթէ յետադաս գոյականք իցեն բազումք յօդելք
շաղկապաւս և, նախդիրն դնի ոչ միայն 'ի վր ածակա-
նին, այլև 'ի վր երկրորդ գոյականին, և յետագայից նց. Օր.
զՀրեշտակական կարգս և զվարս յանձին բերին յոյժ.
զՄեծամեծ պարգևս և զպատիւ ընդունին յարքայէ.
Ոչ երկեան չահագին սպառնալեաց և 'ի տանջանաց.

Բայց սակաւուրեք նախդիրն դնի 'ի վր նախընթաց
ածականին միայն. Օր. Հրոյ զօրութի այն է, զանպիտան
աղտ և ժանկ խառնեալ ը ոսկւոյ և արծաթոյ՝ սրբել.

Բ. Երբեմն արտաքոյ հասարակ կանոնի նախդիրն դնի
'ի վերայ յետադաս գոյականին, և ոչ 'ի վերայ նախա-
դաս ածականին. և այս յաւէտ 'ի հայցական հոլովս,
կամ յոգնաւոր բանս. Օր.
Առաջի աչաց դնէ զուարթածաղիկ զուրախութիւն.

Անապական սուրբ զխաչն օրհնեսցուք :
Յորմէ սարսեալ դողային փայլակնացայտ 'ի լուսոյն :
Խաւարար հեռացան լուսաշաւիղ ընդ պողոտայն :

Գ. Եթէ 'ի մէջ նախադաս ածականի և յետադաս գոյականի անկցի բայ, նախդիրն սովորաբար դնի 'ի վերայ երկուցն ևս. օր. զՏիեզերականն հանդերձեալ էր կատարել զփրկութիւն :

'ի Լուսեղէնն տանի յառագաստ զհարսնացեալն իւր :
'ի Քերովբէական և յանպատում հանգուցեալ ես յաթոռ :

Բայց սակաւ ուրեք դնի միայն 'ի վերայ յետադասին. և այն 'ի հայցական հոլովի. օր.

Առաքելական տուեր զպատիւ և զիշխանութիւն 'ի քեզ :
Հարցանելն երկշաւիղ ունէր զխորհուրդ :
Մեծամեծս ևս ցուցանէ նմա զգործս :

Դ. Գոյականն նախադաս եղեալ առնու զնախդիրն. օր. զԱյր հաւատարիմ գործ է գտանել. Իսկ նախդիրն զ՝ եդեալ է 'ի վն նախադաս գոյականին, որ է բառս այս :

Մեղօք կորուսաք զփառս յաւէժականս :
Անկան 'ի բերդս ամուրս և 'ի բանտս անելս :

Նոյնպէս եթէ յետադաս ածականք լիցին բազումք. օր.

զԱրս պատուականս և ախտանիս հաւատաւէր :
Ունի զօրէնս խաղաղականս և փրկականս :
Եւ այն անկաւ յերկիր բարի և պարարտ :

Ե. Երբեմն դնի նախդիրն նաև 'ի վերայ յետադաս ածականին, եթէ մի լիցի և եթէ բազում. օր.

Հեղին զարիւն զարդար շուրջ զորբութեն :
Արգել զնա 'ի ճաշակելոյ 'ի տնկոյ իմիքէ 'ի մահաբերէ :
Օրհնեցուք ընդ հմ անպատում ընդ մեծ և ընդ ահագին :

Զ. Երբեմն դնի 'ի վերայ նախադաս գոյականին, և 'ի վերայ երկրորդ յետադաս ածականին. օր.

զԱյր զուարթ և զառատ սիրէ աստուած :

Զանգին 'ի ձգունս զանազանս և 'ի բազմապատիկս :
Յուսմունս պէսպէս և յօտարաձայն մի՛ դանդաչէք :

է. Եւ երբեմն վայելուչ ևս կրկնել յերկուսին, յոր- ժամ 'ի մէջ նոցա կայցէ այլ բառ. Օր.

Ընկեց զնա 'ի վիհ մի յանտառին 'ի խորին յոյժ :
Ոտուն եհար զհանդերձեն խուռն ձիոյն :
Եւ հասեալ նոցա, զդրունսն առին զարտաքինս :
Յանապատէ եկեալ յերկրէ.

ը. Երբեմն նախդիրն զանց եղեալ 'ի նախադասն թէ գոյական իցէ և թէ ածական, դնի 'ի վերայ յետա- դասին, յաւէտ 'ի հայցական հոլովս՝ որ սովոր է աննախ- դիր վարիլ. Օր.

Ճանապարհ զարքունի գնասցուք. || փոխանակ ասե- լոյ, զճանապարհ արքունի.

Կերան հաց նեղութեան զչորաբեկն. || փոխանակ, զհաց նեղութեան.

Կրկին զհոգին որ 'ի նմա՝ խնդրեալ ընկալաւ. || փո- խանակ, զկրկին հոգին.

## Կանոն. Է.

ա. Ածական նախադաս կամ յետադաս՝ յորժամ հո- լովով համաձայնի ընդ գոյականին, պարտի համա- ձայնիլ և թուով. Օր. Մեծաւ զօրութեամբ. բնաւիւք բոլորովիմբք. 'ի նորոյ իշխանէ. 'ի բազմաց իմաստնոց. լեզուաւ նենգաւորաւ. քարամբք պատուականօք. զօրս քաջս. 'ի զօրաց պատերազմողաց.

Բայց յանեզական գոյականս ածականն հոլովով համաձայնեալ՝ չէ՛ պարտական համաձայնիլ և թուով. Ուստի ասի, Մեծաւ տանջանօք. փառօք բազմաւ. Մեծա- գունի երախտեաց. կենացս անցաւորի.

բ. Ածականք՝ յարեալ յանուանս որք նշանակեն զբազմութ̃ կամ զհասարակութ̃, որպիսի են Հանրականք,

հաւաքականք, Թուականք, և բաղդատականք, երբեմն ըստ Թուոյն երևին անհամաձայն, այլ ըստ մտացն են համաձայն. օր. Ամենայն ժողովրդեանն ելելոց յեգիպտոսէ: ‖ Ուր յոգնակի ածականս ելելոց՝ եդեալ է առ եզակի հաւաքականն՝ ամենայն ժողովրդեան.

Ասէ եղիազար քահանայ ցարս զօրուն եկելոց ՚ի ճակատէ պատերազմին: ‖ Ուր զօրուն է հաւաքական եզակի, իսկ ածական նորա եկելոց՝ յոգնակի:

Սատակեսցի ամենայն մարդ [illegible] Թագաւորի.

Որ համբերութ. քով ստացար քեզ ժողովուրդ սեպհականս և ընտրեալս: Առ ընդ իւր եօթն հարիւր այր սուսերաձիգս:

Դ. Ըստ այսմ դնին և բաղդատականք որք զառաւելութի նշանակեն. օր. Ծանրագունի բեռանց ներքոյ անկեալ.

՚Ի բարձրագոյնն համարձակեալ ձեռնարկութի:

՚Ի մեծագունէն երկուցեալ ՚ի դատաստանացն:

Ե. Գտանին ուրեք և այլ հասարակ ածականք, որք հոլովով համաձայն են ընդ գոյականին, բայց Թուով անհամաձայն. օր. Ասելով [illegible] լողաց բան:

Մեք երկրաւորքս չեմք արժանաւորք բարութեանց.

Այսոցիկ բարբառոյ աւանդութեանց եղեն հեղինակք.

Բայց այսպիսի անհամաձայնութի ածականաց է զգուշալի:

Կանոն. Է.

Ա. Ածականն յորժամ փոխեսցէ զհոլովն՝ և ոչ ըստ կանոնի ածականաց կարգեսցի առ գոյականն, յայնժամ համաձայնութին ոչ ըստ կանոնի ածականաց է դատելի.

Արդ ածական անուանն դնի երբեմն բացառական հոլովով. երբեմն գործիական հոլովով գոյականին, կամ նախադրութ. և երբեմն սեռական գոյականաւ:

Բ. ՚Ի բացառական հոլով դնի. օր. Ասա ոչ է յանմանիցն և ձեզ խոնարհիլ: ‖ Ուր զօրութ. իմանի գոյականն. որպէս Թէ ասէր. Ոչ է անման կամ անյարմար ինձ:

Թէ և 'ի կարի զօրաւորաց իցէ ելն և 'ի պարարտաց․ || փոխանակ ասելոյ, թէ և յոյժ զօրաւոր և պարարտ։ Այսպէս ոճս՝ ածականն խնդիր էական բային է համարելի։

Դ․ Ի գործիական հոլով գոյականին, կամ նախադրութե․ որ․ Օ ծուլութեամբ կեանս, և շփոթութեամբ վարէին զգործս․ || այսինքն զծոյլ կեանս, և զանկարգ գործս։

Օ խօսիւք պատարագս մատուցանել․ || այսինքն զխօսուն պատարագս։

Անանց քննելոց են դատաստանք նորա, և անանց զննելոց ճանապարհք նորա․ || այսինքն անքննելի դատաստանք, անզննելի ճանապարհք։

Անանց անցանելոց ունի զքահանայութիւն․ || որ ունի զանանցանելի քահանայութիւն։

Այսպիսի ոճս ածականն փոխադրութե հոլովոց եդեալ իբր գոյական, կամ նախադրութե, խնդիր էական բային է համարելի, որ զօրութե իմանի համդերձ յարաբերականաւ․ որպէս թէ ասէր, կեանք որ ծուլութե են․ պատարագ որ խօսիւք լինի․ դատաստանք որ անանց քննելոց են․ եւն։

Ե․ Ի սեռական հոլով դնի ածականն, փոխելով յիւր վերացեալ գոյականն․ որ․ Եհար նա զերկիրն եգիպտացւոց հարուածովք անբժշկութեան․ || փոխանակ ասելոյ, անբժշկելի հարուածովք։

Իւրեանց տկարութեան մտօքն․ || այսինքն տկար մտօքն։
Նիրհէր 'ի քուն թանձրութեան․ || այսինքն թանձր քնով։
Ստամոքսն գաղտնութեան․ || որ գաղտնական ստամոքսն։
Յարբումն դեղոցն օգտակարութեան․ || որ օգտակար դեղոցն։

Այսպիսի ոճս՝ ածականն եդեալ 'ի վերացեալ գոյական՝ յատկացուցիչ միւս գոյականին է համարելի։

Զ․ Մերձակ այսմ՝ երբեմն փոխանակ սեռական յատկացուցչի՝ որ պահանջի լինել գոյական, դնի անուն ածական․ որ․ Պետրոսեան օրինակութե․ || փոխանակ

տալոյ, օրինակաւ կամ ըստ օրինակին պետրոսի։
Ո՜ պատուական՝ և զուարթ հայրենի անուանդ 'ի վերայ մեր կոչել . || փոխանակ, զուարթ անուանդ հօր։
Այսպիսի սմա՝ ածականն ոչ թէ յատկացուցիչ՝ այլ համարելի է ածական իւրում գոյականի։

—

## ՅՕԴՈՒԱԾ . Զ.

### Համաձայնութիւն Մասնական, Հանրական, Հարցական, և Ցուցական անուանց։

Այս անուանք՝ որպէս յառաջագոյն ասացաք, ըստ մեծի մասին ածական են, և վարին ըստ կանոնաց համաձայնութեան այլոց անուանց, որք եդան 'ի նախընթաց գլուխն . բայց ունին ևս զտարբեր եղանակս կիրառութեան . զոր կարևոր է աստէն նշանակել առանձինն։

Համաձայնութիւն մասնական անուանց։

Ամէն . Ա.

ա. Այսք ըստ բնութեան իւրեանց ածական են . և յատկապէս ասին զանձանց և զկենդանեաց . բայց ուրեք զանանձն իրաց ևս ասին՝ մանաւանդ յոգնակի . Եթէ միայնակ վարին՝ գոյականապէս նշանակեն . օր.
Ամէն պահէ օր ըստ օրէ . ամէն պահէ զօրհանապազ :
Ամի ամ յալիս մօրուաց փառս որսացէ :
Ո՛չ է ամէն հանդիստ գտանել յաշխարհիս :
Ընտրաբար դնին յառաջ կամ զկնի գոյականին . և ուր և իցէն համաձայնին սովորաբար 'ի հոլովս և 'ի թիւ . օր.
Ամէն երիտասարդ . որդի ամենայն իշխանի . ամենայն ծառայի . յամենայնէ զինուորէ . այլք ամէնք . զամենայն ճարտարս :
Ի՛ ամ այդր այր . ամենայն մեծատուն . իմաստնոյ ամենայնի :
Երբեմն փոխադրութեամբ հոլովոյ վարին . օր.
Ո՛չ 'ի մէնջ կոչեցեալք, կամ ամենայն 'ի մարդկանէ . || փոխանակ ասելոյ, յումեքէ ։

Ոչ մեռելոց ումեք հաւանեսցին լսել ․ ‖ փոխանակ, ումեք ։
Ի հրեշտակաց օտար է նախանձել ընդ ումեք փրկու-
թիւն ․ ‖ փոխանակ, ուրուք ։

Ը․ Առաջադիրն ըստ կանոնաց դնելի է ի վերայ նախա-
դաս անուանն ․ բայց երբեմն դնի կամ ի յետադաս
մասնականն միայն, և կամ կրկնի ևս, Օր ։
Ըստ որք ընդ միմեանս շփոթեաց ․ ‖ փխ զշտ ոք ։
Եգիտ հրէայ ումն ․ ‖ այսինքն զհրէայ ոմն ։
Կոչեաց զսիմոն ումն ․ ‖ այսինքն զսիմոն ոմն ։

Դ․ Զն՝ երբեմն իբրև յոքնական վարի, որպէս թէ
տառս է՝ յոքնականացուցիչ իցէ իւր ․ Օր ։
Եթէ իցեն ոք արք անօրէնք փախուցեալք յերկրէ նշ,
տաջիք ի ձեռս շմաւոնի ․ ‖ փոխնկ, ոմանք արք անօրէնք ։
Բազմաց ուրուք ի ձէնջ յանձն տարարեալ ․ ‖ փոխա-
նակ, բազմաց ոմանց ։

Եթէ ոք գտցէ զայնր ճանապարհաւ արս կամ կա-
նայս ․ ‖ փոխանակ, զոմանս արս կամ կանայս գտցէ ։
Որպիսի ոք երբեմն էին ․ ‖ այսինքն որպիսի ոմանք ։
Ուր երկուոք ի միասին իցեն ․ ‖ փխ երկու ոմանք ։

ՍԷ․

Զ․ Բառս Գ՝ վարի ևս իբրև լոկ մասնական ․ դնի յա-
ռաջ և զկնի գոյականին միշտ համաձայն հոլովով ․ Օր ։
Բան Գոյ, կամ Գոյ ․ տրամբ Գոյն ․ յաւուր Գոյն, կամ
ի Գոյն աւուր ․ Գոյն բանիւ ․ ի զինուորէ Գոյնէ ։
փոխադրութբ հոլովոյ վարի բազում անգամ ․ Օր ։
Ըստ ծովեզերբ Գոյն ․ ‖ այսինքն միով ։
Ասու ոչ ի Գոյն կողմանէ ․ ‖ փխ ի միոջէ կողմանէ ։

ԻՍՆ․ ԵՆՉ․

Է․ Որք իբրև մասնական ածականք սովորաբար ասին
զիրաց, իսկ անձանց դուն ուրեք ․ Օր ։

Իբր զՀերբեալ էին կալանաւոր ։ || կմ ոմն կալանաւոր ։
Ինչն՝ միայնակ ոչ երբէք նախադաս լինի գոյականի ։
զի ոչ տայ, ինչ գործ ։ ինչ բան ։ այլ կամ յետադաս կայ գոյականին, և կամ նախ քան զինքն պահանջէ բայ, կամ զածական ինչ ։ Որ ։

Զմեծ ինչ բան տա քեզ հատուցանիցեն ։
Եթէ ունիցին ինչ ընդ ումեք բանս ։
Իսկ յոր թիւ կամ ՚ի հոլով իցէ գոյականն, ինքն մնայ անփոփոխ ։ Որ ։

Իբրու թէ անձին զօրութեն ինչ արարեալ իցէ ։
Նանք ինչ ոչ գոյ նոցա ընդ տարրիս ։

Բայց մասնական ինչ՝ բաղաւմանգամ համաձայնի ընդ գոյականին ։ և երբեմն վարի փոխադրութեամբ հոլովոյ ։ Որ ։

Ուրանց իրիք յանցանաց լինելոյ ։
՚Ի մասնաւոր յանցանաց իմիք ։
Ըստ օրինակաց իրիք ։ || կմ օրինակաց ումանց ։
Իբր պատկառ իմիք պատճառեալ ։ || կմ պատկառ իւիք ։

Է. Մասնական անուանքս բաղաւմանգամ յարին յանուանս՝ ՚ի բայս՝ և ՚ի մակբայս առ ՚ի զարդ ։ Որ ։

Զքո փափագ արտաքոյ այսպիսւոյ ինչ տեսի սահմանի ։
Իբրև կամիցին ինչ թէ փոխեսցուք զնա ՚ի գործոց անտի ։
Զի յանկարծակի ինչ եղաք ։
Զես դու զի ոչ երկեայ ՚ի տանջանաց ինչ ես ։
՚Ի ժողովել պօղոսի խուիւ ինչ բազում ։
Վասն ողորմութեան իմոյ սիրեցի զքեզ, և ոչ վասն քո ինչ ։

Այլ ։

Ը. Ընդ գոյականին նախադասի սովորաբար, և համաձայնի ընդ նմա ՚ի հոլովս ։ Որ ։

՚Ի միում աւուր ։ ՚ի գալ միոյ շաբաթուն ։ միով մասամբ ։ ՚ի միում աւուր ։

Միւս ուրեք երևի յետադաս կամ անհամաձայն. որ.
՚ի գալ ամին միւսոյ. ՚ի միւսմէ կողմանէ գետոյն։

## Այլ.

ԺԸ. Սովորաբար նախադասի գոյականին. երբեմն համաձայնի. որ. Այլում քահանայի. յայլմէ ազգէ. յայլոց ազգաց. յայլոց քաղաքաց. այլովք բանիւք.
Երբեմն անհամաձայն դնի. որ. Այլ յօրինուածս. յայլ մարգարէից. առ այլ երնջովք.
Բայց ուրեք դնի յետադաս. որ.
Հոգի այլ. առն այլոյ. ազգի այլում. յայր այլ. զխիրտ այլ.

## Իւրաքանչիւր. Երկաքանչիւր.

ԺԹ. Սովորաբար նախադաս լինին գոյականին. ընդ որում երբեմն անհամաձայն դնին, և երբեմն համաձայն. որ.
Հեռացեալ է յիւրաքանչիւր մտաց.
Հովուէին յիւրաքանչիւր ժամանակի.
Տեսարան է սիրան երկաքանչիւրոց կրից.
Իւրաքանչիւր՝ ուղղական ձայնիւ վարի փոխանակ սեռականի և տրականի՝ թէ եզակի և թէ յոգնակի. որ.
՚Ի գարս իւրաքանչիւր ցուցին քաջութիւն. ‖ այսինքն յիւրաքանչիւր գարս։
՚Ի դառնալ ձեզ իւրաքանչիւր ՚ի չարեաց ձերոց. ‖ այսինքն ձեզ իւրաքանչիւրոց։
Դրօշից անդամ իւրաքանչիւր տեղեկանայր ՚ի նմանէ. ‖ այսինքն դրօշից իւրաքանչիւրոց։

Ի. Մասնական անուանք՝ որպէս և հարցականք և Թուականք, բազում անգամ զիւրեանց գոյական փոխեն ՚ի խնդիր սեռական կամ բացառական. որպէս՝ փոխանակ ասելոյ, ոմանք զօրականք, իշխան ոք. ասի՝ ոմանք ՚ի զօրականաց, յիշխանաց ոք։

## Ամենեքեան . Բոլորեքեան , կամ երկին .

ա . Որքա համաձայնին ընդ յոքնակի դիմականի նախադաս կամ յետադաս . Օր .

Ամենեցուն քրիստոնէից լինել ՚ի քրիստոս մի ազգ .
Մարգարէիւքն ամենեքումբք ծանօթս տայ :
Հիմն հաւատոյ բոլորեցունց հաւատացելոցն .
Յորժամ նախադաս լինին դերանուանց , ՚ի նախադրի- հոլովն կրկնի նախդիրն . Օր .
զԱմենեսեան զնա . զամենեսեան ՚ի նա . զամենեսին ՚ի մեզ .
Իսկ յետոյ դերանուանց՝ կարէ կրկնիլ , կամ ոչ . Օր .
Քան զնոսա ամենեսին , կամ քան զնոսա զամենեսին .
՚ի ձէնջ ամենեցունց , կամ յամենեցունց .

## Ամն . ամենայն .

բ . Որքա միօրինակ ասին անձանց և իրաց .
Ամն , ընդ յոքնակի դիմականի վարի համաձայն ՚ի սե- ռական և ՚ի բացառական հոլովս . իսկ յայլ հոլովս միայն եզական . Օր . Ամենից հոգւոց . յամենից մարդոց .
Ամենայն , նշանակէ ամենայն ոք , ամենայն ինչ . զյատուկ յոքնական սորա միայնակ կամ ընդ յոքնականի վարեն հեղինակք . Օր . Ամենայնքն ՚ի ժամանակագրաց գրեն .
Ընդ խուր ածելով զկամսոր ամենայնքն .
Պէտ վերոյ ամենայնից լինել խորհրդեան :
Յամենայնսն դադարել չարեաց :

Սակայն ՚ի հասարակ սովորութեան յաճախեալ է սորա եզականն թէ միայնակ և թէ ընդ դիմականի . որ նախադաս կամ յետադաս եղեալ՝ միայ եզական . զի նշանակութիւն գոլով բազմաւորական , համաձայն համարի ըստ թուոյն . Օր . Զօրացաւ քան զամենայն եղեալս յառաջ քան զնա . || մ . քան զամենեսին եղեալս .

Զօրայն ամենայնի · լեռնականօքն ամենայնի ։
Զամենայնիւ զանց արար զմարդկեղէն կարծեօք ։
Զայս անհամաձայնութիւն թուի պահել միշտ յուղղական և ՚ի նախդրիւ հոլովս · զոր օրինակ ·
Ամենայն կենդանիք · կենդանիք ամենայն · յամենայն քաղաքս · ՚ի քաղաքս ամենայն · ընդ ամենայն սուրբս · ընդ սուրբս ամենայն · ևն ։

Դ · Ըստ համաձայնութեան հոլովոց, եթէ յետադաս իցէ գոյականին միշտ համաձայնի · որպ՟ ։
Առն ամենայնի գլուխ քրիստոս է ։
Պատճառ բարեաց ամենայնի աստուած է ։
Իսկ նախադաս եղեալ սովորաբար համաձայնի՝ եթէ անկեալ իցէ ՚ի միջի այլ բառ · զոր օրինակ ·
Այր ամենայնի խառնաղանձ չէ անոյ ոչ է մի բարք ։
Արբեցիս յայսմ ամենայնէ ՚ի սատակար գաւաթոյ ։

Դ · Յորժամ նախադաս է գոյականին, նախդիրն ոչ զանց առնի · իսկ յետադաս եղեալ՝ կրկնի նախդիրն առ երկոսին ևս · որպ՟ ։
Ունիցես զարդարուն յամենայն ՚ի կեանս քո ։
Ամենայն ՚ի զուր բանէ լռեցո զլեզու քո ։
Զպարտութիւն զամենայն ՚ի բաց ընկեցուք ։
Ընդ քաղաքն ընդ ամենայն տարածեցաւ բոցն ։

## Ոչ ոք · ոչ մի ոք ։

Ե · Ոքա սովորաբար իբրև գոյական վարին և եզակի · և ասին զանձանց · սակաւ ուրեք դնին իբրև ածական · որպ՟ ։
Ոչ ոք ծառայ կարէ երկուց տերանց ծառայել ։
՚Ի նախդրիւ հոլովս՝ նախդիրն դնի սովորաբար ՚ի վ՟ր ոք կամ մի մասնականաց, և ոչ ՚ի վ՟ր բացասականին · որպ՟ ։
Աչօք բացօք ոչ զոք տեսանէր ։
Ոչ զոք եղծաք, և ոչ զոք զրկեցաք ։
Սակաւ ուրեք նախդիրն ՚ի վ՟ր բացասականին դնի · որպ՟ ։

Յոչ ոք ապաւինեցան 'ի նեղութ իւրեանց ։
Յոչ փոյ պարտաւոր հակառակամարտէ ։

## Ոչինչ ։

Ե ․ 'Ի վերայ իրաց միայն տալի ․ և ըստ յատուկ նշանակութեն ածական է ․ բայց միայնակ եդեալ 'ի բանի՝ իբրև գոյական վարի, և ոչ առնու զնախդիրս հայցականի ․ Որ ․ Ոչինչ գիտեմ զանձին իմոյ ․ տեսանեմ և ոչինչ ․ յորս օտար է առել ․ զոչինչ գիտեմ, տեսանեմ և զոչինչ ։

Ընդ գոյականի եդեալ՝ կմ 'ի նախդրիւ տրականն առնու զնախդիր ․ Որ ․ Ոչ բանակաւ լինիք ոչինչ պէտս ։

### Համաձայնութիւն հարցական անուանց ։

## Ով ․ ո ։

Զ ․ Որք ըստ յատուկ նշանակութեն գոյական են, և անձանց տալի ․ յանձնս վարին ընդ մենականիս ոք ։

'Ի նախդրիւ հոլովս՝ առաջինն միայն առնու զնախդիրն ․ իսկ յայլ հոլովս երկաքանչիւրքն հոլովին ․ Որ ․
Ո՞ ոք առեն զինէն ։ Ընդ ում ումք համարեսցի ։
Ոյր ուրուք 'ի ձէնջ էշ կամ եզն անկանիցի ։

Է ․ Երեք իբրև ածական են վարին, փոխանակ ամենայն ոք ․ Որ ․ Ո՞վ ոք իբրև զիս այր ․ Այս ո՞վ որ այր ։
Յո՞ ոք 'ի ձէնջ հայր խնդրիցէ որդի իւր ․ Այս յո՞ որ հայր ։

Բազում ուրեք եղանի ձայնիւ փոխանակ յոգնականի վարին ․ Որ ․ Ո՞ այնոքիկ իցեն ․ ո՞ այն իցեն ․
Այսինքն ո՞յք այնոքիկ ։ Ո՞վ էիք ․ Այս ո՞յք էիք ։
Ո՞վ են ․ ո՞վ ոք իցեն ․ Այս ո՞յք են ․ ո՞յք ոմանք իցեն ։

## Ո՞ր ։

Ը ․ Ածական է, և տալի 'ի վերայ անձանց և իրաց ․ նախադասի միշտ գոյականին, և համաձայնի ընդ նմա թուով և հոլովով ․ Որ ․ Որո՞վ այսօրինակ հաշտեցայց ընդ քեզ ։

Յո՞րմէ աշխարհէ ես, կամ յո՞րմէ ժողովրդենէ ։
Ընդ որո՞վ ծառով հասեր առ դուռս ։

Այլուր ուրեք անհամաձայն վարի · զոր օրինակ ։
Յո՞ր մահուանէ յի՞րպիսի կենդանութիւն փոխեցայք ։

Վարի եւ առանց հարցման՝ փոխանակ բառիս որ-պիսի · եւ եղանակ համաձայնութեան նոյն է · զոր օրինակ ։
Որո՞վ դատաստանաւ դատիք, դատելոց էք ։
Վասն որո՞յ յուսոյ ամբաստանիմ 'ի հրէից ։
Որո՞վ կամօք եւ մեք սրբեցաք ։

Գ · Յարի եւ ընդ մասնականս ով, եւ վարի գոյականաւս · որպ ։
Որ ով կամիցի սիրել զաշխարհս, ատելի լինի աստուծոյ ։
Որ ընդունի զոր ով ես առաքեցից, զիս ընդունի ։

Բազում անգամ 'ի մէջ երկուցն անկանի բայ կամ այլ բառ · որպ ։ Որ կամիցի ով դատել · փոխանակ, որ ոք կամիցի ։
Որ ուտիցէ ով 'ի սմանէ · փոխանակ, որ ոք ուտիցէ ։

## Ի՞նչ · Զի՞նչ ։

Ե · Միայնակ եդեալք իբր գոյական վարին · իսկ յանուանս յարեալ՝ լինին ածական ։

Ինչ՝ նախդրիւ վարի, զինչ, առինչ ։
Զինչ՝ չունի զայլ հոլով · եւ վարի ուղղական եւ հայցական ։
Ուղղական · Զինչ է չարութիւդ այդ ։
Հայցական · Զինչ գտեր յամենայն ընչից քոց ։

Զ · Կախադաս եղեալ գոյականի, համաձայնին 'ի նախդրիւ հոլովն եղակի ձայնիւ · եւ նշանակեն որ · որպ ։

Զինչ միտս է իմ, կամ զինչ յանցանք են իմ · այսինքն որ միտս, որ յանցանք ։
Զինչ օրէնս, զինչ կամս, զինչ խորհուրդս կան ընդ մեզ հեբրայեցիքդ ։

Է · Հայցական անուանք յորժամ էական բայիւ եւ շաղկապաւ յօդին, նշանակեն իբրեւ ընդհանրական անուն · որպ ։

Ով և իցէ, ովոք և իցէ. որ և իցէ, որ ոք և իցէ. զինչ և է, զինչ և իցէ.

Որ զձեռս իւր ձգէ յառնուլ զինչ և իցէ իրս :
Եթէ ըմբռնեսցի որ 'ի ձեռն զինչ և իցէ յանցանս :
Կինին զորոյ և իցէ գունոց՝ ընդունելի է :

Համաձայնութիւն թուական անուանց.

Սոքա առ հասարակ ածական են, և ըստ մեծի մասին ըստ կանոնի ածականաց համաձայնին. բայց իւրաքանչիւր տեսակքն ունին և զառանձին եղանակս կիրառութեան, որպէս յօրինակացն տեսցի.

—

Բացարձակ թուականք.

ա. Ըստ համաձայնութեան հոլովոյ՝ բացարձակ թուականք նախադասեալք գոյականին երբեմն համաձայնին, և երբեմն անհամաձայն դնին.

Համաձայն. որպէս. 'Ի փոքու մարդոյ մեղք յոլով մտին.
'Ի փոսն մարմնի են անդամք բազումք :
Միով պատարագաւ ամենեքին սրբեցաք :
Չորից և 'ի չորս ազգս խնդրեցից զվրէժ :
'Ի բերանոյ երկուց և երից վկայից հաստատեսցի :
Անհամաձայն. որպէս. Ծննի երեսուն ամաց սկսան զհարել :
Հարիւր յիսուն արամբք երթեալ դադարել :
Ութ հազար հեծեալ սպառազինեալ եկն :

բ. Եւ յետադաս եղեալ գոյականին՝ սովորաբար համաձայնին 'ի հոլովս. և եթէ կից կայցեն մեծ և փոքր թիւք, յետինն հոլովի սովորաբար. որպէս.

Ամաց վեց հարիւրոց էր 'ի մեռանելն իւրում :
Ի մեծամեծ ձկամբք հարիւր յիսուն և երեք :
Էր անդ բազմութիւն անուանց իբրև հարիւր և քսանից :
Բայց երբեմն ոչ պահի այս համաձայնութիւն, որպէս և յայլ ածականս. զոր օրինակ.

Որ էր տուեալ արանց եօթն :
Նա էր այրն ամաց հարիւր և քսան և ութն :

Դ. Ըստ համաձայնութեան Թուոյ՝ բացարձակ Թուականք յորժամ նախադաս լինիցին եզակի կամ յոքնակի, յետադաս գոյականն նոցա սովորաբար դնի եզակի . Որ :
Երկոտասան եղբարք եմք ծառայք քո :
Ութն հարիւր և երեսուն ամի եղև :
Անկան ոգիք իբրև երեք հազարք այր :
Զերեք հարիւր այրն և եթ կալաւ :

Ե. Իսկ եթէ գոյականն իցէ նախադաս, նոյն գոյականն միշտ դնի յոքնակի, եթէ յետադաս Թուականն յոքնակի իցէ և եթէ եզակի . Որ :
Ամաց քառասնից և վեց էր ի Թագաւորելն :
Գործք երկոտասանք՝ յաղթ.իւ մարգարէի :
Պատրաստեցէք զօրականս երկերիւր, հեծեալս եօթանասուն, աղեղնաւորս երկերիւր :

Դասական Թուականք :

Զ. Սոքա յորժամ յետադասին գոյականաց, միշտ համաձայնին ի հոլովս . Որ :
Հանգեաւ աստուած յաւուրն եօթներորդի :
Յամին չորրորդի յամսեանն երկրորդի Թագաւորելոյ նո՛ր :

Է. Իսկ յորժամ նախադասին, երբեմն համաձայնին . Որ :
Ի չորրորդում պահու գիշերոյն գայ առ նոսա յիսուս :
Խօսել ընդ նմին զբանս չորեքերորդի սաղմոսին :
Եւ երբեմն անհամաձայն դնին . Որ :
Յերրորդ ժամուն ստեղծաւ ադամ :
Ի քառասներորդ իններորդ սաղմոսին նուագէ :
Այլ եթէ գտանի մեծ և փոքր Թիւ, խառնանշխութն հոլովի սովորաբար . Որ . Եւ եղև յամին չորեք հարիւրերորդի և քառասներորդի ելանելոյ որդւոցն իսրայէլի յեգիպտոսէ :
Բաց եօթանասներորդի երկրորդի սաղմոսին այլէ :

Մակբայլի Թուականք.

Որք միշտ յարին 'ի յոքնակի դիւական, և համաձայնին ընդ նմին թէ 'ի նախադասին և թէ 'ի յետադասին. որ.

Ոչ ուղիղ ընթանայ, որ երկնաւորք ոտիւքն կաղ լցէ.
Երկնայնոց ձեռաց յաջողակ էր այրն :
Յանչափ քաջութ սրտի մանկանցն եօթանեցունց :

Զատական Թուականք.

Որք միշտ նախադասին դիւականի, և սովորաբար անհամաձայն դնին 'ի թիւ և 'ի հոլով. զոր օրինակ.

Զարեալ տարերցս խառնուածոց լինել հմուտ .
Եօթներեալ և չեաներեալ աւուրքք և ամօք .

Կրկնական Թուականք.

Որք սովորաբար նախադասին դիւականաց՝ աւանց համաձայնելոյ, բայց 'ի նախդրիւ հոլովմն համաձայնին. զոր օրինակ.

'Ի միջին երևի երեքպատիկ վայելչութն ձև :
Հատոյց զփոխարէնն տասնապատիկ յաւելուածով :
Ընդ միոյն վեշտասնապատիկն փոխանորդէ օգուտս :

---

## ԳԼՈՒԽ Ի.

### Համաձայնութիւն Դերանուան :

ա. Համաձայնութ դերանուան կրկնակի նկատի. մի՝ ընդ այլ մասունս բանի, և միւս՝ ընդ այլ դերանուան :

Ըստ առաջնոյն, նախ՝ համաձայնի ընդ բայի, և լինի տէր կամ խնդիր.

Երկրորդ՝ ընդ նախդրութն, և լինի խնդիր նորա.

Երրորդ՝ ընդ անուան, և լինի կամ բացայայտիչ և բացայայտեալ, կամ յատկացուցիչ, կամ խնդիր, և կամ իբր դիւական և ածական :

Ըստ երկրորդին՝ համաձայնի ընդ այլ դերանուան իբրև ածակից նորին ՚ի բանի, և կամ իբր ածական։

է. Դերանունն յորժամ համաձայնի ընդ այլ մասունս բանի, վարի իբրև անուն, և պահէ զկանոնս համաձայնութե անուան։ Աւստի ընդ բայի համաձայնեալ՝ լինի տէր կամ խնդիր, եթէ միայնակ իցէ եդեալ, և եթէ ածակցութեամբ այլոյ դերանուան։

Տէր բայի. օր. Սա արար զմեզ, և մեք ոչ էաք.
Սա ինքն է տէր քո երկիր պագցես նմա.
Խնդիր բայի. օր. Յիշեա՛ զիս տր̃ զաւազակն.
Զքեզ ինքնին կացուցի ինձ դատաւոր.

ը. Ընդ նախադրութե համաձայնեալ՝ լինի խնդիր. օր. Ահ դ̃անեմ զքեզ՝ ընդ որում օրհնեմք զՔս.
Նուիրեցի վն̃ է՛ այսու մատենիւ պաղատանք նոցին.

թ. Ընդ անուան համաձայնեալ լինի բացայայտիչ և բացայայտեալ.

Բացայայտիչ. օր. Երկու կողմանցդ լինիցին մեզ. (յ̃) նոյա և ջէղ.
Բացայայտեալ. օր. Եւ (յ̃) հովիւս յանցեայ. դաս (յ̃) ուխտապդ զի̃ արարին.
Յանկացուցիչ. օր. Տէր ես և աստուած ես.
Խնդիր. օր. Ընձեռն ՚ի ջէնջ աստացէ.
Վասն թշնամանացն քոց զէս եղև այդ.

Ըայս ամ ըստ բաւականին տեսանի ՚ի կանոնս համաձայնութե անուան. մնայ նշանակել աստէն զհամաձայնութի նորա ըստ անուան իբրև ածական և գոյական. և ապա զհամաձայնութի նորա ընդ այլ դերանուան։

—

## ՅՕԴՈՒԱԾ · Ա.

Եական դերանունք. Ես. դու. ինքն.

ա. Սոքա միշտ գոյականապէս վարին. և առնուն ածական ինքեանց զանուն կամ զընդունելութիւն,

նախադաս կամ յետադաս լինելով նոցա, համաձայն ՚ի հոլով և ՚ի թիւ. զոր օրինակ.

Մեք անմիտք զվարս դորա մոլորութիւն համարեաք.
Ցնծացաւ արարիչն ՚ի գտանելն զկորուսեալս զնոյն.
Ի քէն տէր հայցեմ ՚ի մարդասիրէդ ինձ բժշկութիւն.

ը. Ինքն՝ բաց ՚ի լինելոյ երրորդ դէմ, վարի ևս անուանբեր դիմաւ, և նշանակէ ինքնական, բուն. և իբրև ածական յարի ՚ի դիմական անուն յառաջ կամ զկնի. որ. Տէրն ինքն էր անբնակ. ինքն քաղաքն խախտեցաւ.

Սոյին նշանակութբ յարի յայլ եւս դերանուանս, յետադաս միշտ և համաձայն ՚ի հոլով և ՚ի թիւ. որ.

Ինչ ինքեան ժողովեմ զինչս.
Զայս խրատեմ, և ես ինքն անփորձ եմ.
Զնա ինքն շալակաւ շրջեցուցանէին.

Ցուցական դերանունք. սա. դա. նա.

թ. Սոքա զերրորդ դէմս ցուցանեն կարգաւ. և յատկապէս ՚ի վերայ անձանց առին, թէպէտ գոյ և ՚ի վերայ անանձն իրաց ևս. որ. Եկն ՚ի նա, և ոչինչ եգիտ ՚ի նմա. ‖ պտուղն ՚ի թզենին.

ժ. Դոյականք են յատկապէս, առնուն զածական անուանս և զընդունելութիւնս յառաջոյ կամ զկնի, համաձայնեալք ՚ի հոլով և ՚ի թիւ. զոր օրինակ.

Դոքա յետինքդ մի ժամ գործեցին.

Այնպէս յարին ընդ ինքն դերանուան իբրև ընդ ածական. որ. Սա ինքն տաց. դա ինքն լուաւ. նա ինքն ուսոյց. Նոյն ըստ այսմ ինքն կարէ յառաջոյ դնիլ. որ. Ինքեանք սոքա տեսցեն.

ժա. Ծակցեալ ընդ դերանուանս այս, այդ, ևն, ՚ի միասին իբրև նոյն դերանուն յարին յայլ դոյական, որպէս թէ լինէին ածական նմին. զոր օրինակ. Սա այս Արամ. դա այդ Տիգրան. նա այն Վահան. ևն.

Բայց յայս ոչ մարթ է ևս զգայական անուանն բացա-
յայտիչ համարիլ դերանուան.

Ցուցականքն՝ Սոյն. դոյն. նոյն.

ա. Սոքա ածականք են, և սովորաբար նախադասին գոյականաց. է զի անհամաձայն դնին ըստ հոլովոյ կամ ըստ թուոյ, և է զի համաձայնին. ուստի միօրինակ ասին, ՚ի սոյն տեղւոջ, կամ ՚ի դմին տեղւոջ. նոյն իրաց, կամ նոյին իրաց :

Բայց յաճախ և վայելչագէս համաձայնին ըստ հոլովոյ, և դուն ուրեք ըստ թուոյ. Օր. Ըստ նմին բանից. վասն նորին մեղաց. ըստ դմին օրինակի. վասն դոյին իրաց. նովին հոգւով. նովին շաւղօք.

բ. Սակաւ ուրեք յետադասին անուանց, և այն ևս ՚ի նախդրիւ հոլովս, և նախդիրն կրկնի միշտ. Օր.

Եւ զտէր զնոյն զՔս սուրբ առնիջիք ՚ի սիրտս ձեր.
Ճանապարհ ընդ որ եկն ընդ նոյն դարձցի.
Յորոգայթ ՚ի նոյն անկցին.

գ. Փոխադրութ հոլովոյ յաճախ երևի յայսոսիկ. Օր.
Ըստ նմանութե. || փոխանակ ասելոյ, սովին.
Նովին ախտից ծառայեր. || փոխանակ, նոցին.

դ. Բաղում անգամ լծակցին ընդ ցուցականսն, այս, այդ, այն, առ ՚ի սաստկացուցանել զնշանակութիւնն. Յառաջ կամ զկնի դնին համաձայն հոլովով և թուով սովորաբար, առ որս կրկնի նախդիրն. Օր.

Վասն սորին այսորիկ յայտնի նշանակեաց :
Սմին այսմիկ զամենայն փոյթ ՚ի մէջ առեալ :
՚Ի նմին յայսմ ժամանակի վրդովեցաւ աշխարհն :

Բայց սակաւ ուրեք անհամաձայն ևս դնին. Օր.
Սոյն սոքա առաջնորդք եղեն չարեաց :
Սոյն այն հակառակ կացին կամակորութե :

Ե․ Երբեմն յարի ՚ի սոսա և դերանունս ինքն՝ յետադաս լինելով․ Սոյն ինքն․ դոյն ինքն․ նոյն ինքն․ և միայնակ առանց ցուցականի վարեալ՝ նշանակեն իբր ցուցական․ Որ․

Նոյն ինքն որ զայս բան տպաւորեաց ․ ‖ Որ նա ինքն ․
Սոյն ինքն մատուցումն առնէ ․ ‖ Որ սա ինքն ․

Զ․ Իսկ եթէ յարեսցին յայլ ցուցական անուն՝ կամ ՚ի դերանուն էական, նշանակեն ածականապէս ․ և նախադիրն կրկնի ՚ի նախադաս դերանունն և ՚ի յետադաս ցուցականն կամ ՚ի դերանունն ․ զոր օրինակ․

Զդոյն ինքնդ զգիրդ զոր կարդեսցես հոլով ․
՚Ի նոյն ինքն յաւուր երևեցաւ հոգի մարգարէութե ․
՚Ի նոյն ինքն ՚ի մեզ հաստատեցաւ աւետիքն ․
՚Ի նոյն ինքն ՚ի նա դարձուցանէ զյանդիմանութիւն ․

—

## ՅՕԴՈՒԱԾ․ Բ․

### Ցուցականք․ Այս․ այդ․ այն․

Սոքա յատկապէս ածականք են․ առին անձանց և իրաց ․ ՚ի վերայ անձնաւորաց ասացեալ՝ կարեն նշանակել իբր ցուցական ․ զոր օրինակ․

Այս են ծնունդք որդւոցն Նոյի ․ ‖ Որ սոքա են ․
Այդք ամենեքեան էին ՚ի կալանս ․ ‖ Որ սոքա ամենեքեան ․
Այդք ևս ամաչեցեալք դարձցին ․ ‖ այսինքն դոքա ․

Ընդ ցուցականի կարեն նախադաս կամ վերջադաս կարգիլ՝ այսու որոշմամբ, զի ուր նախադաս են՝ սովորաբար ունին զհոլովն ․ Այսր, այսմ, այսց, եւլն․ իսկ ուր յետադաս են, դնին՝ Այսորիկ, այսմիկ, այսոցիկ, եւլն․ Իսկ եղանակք համաձայնութեան սոցա են ըստ յաջորդ կանոնացդ ․

### Կանոն․ Ա․

Ա․ Յորժամ նախադաս են ցուցականին, սովորաբար համաձայնին ՚ի հոլովս և ՚ի թիւն, մանաւանդ ընդ

մէջ լինելով այլոյ բառի . և նախդիրն դնի առաջնոյն միայն . ուստի ասի , Ո՛յր իրի . այդու բանիւ . այնց գործոց . յայդց քաղաքաց . ևն .

Բայց 'ի նախդրիւ հոլովս յոքնականին ոչ ասի բնաւ , Զայս գործս . յայդս բանս . այլ եզակի դնին , կամ ըստ միւս հոլովոյն , այսպէս . Զայն գործս . յայն տեղիս կամ յայնոսիկ գործս , յայնոսիկ տեղիս .

Ե . Բաղուանդամ անհամաձայն հոլովով դնին այս ցուցականք , կամ փոխադրութբ հոլովոյ , եզական կամ յոքնական 'ի տեղի միմեանց . զոր օրինակ .

Ոյս բանիւք ես բանայ զմիտս կուրին :
Ընդէ՞ր է կորուստ այդ իւղոյդ :
Յայնմ ժամանակաց հետէ . || փխնկ , յայնց ժամանկց :
Այն ժամու զմեռեալ մարդն . || փոխանակ , զայնր :
Յառաջ քան զայս աւուրս . || փոխանակ , զայսոսիկ :
Այսու աւուրբք եկն իշխանն . || փխնկ , զայսոքիւք :
Ոյն խորհրդով ասէր մարգարէն . || փոխանակ , այսու :
Հանդերձեալ էր աստուած այպանել զայնց ժամանակի ծնեալս . || փոխանակ , զայնր ժամանակի :

Զ . Յորժամ 'ի մէջ նախադաս ցուցականին և վերջադաս գոյականին անկանին այլ բառք , նախդիրն կարէ դնիլ առաջնոյն միայն , կամ երկուցն ևս . որպ :

Այն որ յառաջ քան զաւակունն մի պատուեալ էր մարդն . || այսինքն զայն մարդն .
Որոց զայս ընդ միմեանս երդմունս արարեալ էր . || որ զայս երդմունս :
Այս մեծ և փրկագործ աւարտեալ 'ի մահուն իւր քս զխորհուրդ . || որ զայս մեծ խորհուրդ աւարտեալ .
Յայն զնոսա բերեր 'ի մարդս . || որ յայն մարդս :

Կանոն . Է .

Ա . Ցուցականք յետադաս եղեալ գոյականին՝ ըստ կանոնի ածականաց համաձայնին 'ի հոլով և 'ի թիւ .

Բայց այսու տարբերութ՟ , զի նախդիրն կրկնելի է սովորաբար 'ի յետադաս ցուցականն . և 'ի գոյականն յարի յօդ ըստ ցուցականին . որ՟ . Քաւեալ ես յերդմանէդ յայդմանէ : Այլ յերկոսին եզակի բացառականսն կրկնի նախդիրն . և յօդն դ եդեալ կայ 'ի գոյականն՝ համեմատ ցուցականին այդ . Ըստ այսմ են և 'ի սոսին . Ընդ այրդ ընդ այդ . 'ի տարւոջն յայնմիկ . 'ի պատուիրանացդ յայսցանէ . զաւնէն զայնմանէ . 'ի չարեացդ քոց յայդցանէ . 'ի մասինդ յայդմիկ . անուամբս այսուիկ . Թղթովդ այդուիկ . ևա՟ .

Է . Բայց գտանին խոտորումն 'ի կանոնէս յայսմանէ փոխադրելով զհոլովսն , կամ եզական փոխանակ յոգնականի դնելով , մանաւանդ յուղղական հոլովս . որ՟ .

Սուրբք այս անցին խուովութ՟ . || փոխանակ , այսոքիկ .
Պաշինքս այս եղեն ընդունայն . || փոխանակ , այսոքիկ .
Զարհուրեալք յաներևոյթ տեսլենէն այնորիկ . || փոխանակ , յայնմանէ .
Զգուշանալ 'ի կարևորացս այսոցիկ . || փխնկ , յայսցանէ .
Անխառն յերկնաւոր խաղաղութենէս այսորիկ . || փոխանակ , յայսմանէ .
Յիշատակօքս այսուիկ . || փոխանակ , այսոքիւք .

Ը . Զայս ևս գիտել արժան է յամենայն օրինակս , զի նախդիրքն յ , ց , զ , սովորաբար միշտ կրկնին 'ի յետադաս ցուցականն . զոր օրինակ .

ԶՆշանդ զայդ կրեմ 'ի պահպանութ՟ անձին իմոյ .
Ապրեցո զիս տէր յորոգայթէ յայսմանէ .
Իբրև զեղէգն կլլեսցի 'ի հրոյն յայնմանէ .
Ասէ տէր տէր ցոսկերադ ցայդոսիկ .

Թ . Իսկ եթէ իցէ այլ նախդիր կամ նախադրութի , սովորաբար ոչ կրկնի . զոր օրինակ .

Ըստ օրինականս այս առակաւ խօսեցաւ .
Ըստ բարեգործն այն չարահասոյց գտաւ :

Բայց սակաւ ուրեք տեսանի կրկնեալ, կամ փոխեալ ՚ի նախդիրդ ց. օր. Եթէ հանդերձեալ եմք մտանել առ աստուած՝ հակառակօքն վարեսցուք առ կառավարութիւն առ այսոսիկ: Մատի առ Թշուառականդ ցայդոսիկ:

ե. Նոյն եթէ ընդ, ըստ, նախադրութիւն իցէ, կրկնի բազում անգամ, բայց մերթ է եւս զանց առնել. օր.

Ընդ առնս ընդ այսմիկ. ընդ ժողովրդեանդ ընդ այդմիկ:
Ընդ արձանս ընդ այս. ըստ ամենայն բանից այսոցիկ :
Ըստ ամենայն տեսլեանս այսորիկ. եւն:

զ. Սոյնպէս որպէս երեւի յօրինակդ, զի յորժամ նախադաս իցէ գոյականն, առեալ ունի զյօդս ս, դ, ն. բայց դատանի եւս, զի չէ առեալ զյօդ. օր.

՚Ի ժամանակի յայսմիկ. յորդայթէ յայսմանէ. յաւուր յայնմիկ. յօրէ յայնմանէ. եւն:

է. Նոյն երբեմն անյօդ Թողեալ նախադաս գոյականն, դնի փոխանակ յօդի դերանուն ստացական, կամ բառդ սոյ, դոյ, նոյ, եւն. օր.

Ժողովուրդ դա այդ. զաւակի դոյն այդն :
Ուրախ եղիցին անձինք ծառայից դոյ այդոցիկ :
Փոխեցաւ ՚ի տեղւոջէ սորին յայսմանէ :
Տացես զփրկութիւն ժողովրդեան դոյն այդն :
Բժշկեա ՚ի հիւանդութենէ սորին քոյդ յայսմանէ :
՚Ի ժամանակի սորա յայսմիկ հատուցանելոց իցես :
Արբեցարուք յազգէ սորին խոտորելոյ յայսմանէ :

ը. Պիտելի լիցի եւ այս, զի երբեմն մի եւ նոյն ցուցական՝ կամ նման նորա կրկնի ՚ի միում բանի. օր.

Զայն ամենայն որ ինչ միանգամ ՚ի ձեռն յասոնեայ ցուցեալ է, զայս ամենայն ջանասցուք ՚ի մէջ բերել:
Զայն Մովսէս զոր ուրացանն, զնա աստուած իշխան եւ փրկիչ առաքեաց:

թ. Երբեմն ցուցականն կրկնի ընդ իւրում ցուցելոյն. օր. Զծնողսն եւ զվարժապետսն՝ զայն ՚ի նոյն Թողուք,

և զկարճառօտ բանն 'ի համառօտ կացուցանել՝ զայն մեք ոչ դանդաղեցաք։ Ուր յերկուս տեղիդ հայցականն զայն առեալ զնի՝ խնդիր բայիցն նողայ, դանդաղեցայ. որք արդէն ունէին խնդիր զծղտէն, և զնայուցանէն. Այնպէս է և այս։ Ործնեն և նկարեն՝ այն 'ի զարդարիչ անդր հայի.

—

## ՅՕԴՈՒԱԾ. Գ.

### Ստացական դերանունք։

Սորա ածականք են, և փոխին 'ի բանի կամ միայնակ, և կամ ընդ գոյականի իւրեանց՝ այսպիսի կանոնօք։

Կանոն. Ա.

Ա. Ստացական դերանունն միայնակ առանց գոյականի դնեալ, ունի կից սովորաբար զդիմորոշ յօդ, կամ զհամազօր նմին՝ այդ, անդ, զք. Օր. Քո է ամենայն ինչ, և 'ի քոյոց տուաք քեզ։ Իսկ ստացականն 'ի քոյոց դիմորոշ յօդիւ կայ, զորութիւն ունելով զգոյականն. զք 'ի քոյոց արարածոց։ Ըստ այսմ է և 'ի սոսին։

Սերայնովս զքոյինսդ ծանուցանող հրաշապէս ։
Յորժամ սուտ խօսի, յիւրոց անտի խօսի ։
Ողձալի համարիմ առել 'ի քոյոց այտի ։

Բ. Սակաւ ուրեք երևին առանց յօդի կամ նման բառից. Օր։ Եթէ քոյոց և մանաւանդ ընտանեաց խնամ ոչ տանիցի։ Զխորդ որ զայլս ունիս, իբր 'ի քոյոց մեծարիս։

Կանոն. Բ.

Ա. Ածանցեալ ստացականք՝ Իմային, ձերային. կամ իմոյին, ձերոյին, և այլն՝ սորա, դորա, միշտ նախադաս լինին գոյականին, և ոչ երբեք յետադաս։

Բ. Զևացեալքն ային վերջաւորութիւն՝ անհամաձայն ըստ հոլովս դնին առ գոյականն. Օր։

Իմոյին համազուգաւ․ Մերոյին նախնեացն․ Քոյին մարմնով․ Ձերոյին բնութեամբս․

գ․ Իսկ կազմեալքն այն կամ այէն վերջաւորութ․ համաձայնին սովորաբար ընդ դիմականին ՚ի հոլովս և ՚ի թիւն․ որ․ Մերայնոյ փառացն․ Ձերայոյն հանգեղից․ ըստ Մերայոյնս բանի․ Տէրայոյնդ տեսութե․ Մերայոյին զօրօք․ Նոցայոյն կոչից․

Կանոն․ Է․

ա․ Ստացական և բուն ստացականքն՝ Իմ, քո, մեր, ձեր, իւր, յարին ՚ի դիմական անուն կամ յընդունելութի՝ յառաջոյ կամ զկնի, համաձայնելով ընդ նմա ՚ի թիւ և ՚ի հոլով․ ուր նախադասն միայն առնու զնախադիր՝ թէ դերանուն լինի այն և եթէ անուն․ որ․ Յինէն Մերմէ․ Յերկրէ Քումմէ․ Ցամենայն գործոց Մերոց․ Յոսկերաց Իմոց․ ՚ի Քոյ ընչից․ ՚ի Քումմէ բարերարութենէ․ ՚ի Քում ականդ․ Յականէ Քումմէ․ Ըստ ազգի Մերում․ Ըստ պատկերի Մերում․

բ․ Իսկ ՚ի յոգնակի ուղղականն, և ՚ի նախդրիւ հոլովս յետադաս ստացականն ոչ համաձայնի․ զի օտարախորթ է ասել․ Բանք իմք․ գնացք ձերք․ որդիք քոյք․ Թշնամիք իւրք․ կամ ՚ի բանս իմս․ զգործս քոյս․ զթշնամիս իւրս․ այլ ասելի է․ Բանք իմ․ ՚ի բանս քո․ զգնացս ձեր․ ՚ի թշնամիս իւր։ Իսկ դերանունն կամ համարի ստացական իբրև անձական յարեալ յանունն անհամաձայն թուով․ և կամ սեռական հոլով եականին իբրև յատկացուցիչ եդեալ։

գ․ Բայց տեսանի բազում ուրեք արտաքոյ սովորական կանոնի անհամաձայնութի հոլովոյ կամ թուոյ․ որ․
Իմոյ իմաստութե անսայ․ ‖ փոխանակ ասելոյ, իմում․
Իմոյս ձեռաց կոչեցի կորուստ․ ‖ փոխանակ, իմովք․
Մեռան այսպաեալ Քոյդ պարգևաց․ ‖ փոխանակ, քոց․
Յիւրում խորանէ տաւսքեաց․ ‖ փոխանակ, յիւրմէ․

Դ. Եւ որպէս փոխանակ սաստկականի բաղում ուրեք սեռական հոլով էական դերանուան դնի, այնպէս փոխանակ էական դերանուան զսաստկականն վարեն հեղինակք, զոր աներևոյթ բային փոխելով 'ի սաստկական ածական. որպ.

Ի լսել իմոյ . | փոխանակ ասելոյ, իմ .
Յաղաչել քոյ . | փոխանակ, քո .
Ի խոնարհել մերոյ . | փոխանակ, մեր .

Այլ դերանուանքն՝ տէր աներևոյթ բայիցն ճանաչին, քան թէ ածական նոցին.

—

## ՅՕԴՈՒԱԾ . Դ.

### Համաձայնութիւն յարաբերական դերանուանս Որ.

Ա. Պարտ է ուշել զյարաբերական որն 'ի հարցականէն . զի հարցական որն ածական է, և ըստ կանոնի ածականաց վարի . և ոչ ընդու զանցեալ բառ ինչ կամ զբան յառաջ բերէ . այլ ցուցանէ զորպիսութիւն մտաւոր գոյականին առ որ յարի . որպ . Որով չափով չափէք . որոյ հոգւոյ էք դուք . յորում ժամու գայ . ևն.

Բ. Իսկ յարաբերականն որ կամ կրճատեալն ո՝ միշտ իբր գոյական նշանակէ, և ունի առանձին կանոնս համաձայնութեան . և կարէ յառաջ բերել 'ի բանի անդ զնոյն մասունս բանի . այս զանուն, զդերանուն, զբայ, այլև զբաղում բառս, կամ զամբողջ իսկ բան.

Գ. Եւս և բաղում անգամ յարաբերեալ անունն կամ դերանունն զօրութ. իմացեալ լինի 'ի բանի, և փոխանակ նորա դնի յարաբերականն . և լինի որ կամ խնդիր բայի, յատկացուցիչ, խնդիր անուան կամ նախադրութե., ևն.
Այս ամենայն տեսանի 'ի յաջորդ օրինակդ.

### Կանոն . Ա.

Ա. Յարաբերականն ներգործութեամբ ունելով զիւր յարաբերեալն՝ ըստ բնական շարին պահանջէ յետադաս

լինել . քանզի յայն սակս դնի , զի 'ի մէջ բերցէ զկա-ւաջ ասացեալն . Օր. Ետ նոցա աստուած հոգի յի-մարութեան . աչս՝ որովք ոչ տեսանիցեն , և ականջս՝ որովք ոչ լսիցեն . || Ուր յարաբերեալքն աչս , ա-կանջս , են նախընթաց . և յարաբերականն որովք՝ ե-դեալ կայ յետադաս . Ըստ այսմ է և այս .

Հաց ոչ ունիս , որով բուծանես զաղքատն . այլ ընդ-ունիս , որով զհոգևորական հացն նց քաղցրացուցանես .

Է . Սակայն բազում անգամ յառաջէ յարաբերականն քան զիւր յարաբերեալ , ընդ մէջ անկանելով այլոց ևս բառից . Օր. Իբրև գիտացին որ 'ի Թեսաղոնիկէ հրէայքն էին . || փխնկ , գիտացին հրէայքն՝ որ 'ի Թեսաղոնիկէ էին .

Լուաւ 'ի նմանէ որ վասն 'ի ք̃ս յ̃ս հաւատոյն . || փխնկ , լուաւ 'ի նմանէ վասն հաւատոյն , որ է 'ի ք̃ս յ̃ս .

Իսկ որ 'ի լուսոյն հրաւիրեցաւ հայրն ա̃ծ ազգեաց , չի-ջոյց զխայթոց մահու . || փոխանակ , հայրն ա̃ծ ազգեաց՝ որ 'ի լուսոյն հրաւիրեցաւ , չիջոյց , եւն .

Զի եթէ որ 'ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ բանն՝ հաս-տատուն եղև . || փոխանակ , զի թէ հաստատուն եղև բանն , որ խօսեցաւ 'ի ձեռն հրեշտակաց .

Ընդ քեզ բուսանին՝ զոր ընդ քեզ թաղեցեր՝ արդա-րութիւնքն կամ մեղքն . || փոխանակ , ընդ քեզ բուսանին ար-դարութիւնքն կամ մեղքն , զորս ընդ քեզ թաղեցեր .

## Կանոն . Է .

ա . 'Ի բանի՝ ուր զօրութեամբ կայ յարաբերեալն՝ որ սո-վորաբար իմանի դերանուն ինչ , յարաբերական նորա ըստ կանոնի դնի յայն հոլով՝ յոր դնելի էր յարաբե-րեալն եթէ կայր , առանց հայելոյ 'ի պահանջումն բայի յարաբերականին . զոր օրինակ .

Երևի որոց ոչ թերևհաւատեն 'ի նմանէ . || փոխանակ , երևի այնոցիկ որք ոչ թերևհաւատեն .

Մի՛ ինչ եկեսցէ 'ի վերայ իմ յորոց դուքդ ասացէք .
|| փխնկ , մի՛ եկեսցէ ինչ յայդցանէ զորս ասացէք .
Եղիցիս վկայ առ ամ̃ մարդկան՝ որոց տեսերն և լուար .
|| փոխանակ , եղիցիս վկայ այնց իրաց զորս տեսեր .

բ̃ . Բայց երբեմն այս կանոն ոչ պահի . իբր զի յարաբերականն դնի ըստ պահանջելոյ բային իւրոյ , առանց հայելոյ 'ի հոլով յարաբերելոյն . ո̃պ .
Զի որ 'ի ներքս անդ էին , ինքնին յուդա զէն և նետ մատուցանէր . || փոխանակ , որոց 'ի ներքս էին մատուցանէր . բայց դնի որ՝ զի է տէր բային էին .
Որում խնդրէ 'ի քէն տուր , և որ կամի փոխ առնուլ 'ի քէն , մի՛ դարձուցանէր զերեսս . || Ուր յառաջին մասին ըստ կանոնի եդեալ է տրական որում . և իմանի , այնմ՝ որ խնդրէ 'ի քէն , տուր .
Իսկ յերկրորդ մասին պահի ուղղական՝ որ բային կայ , փխնկ դնելոյ յորմէ կամի փոխ՝ մի դարձուցանէր զերեսս .
Ամ̃ որք սաղմոսիւք և օրհնութ̃ կատարէն զամ̃ ժամանակս կենաց իւրեանց . || ո̃պ վասն այնոցիկ որք սաղմոսիւք , և այլն .

գ̃ . Իսկ երբեմն ներհակ այսմ՝ ներգործութ̃ դնի յարաբերեալն , և զօրութ̃ իմանի յարաբերականն . ո̃պ .
Եւ այժմ փառաւորեա զիս հայր՝ առ 'ի քէն փառօքն .
|| ո̃պ փառօքն որ է 'ի քէն .
Յուսանելով զոր 'ի խոնարհութեն օգուտն , և զառ 'ի հպարտութեն վնաս . || ո̃պ զվնաս որ է 'ի հպարտութէն .
Ընչաւորք են և թագաւորքն , և 'ի նոցանէ սպառնալիքն . || ո̃պ սպառնալիքն որք են 'ի նոցանէ .

Կանոն . է̃ .

ա̃ . Յարաբերականն ներգործաբար ունելով զիւր յարաբերեալ՝ ըստ կարգի յայն հոլով դնելի է , զոր պահանջէ բայն կամ այլ բառ՝ որոյ է խնդիր , կամ տէր , կամ յատկացուցիչ . որպէս երևի յայսմ .

՚Ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ որդւովն՝ զոր եդ ժառանգ ամենայնի · որով և զյաւիտեանս արար · որ է լոյս փառաց ։ || Ուր յարաբերեալն է գործիական որդւովն · իսկ յարաբերողն դնի հայցական, գործիական, և ուղղական ըստ պահանջելոյ իւրաքանչիւր բայի ։

Ը · Բայց երբեմն լինի խոտորումն ՚ի կանոնէս · զի յարաբերականն որն դնի ՚ի հոլով յարաբերելոյն որ ներգործութ կայ՝ այնպէս, որպ յորժամ զօրութ իմացեալ լինէր · Օր ·

Առաջնորդեա՛ ժողովրդեանն այնմիկ ՚ի տեղին զոր ասացի քեզ · || փխնկ, զոր ասացի · համաձայն տրականին ՚ի տեղին ։

՚Ի վերայ սեղանոյ ողջակիզացն՝ որոյ նոր արարին · || փխ զոր արարին · բայց սեռական դնի համաձայն հոլովոյ յարաբերելոյն սեղանոյ ։

Լսել զամենայն զոր հրամայեալ է քեզ ՚ի տեառնէ ։

|| Ուր կրաւորական է բայն · և պահանջէ որ հրամայեալ է · բայց դնի հայցական ըստ յարաբերելոյն զամենայն ։

Ծանեաք զարարիչն մեր՝ զոր ՚ի վաղնջուցն հետէ մոլորեցան հարքն մեր · || փոխանակ, յորմէ մոլորեցան ։

Եւ զինչ հրամայեցաւ առնել յայնցանէ, յորոց հաստատեցին զսա · || փոխանակ, որք հաստատեցին ։

Դ · Եւ երբեմն ներհակ սմին՝ յարաբերեալն դնի ՚ի հոլով յարաբերականին · Օր ·

Եւ զբանն զոր խօսիք մի՛ մնասցէ առ ձեզ · || փոխանակ, և բանն զոր խօսիք · սակայն եդեալ է հայցական համաձայն յարաբերականին ։ Ըստ այսմ է և՚ի սոսին ·

Կոչէր առ ինքն զվասակ, և որք ընդ նմա էին իշխանքն ամենեքեան · || փխ զամենայն իշխանսն որք էին ընդ նմա ։

Եւ ցուցին նմա որդիք նր ընդ ճանապարհն՝ ընդ որ գնաց այրն այ · || փխ ցուցին զճանապարհն ընդ որ գնաց ։

Միայնակեացք որք բնակեալ էին ՚ի վանորայս · ընդ նովին ծաղրոմ արկ · || փխ զմիայնակեացս ը նովին ծաղրոմ արկ ։

Դ. Յայսպիսի ոճս երբեմն ընդ մէջ մտանէ Թարմատարա-
բար դերանուն ինչ՝ առ ՚ի պարզ կացուցանել զբանն. Որ.
Վէմն զոր անարգեցին, նա եղև գլուխ անկեան.
|| Փոխանակ, վէմն զոր անարգեցին, եղև գլուխ ան-
կեան: Ըստ այսմ է և ՚ի սոսին.

Բնածինք և արծաթագին որք էին յազգաց օտարաց,
Թլփատեաց զնոսա. || Ուղ. զբնածինս և զարծաթագինս
որք էին յազգաց օտարաց, Թլփատեաց.

Եւ պատարագքն որք մատչէին ՚ի խորանի անդ, հուր
իջանէր և ուտէր զնոսա. || Ուղ. ուտէր զպատարագսն,
որք մատչէին:

Ե. Իսկ երբեմն յարաբերելին դնի յայն հոլով՝ յոր
դնելի էր յարաբերականն, և յարաբերականն դնի յայն
հոլով՝ յոր դնելի էր յարաբերելին. Որ.

Ապստամբութի ուսուցանես ՚ի Մովսիսէ՝ որոց ՚ի հեթանոսս
ամենայն հրէայք են. || Ուղ. ապստամբութի ուսուցանես
ամենայն հրէից որք են ՚ի հեթանոսս:

՚Ի յուշ բերեալ զոր ՚ի քեզ անճառելի բարեխօսութիւն. || Ուղ.
՚ի յուշ բերեալ զանճառելի բարեմասնութիւնն որ ՚ի քեզ:

Ողջոյն տամ և որոց ընդ ձեզ են պաշտօնէայք քրիստոսի.
|| Ուղ. ողջոյն տամ պաշտօնէից քրիստոսի որ ընդ ձեզ են.

Կանոն. Դ:

Ա. Ըստ համաձայնութե Թուոյ, իբր բնաւոր օրէնք
են, զի յարաբերականն ունիցի զԹիւ յարաբերե-
լոյն. որպէս և յոլովակի պահի. Որ.

Պաշտօնեայք՝ որովք հաւատացէք. || Որ յոքնակի
դնի որոց, որպէս յոքնակի է յարաբերեալն պաշտօն-
եայք: Ըստ այսմ է և ՚ի սոսին:

Մի պատրեսցուք ՚ի շնչաւէտայս՝ որք կախարդեն զզգայութիւնս:
Յաւուրս Նոյի յորս տապանն կազմէր.

Բ. Բայց երբեմն յարաբերականն դնի եզակի առ յոք-
նակի յարաբերեալն. զոր օրինակ.

Մայր իմ և եղբարք իմ սոքա են, որ զբանն աստուծոյ
լսեն և առնեն ։ ‖ փոխանակ, ոյք լսեն ։

Զի ուսանիցին որդիքն քո, զոր դու սիրեցեր ։ ‖ փո-
խանակ, զորս դու սիրեցեր ։

Ծաղկեաց սերմն սրբութեան և այլ մասունք առաքինութեանց,
որով փայլեցին մարդիկ ։ ‖ փոխանակ, որովք փայլեցին ։

գ. Ըստ սմին օրինակի՝ եթէ յարաբերականն իցէ ա-
նուն անեզական, հանրական, հաւաքական,
կամ բազում եզականք, յարաբերականն բազում ան-
գամ դնի եզակի ։ զոր օրինակ ։

Աղօթքն են որ բարձրացուցանեն զմարդիկ առ ած ։

Ամենեքին որ կամիցին աստուածպաշտութեամբ կալ ՚ի
քրիստոս յիսուս, ՚ի հալածանս կացցեն ։

Ժողովուրդ որ գնայր ընդ խաւար, ետես լոյս մեծ ։

Ամենայն ինչ որ աճեցական է, չէ կատարեալ ։

Այսպիսի թեթեւ առհաւատչեօք քաղցրանայ և թե-
թեւանայ լուծն և բեռն՝ որ վասն քրիստոսի ։

Բայց երբեմն դնի յոգնակի ։ զոր օրինակ ։

Տուեալ ժամանակս և տեղիս, որովք զերծանիցին ՚ի չարեաց ։

Ամենայնք որոց ոչ իցեն թեւք և թեփ՝ պիղծ իցէ ձեզ այնք ։

Կանոն . Է ։

ա. Յաւելադրութեամբ՝ բազում անգամ ընդ յարաբերականին
կայ և այլ անուն կամ դերանուն ինչ՝ իբրև բացայայ-
տիչ յարաբերականին . որ ըստ կանոնի բացայայտչին հա-
մաձայնի ընդ յարաբերականին հոլովով և թուով . Որ ։

Որում ոչ կամեցեալ հայկայ հնազանդ լինել բելայ ։
‖ Որ անունս բելայ՝ դնի իբր բացայայտիչ յարաբե-
րականիս որում ։ Ըստ այսմ է և ՚ի սոսին ։

Զոր իբրև տեսին հօտքն զհովիւն բանաւոր ոչխա-
րաց, մեծապէս առլցան ուրախութեամբ ։

Զոր եսայիաս մարգարէ զչարչարանսն կեր-

պատուիրեցից ։ Զորս պարտ է՝ որչափ զօրութիւն իցէ աստուծոյ անտեսին՝ անխախտելի պահել զՇինուածս աստուածաբնակ տաճարացս ։

Որոյ սերմն իւր 'ի նմին ։ ‖ Որ դերանունս իւր՝ դնի իբր բացայայտիչ յարաբերելին իւրոյ ։ Ըստ այսմ է և 'ի սոսին ։

Որոյ ձեռք իւրեանց յանօրէնութեան են ։
Զորոյ դուք չարախօսէք զՏեառնէ ։
Որոյ լի են բերանք նոցա ծաղու ։
Տեղիդ յորում կաս դու 'ի դմա՝ երկիր սուրբ է ։
Զոր մարգարէն աւագափող զնա անուանէ ։
Առ որ մատուցեալ 'ի վէմն կենդանի ։ ‖ առ որ, իբր 'ի վէմն ։

Է ։ Իսկ երբեմն անհամաձայն գտանի 'ի Թիւ ։ որպէս ։
Զոր տալոց և հատուցանելոց ես զանանցական վարձս ։
‖ Որ զանանցական վարձս՝ որ է յոքնակի, դնի իբր բացայայտիչ եզակի յարաբերելին զոր ։ Ըստ այսմ է և 'ի սոսին ։
Յորս յանձնեցան յայտնանէ ազատ են իմանալիքն ։
Զոր չնէրպարտն անցին 'ի մասնէ վերաճառեալքդ նախագրեցին ։ Մեղք կապանք դժուարինք են ողւոց, նաև վէրք տաժանագինք ։ յորդ էկն Քրիստոս արձակել 'ի կապանաց, և բժշկել զվէրս ։

Յարաբերականս որ փոխանակ այլ հոլովոյ դնի ուրեք ուղղական ։ որպէս ։ Դու գիտես՝ որ ինչ խորհին նոքա 'ի վերայ մեր ։ ‖ փոխանակ, զոր ինչ խորհին ։
Որ 'ի սմանէն լեալս ոք ասելով՝ ոչ վրիպեսցէ 'ի ճշմարտութենէ ։ ‖ փոխանակ, զորս 'ի սմանէ լեալս ասելով ։
Ընու որ պակաս գտայ ։ եղէր ամենայն օրինացն պարտական ։ ‖ փոխանակ, որով պակաս գտայ ։
Հատանել յազգէ յայնմանէ՝ որ իրաւունքն աստուծոյ տարամերժեալ տրոհեալ է 'ի նոցանէ ։ ‖ փոխանակ, յորմէ տարամերժեալ տրոհեալ է ։
Հաւատամ թէ յօրն որ եկուր, 'ի նմանէ զհատուցումն առէր ։ ‖ փոխանակ, յօրն յորում եկուր ։

Երբեմն առանց համաձայնութեան եդեալ 'ի բանին , առաւել թարմատար կայ քան թէ յարաբերական . Օր.
Որ տկարանայ առ 'ի քէն և ոչ ինչ .
Որ 'ի ծագել անստուեր նշուլից հալէն մեղք .
Այս սովորութիւն յաճախեալ է 'ի շարականս վասն լրանալոյ չափոյ ոտից .

Սա բազում անգամ 'ի վայելուչ շարադրածս կրկնեալ , ունի զզօրութիւն մասնական բառի . այսինքն ոմն , ոմանք , մասն ինչ , և այլն . Օր.

Զի որ զօրք պարսպապատ 'ի վեր անդ կային , այլ 'ի ներքս այլ արտաքս , 'ի վայր թօթափէին . || այսինքն ոմանք 'ի ներքս ոմանք արտաքս .

Նա երկայնէր ճակատն , զեղջր այլ զբարձամբք լերանցն , այլ զձորովք և զխորովք . || այսինքն մասն ինչ ճակատուն զեղջր զբարձրութեամբ լերանցն , և այլն .

Երբեմն գործիական սորա առեալ լինի իբրև շաղկապ պատճառական , և նշանակէ որովհետև . Օր.

Զի այլով ոչ ցուցէք յեղբարս զսէրն , երթայք 'ի խաւարն արտաքին . || այսինքն որովհետև ոչ ցուցէք .

Եկայք օրհնեալք հօր իմոյ յարքայութիւն . այլով 'ի սակաւուդ հաւատարիմ եղէք , 'ի վերայ բազմին կացուցից . || այսինքն որովհետև 'ի սակաւուդ հաւատարիմ եղէք .

—

## ՅՕԴՈՒԱԾ . Ե.

### Դիմորոշ յօդք , ս , դ , ն .

Ա . Ննշան տառքս ս , դ , ն , կցեալ 'ի վերջս բառից` որոշեն կամ մասնաւորեն զնշանակեալն բառից` ըստ դիմաց և ըստ կարգի մերձաւորութեան և հեռաւորութեան .

Ուստի տառն ս ցուցանէ զառաջին դէմն , կամ զիրն որ առաւել մօտ է խօսողին . Տառն դ ցուցանէ զերկրորդ դէմն , կամ զիրն մօտաւոր առ լսօղն . Տառն ն ցուցանէ զերրորդ դէմն , կամ զիրն հեռաւոր 'ի խօսողէն

Եւ ՚ի լռողէն ։ Հայք առնեն դարձեալ զէրս պատշաճեալս իւրաքանչիւր երից դիմաց ։

Բ. Ըստ գործածութեան ոչ յամենայն մասունս բանի յարին այս յօդք ։ Նախադրութեան, շաղկապ, միջարկութեան, այլ հարցականքս՝ Ով, ո, ինչ. և մասնականքս՝ Ոմն, ոք, իմն, ոչ են ընդունակ դիմորոշ յօդից ։
Եւ ՚ի դերանուանց՝ յարաբերականն միայն չառնու յօդ ։ Իսկ մնացեալ մասունքն՝ Անուն, դերանուն, բայ, ընդունելութիւն, և մակբայ՝ ընդունին զյօդ զանազան օրինակաւ և նշանակութեամբ ։
Ընդհանրապէս երրեակ օրինակաւ ՚ի գործ ածին յօդք ։

Գ. Նախ՝ յորժամ ՚ի բանի զօրութեամբ կայ դերանուն ինչ՝ զոր պահանջէր անունն կամ բայն, դնի յօդ ։ որպէս ։
Արքայդ Իսրայէլի ։ ‖ ուր իմանի դու արքայ ։
Ոչ մեծ թագաւորդ ինքնիշխան է ։ ‖ որպէս այդ թագաւոր որ կայ աստ ։
Տեղիս անապատ է, և օրս տարաժամեալ ։ ‖ այսինքն այս տեղի, այս օր ։
Զինչ իրք են վասն որոց եկիքդ ։ ‖ այսինքն եկիք դուք ։
Ընկալ զփոքրս ՚ի տկարէս, և շնորհեա զմեծդ առ ՚ի հզօրէդ ։ ‖ այսինքն ընկալ զայս փոքր յինէն ՚ի տկարէ, և շնորհեա զայդ մեծ ՚ի քէն հզօրէ ։

Դ. Երկրորդ՝ ուր զօրութեամբ կայ յատկացեալ անունն, կամ գոյականն, կամ այլ ևս անուն, դնի յօդ մանաւանդ ն՝ ՚ի յատկացուցիչն, յածականն, կամ ՚ի խնդիրն նախադրութեան՝ վասն անուանն որ զօրութեամբ կայ ։ որպէս ։
Զի ծերութիւնն պատուական՝ ոչ բազմաժամանակեայն է ։ ‖ Ուր զօրութեամբ իմանի գոյականն ։ որպէս ոչ ծերութիւն բազմաժամանակեայ ։ Ըստ այսմ է և այս ։
Եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն զինչ գործեսցեն ։ ‖ Ուր զօրութեամբ իմանի գոյականն ։ որպէս ընդ փայտ չոր ։
Բարեբանեցէք զ՚ի վերայ քերովբէիցն ։ ‖ Ուր զօրութեամբ

իմանի խնդիրն բային • այ̃ բարեբանեցէք զայն՝ որ կայ 'ի վերայ քերովբէից •

Կերպարանիմ զդաւթին • || Ուր զօրութ̃բ իմանի յառա-կայեալն • այսինքն զնմանութ̃ին դաւթի •

Ե. Երրորդ՝ աւելադրութ̃բ, դիմորոշ յօդք բազում անգամ դնին ուր չպակասին 'ի բանի նախասացեալ ան-ուանք կամ դերանուանք, ոչ վասն հարկաւորութեան՝ այլ 'ի վայելչութիւն միայն, կամ ազդուեան, կամ պար-զութիւն տալ ասացուածոյն •

Դիմորոշ յօդք 'ի վերայ անուան •

Զ. Երբեմն 'ի վր̃ նախադաս գոյականին դնի յօդ • Օր̃ •
Ս՛ա զորդիդ քո սիրեսցես • || Ուր նախադաս գոյականն որդի՝ ունի զյօդ դ •
Երբեմն 'ի վերայ յետադաս գոյականին • Օր̃ •
Արտաքին մարդս մեր ապականի •
Երբեմն 'ի վերայ յատկացուցչին • Օր̃ •
Իւր և հօրն մի են կամք •
Երբեմն 'ի վերայ խնդրոյն • Օր̃ •
Զինչ իցէ 'ի մեռելոցն յառնել • || այ̃ յառնելն 'ի մեռելոց •

Անուանք յոր և իցէ հոլով կարեն ընդունել զերիս եւս յօդս, ըստ որում յօրինակդ է տեսանել • բայց կո-չական անունն առնու միայն զյօդն դ, մանաւանդ յորժամ ունի զկնի իւր յատկացուցիչ, կամ ածա-կան, կամ խնդիր • զոր օրինակ •
Ո՛վ երանելիդ ամենեցուն • մայրդ մահու • խորհրդա-կանքդ առաքինիք • անուանիդ 'ի վկայս •

Դիմորոշ յօդք 'ի վերայ դերանուանց •

Է. Դերանուանք ամենայն՝ բաց 'ի յարաբերականէն ընդունին զդիմորոշ յօդս՝ ոչ այնչափ վասն պիտոյից ինչ իւրեանց, քան թէ առ 'ի զարդ, կամ առաւել սաստ

կացուցանել զնշանակութիւն իւրեանց . ուստի նոյն դեր-անուն կարէ առնուլ զայլ և այլ դիմորոշ , որպէս տե-սանի յառաջիկայդ .

Նախկան առաջին դէմք . Ես .

Յոր եսդ իջանեմ . որպէս մեքս լուաք . որ 'ի մենջն պատուեցան . որ ինձն պատմիցէ . զոր ինչ եսս գործեմ . ուր եսն իցեմ .

Երկրորդ դէմք . Դու .

Զոր դուդ առնես . որում դուն վկայեցեր . զոր դուքն ոչ գիտէք . ընդ որ դուքդ զարմանայք . մինչ առ ձեզս եմ . իբրև զձեզդ էի .

Երրորդ դէմք . Ինք . Ինքն .

Դերանունն Ինք իբրև էական՝ առնու միայն զյօդն . օր . Որդ իւրն է հանդերձեալքն . որ զիւրեաւն էին . Իսկ էականն Ինքն՝ կարէ զերիս ևս յօդս առնուլ . օր . Ինքնս , ինքնդ , ինքնն . 'Ի պատճառս դիմորոշին երբեմն 'ի բաց ձգի ն տառն , որպէս 'ի պատարագամատոյցն . *Սան զի ինքդ է բաշխօղ , և նոյն ինքդ բաշխի 'ի միջի մերում միշտ անծախապէս || . Այնպէս և լամբ-րոնացին . *Նոյն ինքս կարգաւ պատմէ || : Բայց առանց յօդի ևս գրել ինք , չէ ուղիղ :

Է . Դիմական ցուցականքն սա , դա , նա , ընդունին զյօդ՝ իւրաքանչիւր զարմատս իւրեանց յորոց կազ-մեալ են . և 'ի հոլովս վերջացեալս ա , ընդ մէջ յօդին դնի տառս յ՝ առ 'ի քաղցրացուցանել զձայնն . զի վա-տաձայն է ասել . Սաս , դոքադ , նոքան . ուստի ասի Սայս , դոքայդ , նոքայն . օր :

Զոր դայդ մարգարէանայ . զոր դոքայդ անօրինեն .
Զոր նայն առնէ . զոր նոքայն ժողովեցին .
Որ նմայն հաւանեալ էին . որ ընդ նոսայն նստէին :

Թ. Ածական ցուցականքն՝ այն, դայն, նայն, միայնակ եդեալք՝ կարեն առնուլ յօդ. Օր. Այնս, դայնդ, նոյնն. բայց ընդ գոյականի դնեալ՝ նմա դնի յօդն. Օր. Զայն թուղթս. զդայն բանդ. զնոյն գործն.

Իսկ ցուցականքն՝ այս, այդ, այն, միայնակ կամ ընդ գոյականի ոչ վարին յօդիւ սովորաբար.

Ժ. Ստացական դերանուանքն՝ իմ, քո, մեր, ձեր, իւր, նախադաս եղեալք գոյականին՝ վայելչապէս առնուն յօդ. Օր. Իմոյս բանից. քոյովդ թղթովդ. ՚ի մերում աշխարհի. ձերումդ տեսութեան. իւրոյն պարգեւաց. Իսկ յետադաս դնեալք գոյականին՝ ոչ են ընդունակ յօդից. զի ոչ լինի ասել. բանից իմոցս. թղթով քոյովդ. յաշխարհի մերում. տեսութե՛ ձերումդ. պարգեւաց իւրոյն. այլ առադրի յօդն ՚ի նախադաս գոյականն. Օր. Բանիցս իմոց. թղթովդ քոյով. յաշխարհիս մերում, եւն.

Դիտողութ. յօդք ՚ի վերայ բայից.

ԺԱ. Ի բայից՝ միայն հրամայական եղանակն ոչ առնու յօդ. իսկ այլքն ըստ ամենայն սեռի և եղանակի և ժամանակի և թուոյ և դիմաց՝ վայելչաբար և յաճախ ընդունին զյօդ. Օր.

Տո՛ւր այրոյս զօրութի՝ զոր խորհեցայս առնել.
Ո՛չ գոյ բարի ինչ մարդոյ, բայց զոր ուտէն և ըմպէն.
Ես այր տառապեալ՝ զի՛արդ կամս հիացեալ.
Վա՜յ դոցա որ մարգարէանանդ ՚ի սիրտս իւրեանց.
Բաւական է այդ որ ասիդ. Ո՛վ է որ ասէդ ցքեզ.
Ես եմ որ խօսիմս ընդ քեզ. Որ խօսիդ ընդ քեզ՝ նա է.
Զսա զոր տեսանէքս. Արժանի որոց գործեացն.
Որում չեմն արժանի. Գիտէք զի՛նչ արարիդ ձեզ.
Գիտացէ զոր գրեցիդ. Որոյ եղերուքն դուք որդիք.
Որ նզովելոցն է զօրն զայն. Որ զուամբ ածելոցն է զմեծ վիշապն։

Դիմորոշ յօդք ՚ի վերայ ընդունելութեանց.

ԺԷ. Ընդունելութիւն անցեալ կամ ապառնի՝ յորժամ իբրեւ ածական անուն վարի, սովորաբար առնու զայն յօդ՝ զոր պահանջէ անունն կամ դերանունն կից նմին. օր. Զիշխանաց աշխարհիս այսորիկ զխափանելեացս: Ուր դնի յօդ ս՝ համեմատ դերանուանն այսորիկ.
Այնպէս ասի, փրկելոցս մեզ. ձեզ նեղելոցդ. նոցին իսկ կոչեցելոցն.

Դիմորոշ յօդք ՚ի վերայ մակբայից.

ԺԸ. Մակբայն նախադաս եղեալ բային՝ վայելչաբար առնու յօդ. զոր օրինակ.
Որ մտադիւրն ծառայեաց: Զոր յանդիմանն տեսի:
Զիա՞րդ այժմս տեսանէ: Որ այժմս կեամ.
Որպէս եւ կանխաւն ասէի: Որ այնպէսն գնայցեն.
Որ ոչն ունիցի: Յոր ոչն լցեն սոքա մերձ.
Որ ոչդ երկնէիր. Որ չեւդ էք սրբեալ.

# ԳԼՈՒԽ. Գ.

## Համաձայնութիւն բային:

Համաձայնութիւն բայի մտածի ըստ կապակցութեան առ այլ հոլովական մասունս բանի. որ է ընդ անուան, դերանուան, ընդունելութեան, աներեւոյթ եղանակի, եւ այլոց եւս՝ յորժամ իբրեւ անուն վարին.
Ււ այսուիկ յարի բայն, մի՝ իբրեւ առ Տէր բայի, եւ միւս՝ իբրեւ առ Խնդիր բայի. զորոց խօսեսցուք ուրոյն ուրոյն յօդուածովք.

## ՅՕԴՈՒԱԾ · Ա·

### Տէր բայի·

Տէր կամ Անուն բայի ասի, որ նշանակէ զտէր գործողութեան. յն զայն՝ որ առնէ ինչ, կամ կրէ, կամ լինի։ Սոյն ՚ի ներգործական և ՚ի չէզոքական բայս՝ տր̄ բայի է առնօղն. իսկ կրաւորական և էական բային՝ կրօղն։ Տէր բայի լինին՝ Անուանք, դերանունք, եւս և ընդունելութիւնք և աներևոյթ բայք՝ յորժամ իբրև անուն վարին. որպէս երևի ՚ի հետևեալ օրինակդ։ Տէր բային համաձայնի ընդ բային ըստ հոլովոյ, ըստ թուոյ, և ըստ դիմի. և առ ՚ի քաջ հմտութիւն երից այսոցիկ՝ սահմանին այս կանոնք.

### Կանոն · Ա·

Անձնաւոր բայն պահանջէ զտր̄ յուղղկ̄ն հոլով. Օր̄. Խորհուրդք Թիւրք անջատեն յաստուծոյ. ‖ Ուր ուղղականն խորհուրդք է տր̄ ներգործական բային անջատեն։ Անունն մեր մեռուսցի ժամանակաւ. ‖ Ուր անունն՝ է տէր կրաւորական բային մեռուսցի։
Օղի այն է բաժին մեր. ‖ Ուր դերանունս այն՝ է տէր էական բային.
Չար է մեզ և տեսանելն զնա. ‖ Ուր աներևոյթ բայս տեսանելն՝ է տէր էական բային.

### Կանոն · Բ·

Ա. Անդէմ բայն, որպիսի է ընդունելութիւն, աներևոյթ եղանակն, հասարակօրէն առնու զտէր բայի ՚ի հոլովն սեռական. Օր̄. Խորագիտի տեսեալ զչարագործն պատժեալ՝ հաստատուն խրատէ զանձն։ ‖ Ուր սեռականս խորագիտի՝ է տէր ընդունելութեանս տեսեալ։ Ոչ կերեալ երբեք գորա և ոչ արբեալ, մինչև բազմաց

իսկ տալ թէ մեռաւ. Սուր սեռականն բաղձայ՝ է
տէր աներևութիս տալ.
Ընտալ երկնից և իջանել հոգւոյն սրբոյ.

ե. Սուրբ տանու զտէր բային յուղղական հոլովն. որ.
Օնդ օրինակ ծառայք հանդերձ տերամբք տանջեալ,
և ռամիկն թագաւորաւն զնոյն չարչարել. Սուր ուղղա
կանքն ծառայք և ռամիկն են որ անցեալ ընդունելութեանն.
Լուծեալ յոտս ոտից և ձեռաց .
Ընդորժ եղեալ տառնու յս այսօրինակ .
Մի ես լինել ՚ի նմա բնակիչ ՚ի մարդոյ մինչև ցանասուն.
Սուր ուղղականս բնաչիչ՝ է տէր աներևոյթին լինել.
Ծառայք հնազանդ լինել յամենայնի տերանց .
Մերձենալով ՚ի սա Յիսուսին չեանչն, ՚ի լաւ զկառաթարին
փոխեաց զօրութի. Ընդ յորժամ աչադրին էր շարժումն,
մինչ ոչ ոք մնալ ընդ յարկաւ.

զ. Եթէ տէր աներևոյթ բային իցէ դերանուն, և
աներևոյթն է յուղղական և ՚ի նախադրիւ հոլով, դերա-
նունն դնի տրական. զոր օրինակ.
Երթեալ անցանել ինձ յաշխարհն իմ .
՚Ի գալն քեզ զհետ սրբոյն խորայելի .
Ոչ էր հնար ըմբռնել նմա ՚ի նմանէ .
Տեսանել ինձ զվայելչութի տեառն .

է. Իսկ եթէ աներևոյթն է գործիական, դերանունն
դնի սեռական. զոր օրինակ.
Իջանելով իմ. տեսանելով քո. երթալով նորա. եւն.
Այնպէս եթէ որ բային անուն իցէ, յամենայն հո-
լովս դնի սեռական. որ. ՚Ի տեսանել աչաց. խօսելով
լեզուին. հեռանալով այնպիսւոյն, եւն.

ը. Եթէ աներևոյթն ունիցի առ իւր զդիմաւորոյկ բայս
տէր աներևոյթ բային դնի ՚ի տրական հոլով. զի է մի-
անգամայն տրական խնդիր դիմաւորոյկ բային. որ.

Օրէնք է ծննդական և մահկանացու բնութեանս փոխանակել զմիմեանս ։ Ուր բնութեանս է տրական խնդիր դիմաւորական բայիս օրէնն է, միանգամայն և տէր աներևութիս փոխանակել ։
Սուրբ է ինձ սակաւ ինչ ասել, և քեզ մեծապէս ընդունել ։
Չէ պարտ ումեք յուսահատ լինել վ՟ բազմաց մեղաց ։

## Կանոն ․ Է ․

Անցեալ ընդունելութիւն ունելով զսեռական տէր բայի, նաև ՚ի ձևանալն յարակատար և գերակատար ժամանակ ՚ի ձեռն էական բայի, յերրորդ դէմ եզականին վարի սեռական անուամբ յա՟մ դէմս և ՚ի թիւ ․ ը՟ բայն դնի յերրորդ դէմ եզակի, բայց տէր բայի կարէ լինել յառաջին և յերկրորդ դէմ, այլև եզական և յոգնական ․ Օ՟ր ․

Տեսեալ է իմ, տեսեալ է քո, տեսեալ է նորա ․
տեսեալ էր իմ, տեսեալ էր քո, տեսեալ էր նորա ․
Տեսեալ է մեր, տեսեալ է ձեր, տեսեալ է նոցա ․
տեսեալ էր մեր, տեսեալ էր ձեր, տեսեալ էր նոցա ․
Տեսեալ իցէ իմ, տեսեալ իցէ քո, տեսեալ իցէ նորա ․
տեսեալ իցէ մեր, տեսեալ իցէ ձեր, տեսեալ իցէ նոցա ․

Այսմ ոճոյ հետևողութի ինչ երևի ուրեք, յորժամ ընդունելութիւն ընդ էական բայի՝ ոչ իբրև անցեալ ժամանակ նշանակէ, այլ իբրև անկատար սահմանականին ․ Օ՟ր ։
Անդ սպանեալ լինէր նոցա զտիմոթէոս ․ փոխանակ ասելոյ, անդ սպանանէին նոքա զտիմոթէոս ։

## Կանոն ․ Ը ։

Ա ․ Հայցական հոլովն ոչ լինի տէր բայի ․
Նախ՝ երևի ուրեք հայցականն տէր բայի, բայց ոչ է ․ զի գտանի անդ յայտնի կամ լռելեայն ներգործական բայ ինչ, որում խնդիր սեռի հայցականն ․ Օ՟ր ․
Գուցէ կործիս ինչ տացէ թագաւորին, իբրև դաւով

ժէ

ինչ 'ի նմանէ կամ 'ի հրեից անտի զայրն մկրտեալ.
Այր զայրն՝ ոչ է որ անցեալ ընդունելութեան վնասեալ. զի
չարժիս բայց՝ իբր ներգործական իմանի աստ. || Ո̅ւ դուցէ
կարծեսցէ թագաւորն զայրն մկրտեալ դառնալ 'ի հրեից.
Ոչ պարտիմք համարել ոսկւոյ կամ արծաթոյ զա̅ծականն
լինել նմանօղ. || Ո̅ւ ոչ պարտիմք համարել զաստուածա-
կանն՝ լինել նմանօղ ոսկւոյ կամ արծաթոյ.
Ախորժելի է ինձ զձեզ ըստ մարմնոյ ազգականս՝ լի-
նել ինձ մտերիմ ազգականս և ըստ հոգւոյ. || Ո̅ւ ախոր-
ժեմ զձեզ ազգականս՝ լինել ինձ մտերիմս.

Բ. Երկրորդ՝ երևի ուրեք հայցականն եդեալ իբր տ̅ր
կրաւորական բայի, բայց ըստ նշանակութեան ոչ է կրա-
ւորական՝ այլ ներգործական. որում խնդիր լինի հայ-
ցականն և ոչ տէր. Օ̅ր. 'Ի տասանորդէ զմեղս ձեզ
թողեալ լիցի. || Ո̅ւ թողումք ձեզ զմեղսն.
Զիշխանութ̅ն զամբիդ 'ի ներքս տանել լիցի ցքահանայա
պետդ. || Ո̅ւ տարք զիշխանութ̅ն ամբիդ ցքահանայապետդ.
Ահա շնորհեալ է քեզ յա̅յ զամենեսեան՝ որ են ընդ
քեզ 'ի նաւիդ. || Ո̅ւ շնորհեաց քեզ ա̅ծ զամենեսեան.
Յայս ոմ վերաբերի և ասելն. Զգունդն երկրորդ
ընդ իմով ձեռամբ է. || Ո̅ւ ընդ իմով ձեռամբ ունիմ
զգունդն երկրորդ.

Գ. Երրորդ՝ երևի ուրեք հայցական դերանունն տէր
բայի, բայց է խնդիր. իսկ տէր բային զօրութ̅ կայ. Օ̅ր.
Եդ 'ի գերեզմանի, զոր էր փորեալ 'ի վիմէ. || Ո̅ւ զոր
ինքն փորեալ էր.
Մարեմաւ հանդերձ զոր խօսեցեալն էր նմա. || Ո̅ւ զոր
ինքն խօսեալ էր.
Զի չև ևս արկեալ էր զՅովհաննէս 'ի բանդ. || Ո̅ւ չև
ևս արկեալ էր Հերովդէս.

Դ. Չորրորդ՝ երբեմն կայ հայցական անուն, ոչ տէր
մերձաւոր բային՝ այլ խնդիր հեռաւորին. Օ̅ր.

Զոր խերև եկն՝ հանին 'ի վերնատունն ։ Որ հայցականս զոր՝ ոչ է ո̃ր էջն բային , այլ խնդիր բայիս հանէն ։

## Կանոն . Ե ։

ա . Տեր դիմաւոր բային սովորաբար համաձայնի ընդ բային թուով . ո̃ր դնի եզական կամ յոգնական , ըստ որում բայն իցէ եզական կամ յոգնական . Որպ ։

Տէր ամենայն՝ և զմահացեալքս նորոգեսցէր ։
Պատիժք ուսուցանեն զզգաստութիւն ։

բ . Բայց գտանի ուրեք հասարակ անուն ինչ անհամաձայն ընդ բային . ո̃ր յոգնակի անուն եդեալ առ եզակի բայ , և կամ եզական առ յոգնակի ։

Յոգնակի անուն առ եզակի բայ . Որպ ։
Ըստ եղև աւերեկայ բանքն եսաւայ ։
Ընմանայն պարտք նորա զերծաւ 'ի նմանէ ։
Մի եկեսցէ 'ի վերայ մեր չարիք ։
Յորում էր ամենայն չորքոտանիք և սողունք ։
Եզակի անուն առ յոգնակի բայ . Որպ ։
Յորժամ պատուիրանապանցութիւն 'ի ներքս մտին ։
Ըստ յաղթական են համայնից քոյդ հաւատովդ ։
Զայսպիսի խոտորմունս կարևոր է գիտել , այլ ոչ 'ի կիր առնուլ վայրապար ։

## Կանոն . Զ ։

ա . Նազրում եզակի անուանք շաղկապաւ միաւորեալք՝ եթէ ո̃ր են միոյ բայի , բայն սովորաբար դնի յոգնակի . Որպ ։

Գինի և արբեցուցի ապականեն զարս իմաստունս ։
Հող և ջուր և օդ պակասութեան ։

բ . Բայց երբեմն բայն դնի եզակի . Որպ ։

Եղև նորա ոչխար և արջառ , ծառայք և աղախնայք ։
Զի բուռնն և սանդղունքն և մխահանքն և գնդակքն և շուշանքն անդ առին 'ի նմանէ էջէ ։

Որ ընթեր սորին գայ արդարութիւն և կշիռքն՝ վճիռն և հատուցմունքն ։

Դ. Անուն ինչ ըստ ձայնին եզական և ըստ նշանակութեանն բազմաւորական, անխտիր վարի ընդ եզական բայի և ընդ յոգնականի ։

Աստի Հանրական անուանք, հաւաքականք, մասնականք, բացարձակ թուականք, եզակի ձայնիւ վարին մերթ ընդ եզական բայի, մերթ ընդ յոգնականի . և երբեմն 'ի միում իսկ բանի երևին երկոքեան . Օր.

Գոչեաց ամենայն այր Եփրեմի, և կալան իւրեանց զանցս ջրոցն ։ ‖ Ուր ամենայն այր է տէր բայիցն գոչեաց և կալան . որոց մին է եզական, և միւսն յոգնական ։

Եւ ժողովեցան առ նոսա ամենայն այր, որ ապստամբեալ էր յօրինաց անտի ։

Այն միաբան բազմութիւն և խռնեցաւ, զի լսէին յիւրաքանչիւր լեզուս խօսել նոցա ։ Եւ ժողովուրդն ակն ունէր զաքարիայ, և զարմանային ընդ յամելն նորա ։

Յարեաւ այլազգ՝ որ ոչ ճանաչէին զտէր .
Զի մի՛ լուիցեն իւրաքանչիւր բարբառոյ ընկերի իւրոյ .
Ոչ իւրաքանչիւր ցեղբայր իւր :
Հինգ ձագ երկուց դանգաց վաճառի :
Հինգն 'ի նոցանէ յիմարք էին .

## Կանոն . Ը.

Անեզական անուանք, կամ որք առաւել յոգնակի վարին, յաճախ յարին առ յոգնակի բայ ։

Որ յոգնակի են Ախտք, կամք, փառք, կեանք, մեղք, հաւատք, շնորհք, օրէնք, եւ այլն . Օր.

Ախտք զբանս քննէն, և քիմք զկերակուրս ճաշակէն ։
Օրէնք զայդ ձև կերպարանաց քեզ ոչ ուսուցանէն ։
Բայց երբեմն յարին առ եզական բայ . Օր.
Կենդանի մաղթանք նոցա այց լինի արարչէ .
Խոտեալ ընէն 'ի մէնջ ձեզ մեղք ակամայ :

Կանոն . Ը .

ա. Ըստ համաձայնութեան 'ի դէմս, եթէ մի միայն անուն կամ դերանուն կայ 'ի բանի, զնորին դէմս պարտի ունել բայն. Օր. Ես միայն մնացեալ էի, և սոքա ուր էին. || Ուր տէր բային ես, և բայն մնացեալ էի, յառաջին դէմն կան. որպէս յերրորդ դէմն, սոքա, էին.

բ. Եթէ բազմադէմ անուանք իցեն 'ի բանի, և բայ միոյ անուան լռելեայն թողեալ իցէ, յայնժամ բայն դնի յայն դէմն, որում մերձ գտեալ անունն խնդրէ. Օր. Կշտամբեսցէ զքեզ քո բերան, և ոչ ես. || Ուր դերանունն ես՝ պահանջէր զիւր բայ յառաջին դէմն. Ի. կշտամբեսցեմ. բայց զի լռելեայն թողեալ է այս, բայն դնի յերրորդ դէմն համաձայն մերձաւոր անուանն քո բերան.

Գ. Եւ եթէ մեք կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ. || Ուր բայն աւետարանեսցէ մերձաւորին համաձայնի, որ է անունս հրեշտակ. և ոչ մեքին որ հեռի է, և լռելեայն ունի զիւր բայն՝ եթէ աւետարանեսցուք.

դ. Իսկ եթէ բազմադիմի անուանց մի բայն իցէ բաւական, սովորաբար դնի համեմատ նախապատիւ դիմին, որպիսի է առաջին դէմն քան զերկրորդն, և երկրորդն քան զերրորդն. Օր. Գալով գայցեմք ես և մայր քո և եղբարք քո, և երկիրպագանիցեմք քեզ. || Ուր բայքն են յառաջին դէմն համեմատ եսին.

Եթէ ես և եթէ նոքա այսպէս քարոզեմք •
Անկանիցիք դու և յուդայ ընդ քեզ •

Կանոն . Թ .

Տէր բային անխտրաբար դնի յառաջ կամ զկնի բային իւրոյ, բաց 'ի յարաբերականէն որ միշտ նախադաս լինի. Օր. Ելեալ ոգին անդրէն ոչ դառնայ. և ոչ պարանի շունչն դարձեալ. || Ուր յառաջնումն հատուածի՝ տէր բային

որ է անուանս ոգւոյն՝ է նախադաս բային ոչ դառնայ ։ և յերկրորդումն հատուածի՝ անուանս շունչն, որ է տէր բայիս ոչ պարանի, դնի յետադաս ։

Կանոն . ծա ։

'Ի բանի՝ երբեմն տէր բային, և երբեմն բայն ոչ դնի ներգործութեամբ . զոր օրինակ ։

Իբրու ոչ եթէ անձին զօրութբ ինչ կամ քաջութբ արարեալ իցէ զգնալդ դմա ։ || Ուր զօրութբ իմանի տէրն արարեալ իցէ բային, որ է բառս Եմք կամ էք ։

Մեք կաւ, և դու ստեղծիչ մեր ։ || Ուր ըստ երևոյթն կայ բայն . որպէս մեք կաւ եմք, և դու ստեղծիչ ես մեր ։

Երկրորդին ևս երևին յայս կարճառօտ ասացուածի . որպէս ։ Այսօր մաքուր հոգեկիր, և վաղիւ մոլի խելագար . || որ այսօր եմ ես մաքուր, վաղիւ լինիմ ես մոլի խելագար ։

—

## ՅՕԴՈՒԱԾ . Բ .

### Խնդիր բայի .

ա . Խնդիր բայի իմանի հոլովական բառն, զոր բայն պահանջէ իբրև կատարիչ գործողութե իւրոյ, կամ իբրև գործի, միջնորդ, տեղի, պատճառ, եւն . և այսպիսի խնդիր կարէ լինել այն ամենայն՝ որ լինի տէր բայի . որպէս Անունն, դերանունն, ընդունելութին, և աներևոյթն ։

բ . Ըստ հանրական բաժանի յերկուս, 'ի խնդիր սեռի, և 'ի խնդիր բնութեան ։ Խնդիր սեռին է՝ զոր բայն պահանջէ ըստ սեռական նշանակութե իւրում ։ Խնդիր բնութեան է՝ զոր իւրաքանչիւր բայ պահանջէ ըստ մասնաւոր նշանակութեան ։

Բայք՝ որք 'ի չէզոքական սեռի են, առնուն միայն զխնդիր բնութե յայլ և այլ հոլովս ըստ իւրաքանչիւր յատուկ նշանակութեան ։

Բայք՝ որք 'ի ներգործական և 'ի կրաւորական սեռի են, առնուն զխնդիր թէ սեռի, և թէ բնութե ։

Խնդիր սեռի Ներգործական բային։

Ներգործական բայն ընդհանրապէս առնու զխնդիր սեռի ՚ի հայցական հոլովի · Օր ․
Բորբոքէ զատութ̄ն վկայ անիրաւ ։ || Ուր հայցականս զատութ̄ն է խնդիր սեռի ներգործական բայիս բորբոքէ ։
Ըստ այսմ է և ՚ի սոսին ․
Խօսեցարուք զճշմարտութիւն իւրաքանչիւր ը̄ ընկերի իւրում ։
Բարկութիւն կորուսանէ և զիմաստունս ։

Ծանօթութիւն · ա ։

Երբեմն խնդիր սեռին զօրութ̄ կայ · Օր ։ Ասեմ և ոչ առնեմ · խոստանամ, և ոչ կատարեմ ։
Եթէ տկարանամք՝ զօրացուցանես, եթէ պատկառեմք՝ քաջալերես ։

Ծանօթութիւն · բ ։

Խնդիր սեռին բազում անգամ անորոշ հայցական դնի · զոր օրինակ ·
Ամենայն ողորմած՝ ողորմութի̄ գտցէ · || ա̄յ զողորմութի̄ ։
Աճապարեա խորհել որ ինչ գործելոց ես · || ա̄յ զոր ինչ ։
Աղաչեմ նախ քան զամ̄, առնել աղօթս՝ խնդրուածս՝ պաղատանս՝ գոհութի̄ս վասն ամենայն մարդկան ։ || Ուր աղօթս և խնդրուածս, եւ̄, են անորոշ հայցական ։

Ծանօթութիւն · գ ։

Յոգնակի հայցականն՝ մանաւանդ եթէ իցէ անձնադիր՝ երբեմն պահէ զյոգնականացուցիչ տառս ք · Օր ։
Ունէին գլուխք որով սատակէին զանիրաւս · || փոխանակ, զգլուխս ։
Եթէ ծանէք խածանօղք ինձ ցուցանիցէ · || փոխանակ, զծանիս խածանօղս ։
Ստացան պարծանք յաւիտենական · || փոխանակ, զպարծանս ։

Ծանօթութիւն . Դ .

Ներգործական բայք ինչ բաց 'ի բնական հայցական խնդրոյ սեռի, առնուն և զայլ հայցական իբր խնդիր բնութե՟. որ ըստ նշանակութեան իմանի իբր ուղղական՝ տրական կամ գործիական ։

Այսպիսիք են բայքս Առնեմ, ասեմ, կարծեմ, համարիմ, հարցանեմ, ուսուցանեմ, ևն . գր .

Դու զի՞ առնես զքեզ . || Ուր զինչ է բնական խնդիր սեռի առնելոյն . իսկ զքեզ՝ իբր ուղղական խնդիր բնութե՟ . || փոխանակ ասելոյ, ո՞ առնես զքեզ ։

Թագաւոր զոմն ասեն զՅիսուս . || փոխանակ ասելոյ, ասեն զՅիսուս Թագաւոր ոմն ։

Հարցից և ես զձեզ բան մի ։ || Ուր բան մի՝ է անորոշ հայցական խնդիր սեռի . և զձեզ՝ իբր տրական խնդիր բնութե՟ . || փոխանակ ասելոյ հարցից ձեզ զբան մի ։

Ուսուցանէր զնոսա բազում ինչ . || փոխանակ, ուսուցանէր նոցա զբազում ինչ ։

Զայս միայն աղաչեսցուք զԱծ . || փխնկ, առ այս միայն ։

Ուսուցանեն զվերինսն զայն ինչ, որ 'ի նոցանէն ծածկեցաւ . || փոխանակ, ուսուցանեն վերնոցն զայն ինչ ։

Կարեւոր համարեցաւ ուսուցանել զմեզ զիւր սեպհական բնութե՟ կամս . || փոխանակ, ուսուցանել մեզ զիւր կամս ։

Ծանօթութիւն . Ե .

Բազում ուրեք ոչ միայն ներգործական բայն, այլ և չէզոքն և կրաւորականն առնուն իբր խնդիր բնութե՟ 'ի հայցական հոլով զարմատ իւրեանց, կամ զհամանշանակ նորա, և կամ զյարաբերականն նորին . և յայսպիսիս հայցականն նշանակէ իբր գործիական ։

Ուրէք առնուն զարմատ իւրեանց . զոր օրինակ ։

Նա եղեալ հիւանդացաւ հիւանդութիւն . || փոխանակ, հիւանդութեամբ ։

Մեղաց զմեղս մեծամեծս . || փխնկ, մեծամեծ մեղօք ։

Կոծեցան զնա ա̃մ իէլշէրծ Դծ ․ ‖ փխնկ, կոծով մեծաւ ։

Սէր յաւիտենական սիրեցի զքեզ ․ ‖ փոխանակ, յաւիտենական սիրով ։

Ուրեք անուն զհամանշանակն արմատոյն ․ Գ̃ ։

Նորոգեցան շանախտա—ոչ—Բէ երկնաւոր ․ ‖ փոխանակ, երկնաւոր անապատականութեամբ ։

Մի՛ ննջեցուք շ—ննն շայն, որոյ կատարումն մահ է ․ ‖ փոխանակ, այնու քնով ։

Կորնչէլ շշա—էաէնաչան աաաաչ—նն ․ ‖ փխնկ, սատակմամբ ։

Մի՛ ոք մեղիցէ շանԲոշԼէ ջանյանա ․ ‖ փոխանակ, անթողլի յանցանօք ։

Ուրեք անուն զյարաբերականն արմատոյն ․ Գ̃ ։

Ընկեցէք յանձանց ձերոց զա̃մ ամպարշտութիւն ձեր, զոր ամպարշտեցայք յիս ․ ‖ փոխանակ, որով ամպարշտեցայք ։

Սկայ լցին յարութե̃ն, զոր յարեաւ աստուածայինս ․ ‖ փոխանակ, որով յարեաւ ։

Նմենայն անիրաւութիւնք նորա, զոր անիրաւեալ իցէ, մի՛ յիշեսցին ․ ‖ փոխանակ, որով անիրաւեալ իցէ ։

Սէրն զոր սիրեցեր զիս՝ 'ի նմա իցէ ․ ‖ փխնկ, որով սիրեցեր ։

## Նմանօրինութիւն ․ Շ ։

Բառքում ներգործական բայք վարեալ ուրեք չէզոքական նշանակութեամբ, փոխեն զհայցական խնդիր իւրեանց յայլ հոլով ․ Գ̃ ։

Յոէն, ա̃ յայնմ զի նշանակէ հաւանիլ, առնու զխնդիրն 'ի տրական հոլով ․ ուստի ասի * Յոէլ ա̃յ ձայնի մարդոյ ‖ ։

Կամի, ըստ որում հաճիլ, ասի * Սր ընդ հաստատութի կամաց օրինացն ‖ ։

Ուրանամ, իբրև հրաժարիլ, ասի * Հանփախուստ ոգն հայելոյ ուրանայէն ․ ‖ այսինքն 'ի հայելոյ յանփախչելի ոգն հրաժարելին ։

Տնտանէմ, իբրև լռել հայիլ, ասի * Տէս 'ի խոստովանութիւն զղջման ‖ ։

Խորհէի, իբրև ջանալ, ասի * Ի բոլորում կորստեան խորհէ-ցաւ կարգաց. || որ ջանացաւ կորստեան բոլոր կարգաց.

Ուստի և ներգործական բայքս յորժամ կան 'ի նմին ներգործական նշանակութեան, առնուն զսեպհական խնդիր իւրեանց հայցական. որ. Հարցանել զաղջիկն. վկայել զայս. անիծանել զայլս. հովուել զհօտ. աղաչել զաստուած. ամբաստանել զանձն. բողոքել զնորա. կատակել զաղջկան. զլանալ զպատուիրանն. տանել զնեղս. համբուրել զնա. ևն.

Բայց մինչ փոփոխին, և լինին իբրև չէզոքական, փոխեն և զհայցական խնդիր իւրեանց յայլ հոլով. որ. Հարցանել զաղջկանէ. վկայել այսմ. անիծանել այլոց. հովուել հօտին. աղաչել առ ած. ամբաստանել զանձնէ. բողոքել զնորեայ. կատակել զաղջկամբ. զլանալ զպատուիրանաւ. տանել նեղս. համբուրել ընդ նմա. ևն։

Ծանօթութիւն. Է։

Ի բազում չէզոքականս առնել զնշանակութի ներգործականի՝ զընական խնդիր իւրեանց փոխեն 'ի հայցականն. որ.

Օ. մարդկան բարձօղն արտասուաց պաղատեայս. || որ աղաչեսցուք.

Օ. անքուն ակն 'ի պահպանութի նաղբեա. || որ խնդրեա.

Օ. դիմադրութի դիմեցման՝ բանիդ սաստուծոյ ցոտացայ. || որ յանձնեցի.

Օ. դեմս ձեր հայցիմ ոչ որպէս յերէկն և յեռանդն. || այսինքն տեսանեմ։

Մի արասցուք նովաւ ինչ, զոր ոչ հաճի ած. || որ կամի.

Օ. հզօրին ձեռն իբր ապիկար ըմբռնհաւատէ. || այսինքըն չարաչար կարծէ ակար.

Ծանօթութիւն. Ը.

Բազում ներգործական բայք միացեալ ընդ անուն խնդիր հայցական, որ է խնդիր սեռի իւրեանց, և 'ի

միասին իբր պարզ բայ վարելով, առնուն նորոգ խըն-
դիր սեռի զհոլովն հայցական. օր.

Ո՛վ իցէ որ ոչ հար առար զկապուտ նորա. ǁ փխ. որ ոչ աւարեաց զկարկուտ նորա.

Ընդ նոսա առնէր գումարտակ քաղաքուն հազար հեծեալ. ǁ փխ. ընդ նոսա գումարէր զքաղաքուն հազար հեծեալ.

Աղաչեցին թողութիւն առնել զօրէնս իւրեանց. ǁ փխ. թողացուցանել զօրէնսն.

Քարոզ յարդարեցէք զայդ կարգս. ǁ փխ. քարոզեցէք զայդ.

Հարցփորձ արարեալ զնոսա. ǁ փխ. հարցեալ զնոսա.

Գոյժ արկանել նմա զերին աղէտս. ǁ փխ. գուժել.

## Ծանօթութիւն. Բ.

«Ներգործական աներևոյթք երբեմն առնուն զխըն-
դիր սեռի ՚ի սեռական հոլովն. օր. Խաղխելով հագ-
լոյն պատառեալ զհողմն. ǁ փխ. զմագիլսն.

Ճածել ընոյն յառաջադէմ սլանայ. ǁ փխ. զթևսն.

Խրախուսէ մատաղ մանկանց ածել յարուեստ դպրութեան. ǁ փխ. զբազմութիւն մանկանց.

Ա՛հ բողոքէ տալոյ մարդկան. ǁ փխ. վասն տալոյ զթողուլ.

Որոց զանուղղային գործողաց տեսանելով՝ յոգւոց ելանէն. ǁ փխ. որոց տեսանելով զգործօղին զանուղղայ իրս.

## Ծանօթութիւն. Գ.

[illegible]ակտն բայիւ ձևացեալ բայք՝ պահելով զներգոր-
ծականն նշանակութին, առնուն երբեմն զհայցական ա-
նուն իբր խնդիր սեռի. օր.

Պահեալ լինէին պահս աւուրս վաթսուն. ǁ փխ. պահէին.

Զգետնեալ լինէր կոյսն մանուկ զխեղերաստաս բըռնաւոր. ǁ այսինքն զգետնէր.

Զնոյն ինքն պատուեալ լինէր զՔրիստոս. ǁ փխ. պատուէ.

՚Ի զարմացումն զբոլոր զկղերիկոս եկեղեցւոյն ածեալ լինէր. ǁ այսինքն ածէր.

Ա՛մ զաստուած Հօղմնեալ չէնէ · ║ այսինքն գուշակէ ,
Որովքեզէն շփեցնուլ զգլխատոս · ║ այսինքն զդեցան ,

Խնդիր սեռի կրաւորական բայի .

Կրաւորական բայն առնու խնդիր սեռի զհոլովն բացառական · Օր · Նաւն ՚ի բաղխմանէ վայրենի ալեացն խորտակեցաւ ; ║ Որ բացառականդ ՚ի բաղխմանէ՝ է խնդիր սեռի կրաւորական բային խորտակեցաւ .

Ըստ այսմ են և ՚ի սոսին .

Որպէս ՚ի զօր և անպարտ խոցոտին ՚ի չարէն , այսպէս
ձրի և առանց վարձուց բժշկին ՚ի Բարւոյն .
՚Ի հարկանէ գովին , և ՚ի փեռոշէ պարսաւին · ՚ի հալածնելոյս երանին , և չարչարոյն լուսոյ տաղին .

Բայց պարտ է զգուշանալ , և մի՛ զամենայն բացառական կարծել խնդիր սեռի կրաւորականին · զի կարէ լինել նաև խնդիր բնութեան .

Գլխաւորին կանոն որոշելոյ · Նախ՝ եթէ անունն բացառական պատշաճիցի նաև ներգործականի նոյն բային , յայտնի է՝ թէ բնութեան խնդիր է և ոչ սեռի .

Երկրորդ՝ եթէ նոյն անունն ուղղականաւ լինիցի տէր ներգործականի նոյն բային , ծանիցի թէ բացառականն է խնդիր սեռի կրաւորականին · ապա թէ ոչ՝ լինի խնդիր բնութեան · Օր .

Մարմինն տէրունական խնդրի ՚ի պիղատոսէ , և խնդրի ՚ի յովսեփայ ; ║ Որ բացառականդ ՚ի պիղատոսէ՝ է խնդիր բնութե՛ , և ոչ սեռի · զի նաև ներգործականն նոյն բային կարէ առնուլ զնոյն՝ յասելն , խնդրեաց ՚ի պիղատոսէ · Իսկ բացառականն ՚ի յովսեփայ՝ է խնդիր սեռի · զի ներգործականի նոյն բային ոչ պատշաճի ասել , խնդրեաց ՚ի յովսեփայ · այլ ինքն ուղղականաւ լինի տէր բայի՝ յասելն · Յովսէփ խնդրեաց ըզմարմինն տէրունական ՚ի պիղատոսէ .

Տես զերկոսին եւս 'ի միում բանիս , * Ընտրեալք 'ի տեառնէ յորդւոց մարդկանէ ։ ‖ Ուր 'ի տեառնէ՝ խնդիր սեռի է կրաւորականին ընտրելոյ , զի տր ընտրէ ․ և յորդւոց մարդկանէ՝ խնդիր բնութեան , զի որդիք մարդկան ոչ կարեն ընտրել ։

Ուստի և յասելն , * Ծովն շարժի 'ի հողմոյ ։ ‖ Բացառականդ 'ի հողմոյ՝ է խնդիր սեռի կրաւորականիս շարժի ․ և յայտ առնէ է՝ զի 'ի փոխել բային 'ի ներգործական , նոյն բացառականն եւս փոխի յուղղական հոլով , և լինի տէր բային ․ իսկ ծովն՝ որ 'ի կրաւորականին էր տէր բային , փոխի 'ի հայցական հոլով՝ և լինի խնդիր սեռի ․ որ ։ Հողմն շարժէ զծովն ։ Ըստ այսմ իմա և զայսոսիկ ։ Ճանաչեմ զիմսն , և ճանաչիմ յիմոցն ։ Տեսցուք ամենեցուն , և տեսցեալք յամենեցունց ։ Պատուեմք զհայրն մեր , և պատուիմք 'ի նմանէ ։ Սիրեսցեն նախ զարարչութիւն , և 'ի նմանէ սիրեսցին ։

—

## ՅՕԴՈՒԱԾ · Դ ·

Խնդիր բնութեան բայից ։

Խնդիր բնութեան այն է , զոր իւրաքանչիւր բայ ըստ յատուկ նշանակութեան պահանջէ ․ զորմէ կարեւոր է կարգել ընդհանրական տեղեկութիւն ինչ ։

### Ծանօթութիւն ․ Ա ։

Սեռական հոլովն ոչ լինի խնդիր՝ բայց միայն էական բային ․ որ ։ Իմ է ամենայն աշխարհ լրիւ իւրով ։

Գտանին և այլ սակաւ բայք՝ որք առնուն զսեռական ․ որ ։ Վաճառեցին զնա երեսուն արծաթոյ ։ Գնեաց զագարակն հարիւր դահեկանի ։

### Ծանօթութիւն ․ Բ ։

Գործիական և ներգոյական հոլովն հասարակաբար պատշաճի ներգործական , կրաւորական , էական և չէ-

զորական բայից. որպէս յայտնի տեսանի յընթացս գրոցս.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Գ.

Խնդիր բնութեան որ պատշաճի ներգործականին բային, նոյն պատշաճի և կրաւորականի նորա. օր. ասի, Տաց ձեզ, և տացի ձեզ. եբարձ ՚ի ձէնջ, և բարձցի ՚ի ձէնջ. խոցեաց սրով, և խոցեցաւ սրով. ծանեաք ՚ի բանից, և ծանուցաւ ՚ի բանից. գրեաց ՚ի տախտակի, և գրեցաւ ՚ի տախտակի.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Դ.

Բայք ոմանք որք միայնակ ոչ ընդունին զհոլով ինչ, միաւորեալք ընդ անուան առնուն զայն. օր., Առնել, միայնակ ոչ վարի ընդ պատմականի. բայց ընդ անուան միաւորեալ առնու զայն և զայլս. որպէս՝ Խօսս առնել զնմանէ. անփոյթ առնել զաշխատութեանց, զջանից, զխրատուց.

Ունել, միայնակ ոչ առնու զտրական, բայց ընդ անուան առնու. որպէս՝ Ակն ունել երանելի յուսոյն. ուշ ունել խրատուց.

Հարկանել, միայնակ ոչ կամի զպատմական, բայց ընդ անուան կարէ առնուլ. որպէս՝ Բուռն հարկանել զնմանէ, զոտից, զլանջէն աբրահամու.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Ե.

Բազում բայք նաև ՚ի լինելն միայնակ՝ առնուն զայլ և այլ հոլովս. օր., Դնել, ասի՝ դնել զոք թագաւոր: դնել ՚ի տան, ՚ի սրտի, զգլխով:

Անցանել, ասի՝ անցանել ՚ի մահուանէ ՚ի կեանս. անցանել զօրինօք, ընդ օրէնս, ըստ երդումն.

Անկանիլ, ասի՝ անկանիլ յերկիր՝ և անկանիլ յաթոռոյ, մահուամբ, զբանիւք, յանկողնի.

Աւասիկ կարգեսցուք յառաջիկայդ զկանոնս խնդրառութեան բայից՝ նախ ներգործականաց, և ապա զէզո

քականաց, որչափ ինչ ցուցանէ հասարակ սովորութիւն.

Կանոն. Ա.

Ներգործական բայք՝ որք նշանակեն առնել զինչ այս ինչ, կամ անուանել զինչ այսպիսի ինչ, առնուն զխնդիր ՚ի հոլովն ուղղական.

Օրինակք են, Ունեմ, ասեմ, անուանեմ, դաւանեմ, կարգեմ, մատուցանեմ, եւլն. Գր.

Որոր զիս հայր փառաւորի : Այժ ասիցեն զչարն բարի.
Ոմանք զկեանս աշխարհիս այսօրինակ անուանէ :
Կացո զնոսա իշխանս ՚ի վերայ իմոց խաշանց :
Պատարագ կենդանի զինքն մատուցէ :

Կանոն. Բ.

Այն սակաւ ներգործական բայք, որք զանունն նշանակեն գնոյ, արժէից, դաշին եւ նմանեաց, առնուն խնդիր ՚ի հոլովն սեռական. բայց կարեն առնուլ եւ յայլ հոլովս, եւս եւ նախադրութ. Օրինակք են, Ստանամ, տամ, վաճառեմ, մատնեմ, վարձեմ, սակ արկեմ, եւլն. Գր.

Ստացաւ զվիճակ անդրին հարիւր ոչխարի.
Տո՛ւք զնա նմա կնաւ: Մի՛ վաճառեսցես զնա արծաթոյ.
Ընդ տաղանդի միոջ սակ արկեր ընդ իս :

Բայց մարթ է դնել, Ստանալ արծաթով, ընդ արծաթոյ. տալ, վաճառել, վարձել, սակ արկանել, տաղանդաւ, ընդ տաղանդի. եւլն.

Կանոն. Գ.

Գործիական հոլովն հասարակաբար պատշաճի ամ բայից, բայց յատկապէս այնց բայից՝ որք նշանակեն առնել զինչ իւիք ինչ գործեաւ կամ միջնորդաւ. Օրինակս ասի, Կերակրել հացիւ. ոռոգանել ջրով. հարկանել ձեռօք. գնալ ոտիւք. սպանանել սրով. լնուլ գինեաւ. եւլն.

Կանոն · Դ̃ ·

Բայք որ ցուցանեն զգործողութիւն շուրջ զիւիք, առնուն զհոլովն պարառական. Որպէս ասի, Պատել զպարսպօք · յածել զբազմախանօք · արկանել զանձամբ · բոլորել զգլխով · սրսկել զժողովրդեամբ · եւն.

Կանոն · Ե ·

Բայք որ նշանակեն զգործողութիւն ՚ի վերայ ումեք, կամ վասն իրի իմիք, առնուն խնդիր ՚ի պատմական հոլով. Որպէս ասի, Խօսել զպատերազմաց · ասել զնշանաց · գուշակել զապագայից · պատմել զհրեշտակաց · քարոզել զՅիսուսէ · կարծել զնմանէ.

Կանոն · Զ ·

Բայք որք նշանակեն զելումն, զհեռացումն, զբարձումն եւ զնման ներգործութիւնս, առնուն խնդիր ՚ի հոլովն բացառական. Որպէս ասի, Հանել ՚ի ծովէ · ազատել ՚ի ծառայութենէ · անջատել ՚ի բարեկամաց · առնուլ ՚ի գրչաց · բառնալ ՚ի ժողովրդենէ · զրկել ՚ի կենաց · բժշկել ՚ի հիւանդութենէ · սրբել յաղտեղութենէ · եւն.

Ամենք ՚ի բայից այսր կարգի երբեմն փոխանակ բացառականի առնուն զտրական. որպէս՝ Հայցել, մաղթել, խնդրել · եւն.

Զոր խնդրիցէ որդի իւր հաց · Այն յորմէ խնդրիցէ.

Են ՚ի սոցանէ՝ որք զբացառական եւ զհայցական խնդիր փոխեն ՚ի միմեանս։ Որպէս ասի, Սրբել զտունն յաղտեղութենէ, եւ մաքրել ՚ի տանէ զաղտեղութիւն։

Բժշկել զմարդ ՚ի հիւանդութենէ, եւ բժշկել ՚ի մարդոյ զհիւանդութիւն։

Արձակել զձեռս ՚ի կապանաց, եւ արձակել ՚ի ձեռաց զկապանս.

Սրբել զքաղաքն յամենայն պղծութենէ, եւ սրբել ՚ի քաղաքէն զամենայն պղծութիւն.

## Կանոն. Է.

Բայք որք յայտ առնեն զգործողութիւն առ ոք կամ առ ինն, այսինքն ցուցանեն զհայեցումն առ այլ, խնդրեն զհոլովն տրական. Բազումք յայսպիսեաց անխտրաբար առնուն զվերջահոլովն և զնախդրիւ տրականն. ուստի միօրինակ լինի, Ասել աշակերտաց, ցաշակերտս, առ աշակերտս. հարցանել ծերոց, առ ծերս. քարոզել հրէից, առ հրէայս.

Ոմանք առաւել խնդրեն առնուլ զվերջահոլովն. զոր. Հատուցանել ատեան. հրամայել ժողովրդեան. պարգևել հնազանդելոց. գանձել անձանց. ևն.

Այլք ևս խնդրեն առաւել զնախդրիւն. զոր օրինակ. Կոչել առ ինքն. հրաւիրել ՚ի հարսանիս. յորդորել ՚ի պատերազմ. համոզել ՚ի խաղաղութիւն. ևն.

## Կանոն. Ը.

Բայք որք զներգործութիւն նշանակեն յիմիք, կամ ՚ի ներքս ուրուք, կամ ՚ի տեղւոջ, առնուն խնդիր ՚ի ներգոյական հոլով. Որպէս ասի, Դնել ՚ի սրտի. ծածկել ՚ի ձեռին. արգելուլ ՚ի բանդի. գրել ՚ի գրքի. պահել ՚ի գանձարանի. ևն.

## Կանոն. Թ.

Ամենայն բայք կարեն առնուլ զխնդիր նախադրութեան, բայց յաճախ նոքին՝ որք նշանակեն զներգործութիւն ընդ պարագայիւք իւրք. զոր.

Օ՜ հոգս աշխարհիս կուտեմք ՚ի վերայ անձանց մերոց.
Եդեղ զշերամն ՚ի վերայ ոսկւոյն.
Արկ զթշնամին ՚ի ներքոյ ոտից իւրոց.
Ընդդիմատեսցէ ձեզ փառաց ՚ի մէջ արքունեաց, և ՚ի մէջ արքունի արքունեացն.

Մի փոխանակեր զկեանս ընդ մահու, և զլոյս ընդ խաւարի.

Բայքս Հարկանել, և զարկանել կամ զարկուցանել

ժգ

բաղդատմանցն առնուն խնդիր զնախադրիւ սեռական. Օր.

Օ՛ մի՛ երբէք հարցես զճար զոտն քո։
Յորժամ հասանէ դեն ՚ի մօլին զգեղոյն զորկանէ.
Յետս յետս տարեալ զորկոյց զգեղոյն ։

խնդիր չեզոքական բայից.

Չեզոքական բայք ոչ առնուն զխնդիր սեռի, այլ միայն զխնդիր բնութ. ՚ի զանազան հոլովս.

Ծանօթութիւն. Ա.

Սեռական հոլովն ոչ պատշաճի չեզոքական բայից. իսկ թէ ուրեք երեւին առնուլ զսեռական, լռելեայն իմանի անդ էական բայ. որպէս յասելն, * Եւ սողոմոն նստաւ յաթոռ դաւթի հօր իւրոյ ամաց երկոտասանից. ‖ Իր լեալ ամաց երկոտասանից.

Այնպէս յասելն, * Մեռաւ ամաց քառասնից. ‖ Նշանակէ՝ լինելով ամաց քառասնից.

Ծանօթութիւն. Բ.

Հայցական հոլովն ոչ պատշաճի լինել խնդիր չեզոքականաց. բայց եթէ խնդիրն իցէ արմատ բային, կամ համանշանակ նորա. կամ է նշանակիչ ժամանակի, տեղւոյ, քանակութեան. Օր.

Մեղաւ ժողովուրդն մեծ անհնարինս ։
Անցեալն զտունս իւրեանց, և ինչ ոչ գտին .
Զտիւ և զգիշեր յանդունդս տառապեցայ .
Ոտք իմ զերկնայինն ուղեւորին ճանապարհ .
Բարձրացաւ ջուրն հնգետասան կանգուն .

Ծանօթութիւն. Գ.

Գործիական հոլով, պարառական, ներգոյական, նախադրութբ, պատշաճի անխտիր ամ չեզոքական բայից. իսկ ՚ի մնացեալ հոլովոց որն առնուլ պատշաճի, նշանակեսցուք համառօտիւ՝ տալով կանոնս ինչ.

## Կանոն . ա ։

Ուղղական հոլովն պատշաճի այնց չէզոքականաց , որք ունին զնշանակութիւն ինչ եական բայի , կամ լռել-եայն փոխեն զեական բայ , կամ զնշանակութիւն իւրեւ նախադրութե . Օր . Ես կացի թագաւոր ՚ի նմանէ . ‖ ֆ եղէ ։
Ընտրէի զճանապարհս նոցա , և նստէի իշխան . ‖ ֆ նստէի լինել իշխան ։

Մտեմ ՚ի բոյնն աղաւնի , և անտուստ ագռաւ ելանեմ . գամ սակաւ մի սպիտակ , և սրանամ դարձեալ բնաւին սեւացեալ . ‖ ֆ իբրեւ աղաւնի . իբրեւ ագռաւ . իբրեւ սպիտակ . իբրեւ սեւացեալ ։

Ուղղական հոլովն վարի երբեմն ընդ չէզոք բայի , ոչ այնչափ իբր խնդիր՝ քան թէ մակբայ նմին . Օր . Դիտապաշտ անկանիլ . ողջանդամ ապրիլ . զէնընկէց փախչիլ . անգործ շրջիլ . ևն ։

## Կանոն . բ ։

Չէզոքականք որ նշանակեն զհայեցումն կամ ըզդիմումն առ այլ , կամ զնմանողութի , կամ զմասնակցութի , զյօժարութի , զհետեւողութի , առնուն զտրական վերջահոլով կամ նախդրիւ , կամ նախադրութբ ։ Որպէս ասի , Գալ հասանել ձեզ , առ ձեզ , ՚ի վր ձեր ։ Ըստ այսմ են , Նմանել , նախանձել , ցանկալ , բարկանալ , իշխել , ծառայել , հնազանդիլ , կարեկցիլ , ևն ։

## Կանոն . գ ։

Չէզոքականք որոց ներգործութի նշանակի յայլմէ՝ իբրեւ ՚ի պատճառէ , ՚ի տեղւոջէ , ՚ի ծայրէ , ևն , առնուն զբացառական ։ Որպէս ասի , Ելանել ՚ի տանէ . ջերմանալ ՚ի հրոյ . զերծանիլ ՚ի գերութէ . երկնչիլ ՚ի տանջանաց . յառնել ՚ի քնոյ . օտարանալ ՚ի հայրենեաց . վրիպիլ ՚ի փառաց , ևն ։

Բայց ոչ են կապեալ ՚ի մի հոլով խնդիր, այլ ազատաբար առնուն զայլ և այլ հոլով ըստ պահանջելոյ բանին. որպէս երևի ՚ի վերայ բային դիմել։

Նախդրիւ տրական. * ՚Ի հիւղս մահուն և տանջանացն դիմէր ‖.

Բացառական և տրական. * Եւ դիմեաց ամենայն երամակն ՚ի դարէ անտի ՚ի ծով ‖.

Նախադրութ. և գործիական. * Պէտք եղև դիմել դիմեալ ՚ի վերայ Հեբրայեցւոց՝ ընդ երեքքաղաքեան նաւահանգիւ մեծաւ հնդաւ ‖.

Պարառական. * Նու նա առժամայն շրաշխանօք դիմէր ‖:

—

ԳԻՏԵԼԻՔ.

Բայց ներգործականք՝ ես և չէզոքականք՝ ոչ ամենեքին հարկաւ պահանջեն զխնդիր բնութեամբ։ Զի են որք եթէ ունիցին զոք բայի կամ զխնդիր սեռի՝ ըստ բաւականին յայտ առնեն զիմաստս բանին. և են որք սովորաբար անխնդիր վարին։

Այսպիսիք են բազում բայք, որք զբնական ներգործութիւն կամ կիրս իրաց նշանակեն. որպէս ՚ի անկականս՝ Բուսուցանել և բուսանել, կանաչացուցանել և կանաչանալ, դալարանալ, աճել, բողբոջել, պտղաբերանալ, ևն.

՚Ի զգայականս՝ Հաչել, հառաչել, կեալ, զգալ, ախորժել, ևն.

՚Ի տարրականս՝ Ճառագայթել, փայլատակել, որոտալ, անձրևել, առատանալ, լուսանալ, մթանալ, ևն. Օր.

Բուսոյց զծաղիկս. բուսաւ խոտն. հառաչէ աղքատն. կեան ձկունք. փայլատակեաց զհուր. որոտան երկինք, ևն.

Տեղեկութիւնք ինչ ՚ի վերայ խնդրառութեան բայից հասարակաց։

### Ծանօթութիւն. ա.

ա. Որ բայք, կամ ընդունելութիւն յայլև այլ սեռի պատահեն միմեանց ՚ի միում բանի, սովորաբար խնդիրն դնի ըստ պահանջման մօտաւոր բային. Որպէս.

Կացէք մնացէք պահեցէք մեզ զնոյն հաւատ։ ‖Որ հայցականս զնոյն հաւատ՝ հետևի մօտաւորունին որ է բայս պահեցէք։ Ըստ այսմ են և այլքն.

Լուծաւ լքաւ տրտմեցաւ և աղաչէաց զէբրայեցին.
Նեղեալ անձինք օրհնեն և գոհանան զաստուծոյ՝ զերծեալք ՚ի վտանգից։

բ. Բայց բազում անգամ ըստ պահանջման հեռաւորին դնի խնդիրն. Որպէս.

Զի առնու ելանէ զհոտ նորա ՚ի հանդերձէն. ‖Փոխանակ ասելոյ, ելանէ առնու զհոտ նորա։
Զամենայն տուրս հաւատացելոցն շրջէր ծովովէր.
Յայտնեալ եկն մեզ լոյսն քրիստոս և լուսաւորեաց.
Ոչ գոսանալ ձեռաց կափողացն հրամայեցեր օրհնեալ գագաթանդ. ‖Որ գագաթանդ՝ է խնդիր հեռակաց ընդունելութեն կափողացն. զի ոչ հրամայեցեր գոսանալ ձեռաց կափողացն զօրհնեալ գագաթն քո։

### Ծանօթութիւն. բ.

ա. Բայք որք յայլևայլ հոլովս կարեն առնուլ զխնդիր, երբեմն ՚ի միում բանի առնուն զնոյն, զմին յայս հոլով, և զմիւսն յայլ. Որպէս.

Ընդէր ՚ի քաջ մտաւորացն և ՚ի վատառուսն զնոյն պահանջես։ ‖Որ բայն պահանջես առեալ է զբացառական և զներգոյական. զի երկոքին հոլովքն են պատշաճին նմա.

Ը. Որպէս բայք՝ նոյնպէս և անուանք ընդունակք
այլ և այլ հոլովից՝ 'ի միում բանի երբեմն առնուն
զխնդիր յայլ և այլ հոլով. Օր.

Խէ և յայսոցիկ շաղակրատանաց անպարտ ես, սակայն
և ոչ այլովքն. || Ուր անուանս անպարտ՝ միանգամայն
առեալ է խնդիր զբացառականս յայսոցիկ շաղակրատա-
նաց, և զգործիականս այլովքն.

Ծանօթութիւն. Է.

Ա. Բազում նոյնակարգ խնդիրք միում բայի հան-
դիպեալք 'ի նմին բանի, եթէ ունին նախդիր կամ
նախադրութի, սովորաբար կրկնի առ իւրաքանչիւրսն.

Զի զգիտութի և զհանճար ուսուցանէ և զարդարութի.
'ի Մեծութենէ և 'ի գեղեցկութենէ արարածոց և ա-
րարչագործն նոցա երևի.

Ապա թէ ընդ զօրութի և ընդ ազդեցութի զարմանայցեն.

Բ. Բայց երբեմն 'ի նախադասն միայն դնի. Օր.

Լսես զփողարան և զամբոխ յոյժ. || ա՛ զամբոխս.

Այսօր զմովսէս և զհեղիաս ածեալ 'ի մեռելոց և կեն-
դանեաց. || ա՛ 'ի կենդանեաց.

Պատուական է քան զառողջութի և զգեղեցկութի. || ա՛
քան զգեղեցկութիւն.

Այժմ դարձարուք առ հովիւն և տեսուչ հոգւոց ձե-
րոց. || ա՛ առ տեսուչ.

Գ. Յայսպիսի բանս՝ ուրպէս երևի՝ կապակցեալ են
խնդիրքն շաղկապաւս և, որ լաւելեայն կրկնէ զնախ-
դիրն կամ զնախադրութին. բայց ուր առանց շաղկա-
պի զատաբար կան խնդիրքն, կրկնելի է. Օր.

Ընդ տեսանել զերկիրն աւետեաց, զաշխարհն կեն-
դանեաց, զլեառն սրբութե, զօթեւանս լուսոյ, զբու-
րաստանս ծաղկեալ երկնաւոր տնկոցն.

Պահեա՛ 'ի տեղւոջ հանգստեան միօրինակ այսր դա-

գործման՝ յաներևոյթ մօտաձունց, 'ի մասնաւոր սխալու-
թեանց, 'ի մեծագոյն գայթակղութեց, 'ի փոքրագոյն
ոմանաւորութեց, 'ի խաբեբայ չար ձանձրութեց.

—

## ՅՕԴՈՒԱԾ · Ե·

### Կիրառութիւն դիմազուրկ բայից.

ա. Դիմազուրկն վարի միշտ յերրորդ դէմս եզական և յոքնական. Միայն դիմազուրկ կազմեալ էական բայիւ, ունի առընթեր սովորաբար զդերանուն կամ զանուն 'ի հոլովս տրական իբրև խնդիր, այլև զինի կամ առաջի զբայ աներևոյթ՝ կամ դիմաւոր ըստ մօտաց աներևութի, որ համարի տեղ դիմազուրկ բային. Օր.

Պարտ է մեզ կատարել զպատուիրանս քրիստոսի. || որ ըստ քերականական շարին այսպէս պարզի. Կատարելն զպատուիրանս քրիստոսի պարտ է մեզ. || Ուր կատարելն է տեղ, պարտ է՝ դիմազուրկ բայ. Մեզ տրական խնդիր դիմազուրկ բային, որ համարի միանգամայն և տեղ աներևութին կատարել. Ըստ այսմ է և 'ի սոսին.

Մեզ ոչ է արժան ապականել զոք.
Վայել է մեզ լնուլ զամ̃ արդարութ̃.
Ծառայի տեառն ոչ է պարտ կռուել.
Մեզ լաւ է զի փոխիմք աստի 'ի մարդկանէ. || Ուր դիմաւոր բայս փոխիմք՝ ըստ մօտաց աներևութի եդեալ է. և նոյն է ասել. *Լաւ է մեզ փոխիլ աստի 'ի մարդկանէ.

բ. Երբեմն էական բայն միայնակ դնի առանց անուան, և տակաւին նշանակէ իբրև դիմազուրկ. Օր.

Որչափ ինչ ցուցանել էր թագաւորին՝ ցուցի. || այ̃ որչափ ցուցանել արժան էր.

Զինչ ինչ առնել էր այգւոյ իմում. || այ̃ առնել պարտ էր.

Եւ ոչ այլ ումեք նմա մերձենալ առ սեղանն սրբութ̃. || այ̃ ոչ էր հնար մերձենալ.

Գ. Բայց ընտրել արժան է, և մի՛ դիմադրուրկ համարել զամենայն՝ որ էական բայիւ իցէ կազմեալ. Օ͞ր.
Ո՛չ օգուտ են արքայի եթէ թողուս զնոսա. ‖ Ուր անունս օգուտ՝ է ուղղական խնդիր բայիս են.
Ոչ պէտք են նմա փականք աղխից. ‖ ո͞ր փականք չեն պիտոյ.
Այսպիսի անդամք անմարմին բնութեան չեն պէտք. ‖ ո͞ր անդամք ոչ են պիտոյ.

---

## ՅՕԴՈՒԱԾ. Ջ.

### Աներևոյթ բայք.

Ա. Աներևոյթ եղանակն կրկնակի վարի 'ի բանս, մի՝ իբրև անուն գոյական, և մի՝ իբրև բայ.

Իբրև անուն՝ լինի յառկացուցիչ, բացայայտիչ, տէր բայի, և խնդիր անուան, նախադրութեան և բայի.

Իբրև բայ՝ ունի զտէր բայի, և զխնդիր սեռի կամ բնութեան.

Բ. Իբրև անուն՝ լինի յառկացուցիչ. զոր օրինակ.
Լուան զձայն զգնալոյ տեառն 'ի դրախտի անդ. ‖ Ուր աներևոյթս գնալոյ՝ է յառկացուցիչ անուանս ձայն.

Բացայայտիչ. Օ͞ր. Ապաքէն ունէր մարդն իշխանութիւն երկոցունց, և՛ անսալոյն և՛ չանսալոյն. ‖ Ուր աներևոյթքս անսալոյն, չանսալոյն, են բացայայտիչ թուական անուանս երկոցունց.

Տէր բայի. Օ͞ր. Ճանաչելն իսկ զքեզ բովանդակ արդարու͞ն է. ‖ Ուր ճանաչելն է տէր էական բայիս է.

Խնդիր անուան. Օ͞ր. Աշակերտք հեզք 'ի յուսանել, և փոյթք 'ի վարդապետել. ‖ Ուր 'ի յուսանել, 'ի վարդապետել՝ են խնդիր ածական անուանցս հեզք և փոյթք.

Խնդիր նախադրութեան. Օ͞ր. Առ ի փրկելոյ զմեզ տ͞ն ա͞յ մերոյ. ‖ Ուր աներևոյթս փրկելոյ է խնդիր նախադրութեանս ա͞ռ.

Խնդիր բայի. Օ͞ր. Առաքեցաւ որդին ա͞յ 'ի փրկել զաշխարհս 'ի ծառայութենէ մեղաց. ‖ Ուր աներևոյթս 'ի փրկել՝ է խնդիր կրաւորական բայիս առաքեցաւ.

Գ. Իսկ իբրև բայ՝ ունի զտէր բայի. զոր օրինակ.
'Ի գալն իմ առ քեզ՝ բերան 'ի բերան պատմեցից. || Ուր սեռականս իմ՝ է տէր աներևութիս 'ի գալն.

Օ խնդիր սեռի. զ̃ր. Ուղիղ համառօտել զբանն ճշմարտուե̃. || Ուր հայցականս զբանն՝ է խնդիր սեռի աներևոյթ բայիս համառօտել.

Օ խնդիր ընդունի. զ̃ր. Այր մի 'ի հարուածս, և գիտէ համբերել ցաւոց. || Ուր վերջահոլով տրականս ցաւոց՝ է խնդիր ընդունի չեզոքական բայիս համբերել.

Դ. Աներևոյթն 'ի նախդրիւ տրական կամ 'ի ներգոյական հոլով եղեալ՝ բազում ուրեք տայ իմանալ զմիտս ժամանականական մակբայի, ցորժամ, մինչ. և զնախդիրն պահանջէ ներգործութե̃, և զդիմորոշ յօդ սովորաբար՝ կամ ինքն, կամ մերձաւոր անունն. զ̃ր.
'Ի տեսանելն զքեզ՝ բերկրեսցի 'ի միտս իւր. || յ̃ յորժամ տեսանիցէ զքեզ.
'Ի սկզբանն 'ի նորոգել հսկայիցն ամբարտաւանից. || յ̃ մինչ կորեան.

Ե. Այլ ուրեք 'ի նախդրիւ հոլովի կամ առ, առ 'ի նախադրութե̃ 'ի սեռական հոլով եղեալ, փակէ զնշանակութիւն նախադրութեանդ վասն. զ̃ր.
'Ի լսել եկեալ եմ. || յ̃ վասն լսելոյ :
Ոչ առ ասել հաստատեցեր ինչ. || յ̃ վասն ասելոյ.
Առ 'ի չմտանելոյ ինչ զմտադիւ. || յ̃ վասն չմտանելոյ.
Ոչ աչաց պիտանութիւն էր 'ի տեսանել, և ոչ ականջք առ 'ի լսել, և ոչ ունչք առ 'ի ծծելոյ զօդ, և ոչ մատունք ձեռաց առ 'ի շօշափելոյ. || վ̃ն տեսանելոյ, վ̃ն լսելոյ, ե̃ւ.

Զ. Սակայն ըստ այսմ նշանակութե̃ բազում անգամ աննախդիր աներևոյթ 'ի կիր արկանի. զ̃ր.
Բղխեսցէ երկիր բանջար խոտոյ՝ սերմանել սերմն, աճել պտուղ. || յ̃ առ 'ի սերմանել, առ 'ի աճել. կամ վասն սերմանելոյ, վասն աճելոյ.

Ահա կացուցի զքեզ այսօր ՚ի վերայ ազգաց և թագաւորութեց՝ խլել և քակել, կործանել և ցրուել, շինել և տնկել. || փխ. առ ՚ի խլել և առ ՚ի քակել, եւն.

Է. Աներևոյթն մինչ լինի խնդիր նախադրութեանցս զատն, ըստ, փոխանակ, չեւ, որք պահանջեն զսեռական կամ զտրական, բազում անգամ անհոլով դնի. օր.

Ըստ չափաւորել մանկանց իմոց. || փխնկ, ըստ կազդուրելոյ.

Մտան զօրութք քաղաքն անմարդի բնակեցուցանել. || փոխանակ, կացուցանելոյ.

Ձեռ զերկիւղն աստուծոյ հայցել. || փխ. հայցելոյ.

Փոխանակ համառօտիւ ասել. || փխ. ասելոյ.

Ը. Աւրէք ուրեք մի հոլով աներևութին փոխանակ միւսոյն եդեալ տեսանի, կամ նախդիրն զանց առնի. օր.

Բան ասի յաղագս անապակն գոլով ծննդեան. || փխ. գոլոյ.

Փոխանակ զանձինս աներկիւղս ունելով. || փխ. ունելոյ.

Ոչ յոյլ ինչ պարապէին, բայց ասել ինչ կամ լսել նորագոյնս. || փոխանակ, յասել կամ ՚ի լսել.

Թ. Գործիական հոլով աներևութին կրկնեալ ընդ խուրում բայի ՚ի զանազան ժամանակս, սաստկացուցանէ զնշանակութի՟ն՝ յաւելեալ հաստատութի բանին. օր.

Օրհնելով օրհնեցից. բազմացուցանելով բազմացուցից. թագաւորելով թագաւորեսցես. տիրելով տիրեսցես. հարկանելով հարցես.

Ժ. Բայց բազում անգամ առանց հոլովելոյ դնի աներևոյթն. օր. Ունել ունէր պարծանս. || փխ. արդարև ունէր.

Գալ եկու. || փխ. արդարև եկու.

Ընթանալ ընթանան. || փխ. յիրաւի ընթանան.

Ըստ այսմ ասի. Վարել վարէ. ցուցանել ցուցանէ. սիրել սիրէն. բարձրանալ բարձրանան. փութալ փութայր. գիտել գիտէր, եւն.

Երբեմն փոխանակ աներևութի դնի անցեալ ընդունելութիւնն նովին մտօք. օր.

Երուսաղէմ երբեւս երթիցէ՝ որ ոք ձեր թշնամի իցէ։
Նոյնպէս ասի. Շինեալ շինէ. պահեալ պահէին. տուեալ
ետու. հանեալ եհան, եւն.

ԺԶ. Աներեւոյթ եղանակն բազում անգամ պատահեալ դիմաւոր բայի յառաջ կամ զկնի, խափանէ զխնդիր սեռի կամ ընդունելի դիմաւորին, եւ ինքն լինի խնդիր նմին. եւ այսպիսի աներեւոյթք կոչին ԱՐԳԵԼԻՉ ԽՆԴՐՈՅ. Որպ.

Բնութիւն մեր սիրէ ծածկել զմերկութի. || Ուր աներեւոյթս ծածկել՝ պատահեալ ներգործական բայիս սիրէ՝ արգելեալ է զխնդիր սեռին, ինքն լինելով խնդիր.

Ըստ այսմ է եւ ՚ի սոսին.

Եւ ոչ թագաւոր կամ բռնաւոր բռնանալ զակն ՚ի վեր կարիցէ ընդ դէմ քո. || փր. ոչ կարիցէ զբռնանալն.
Խնդրէ ընդունել զպատիւն իւր. || փր. խնդրէ զընդունելն.
Օ՛ն անօրէնել ոք յաստուածեղէն օրէնսն դիւրին մի՛ համարեսցի. || փր. մի՛ ոք դիւրին համարեսցի զանօրինելն.
Ոչ կամի գործել զբարին. || փր. ոչ կամի զգործելն.
Հրամայեաց առ բարեկամսն երթալ, եւ դարմանս տանել.
Բայց նաւավարքն խնդրէին փախչել ՚ի նաւէ անտի.

ԺԷ. Նոյնպէս խնդիրք բազում անգամ լռելեայն փակեն յինքեանս զնշանակութիւն պատճառական շաղկապիս զի. զոր օրինակ.

Պատուիրեաց մի՛ ումեք ասել. || այսինքն պատուիրեաց
զի մի՛ ումեք ասիցեն.
Հրամայեաց ածանել հողաթափս. || այսինքն հրամայեաց
զի ածանիցեն հողաթափս.
Ուսուցանել կնոջ մարդոյ ոչ հրամայեմ. || փր. ոչ
հրամայեմ զի ուսուցանիցէ կին մարդ.

Ուստի երբեմն ներգործութբ դնի շաղկապն. Որպ.
Տայր ցաշակերտսն զի արկցեն ժողովրդեան. || Նոյն է իբր այնմ որ ասի. Տայր ցաշակերտսն արկանել ժողովրդեան.
Նոյնպէս ասի. * Պատուիրեաց նմա զի մի՛ ումեք ասիցեն:

ԺԳ. Բայց երբեմն ներգործական բայք առ ընթեր ունելով զաներեւոյթ չէզոք կամ էական բայի, տակաւին պահեն զխնդիր սեռի իւրեանց. Օր.

Ասեն զի զքեզ ուսաք միանալ 'ի մեզ 'ի ձեռն աղօթից. || Ուր ներգործական բայս ուսաք՝ ունելով առ ընթեր զչէզոքական աներեւոյթս միանալ, տակաւին պահէ զխնդիր սեռին զքեզ. Ըստ այսմ է եւ 'ի սոսին.

Հրամայէ փութով ուսանել, եւ զծախսն դպրոցացն յանձնառու լինել. || Այ̄ հրամայէ զծախսն լինել յանձնառու.

Հաստատեաց ճշմարիտ լինել զասացեալս բանաւորաբն. || Այ̄ հաստատեաց զբանագրութիւն լինել ճշմարիտ.

Ուսուցանէ անփոփոխ զնա գոլ եւ անայլայլելի. || Այ̄ ուսուցանէ զնա լինել անփոփոխ.

'Ի նմանէ լուան նեղ լինել զդուռն. || Այ̄ լուան զդուռն լինել նեղ.

ԺԴ. Իսկ յայսպիսի բանս չէ 'ի դէպ զհայցականն համարել տէր չէզոք կամ էական աներեւութին, այլ խնդիր ներգործական բային. որ երբեմն ոչ դնի, այլ զօրութեամբ իմանի. Օր.

Միայն անձանց գոլ զհիմն քո, եւ ոչ եղբարցն. || Ուր զհիմն՝ ոչ է տէր աներեւութիս գոլ, այլ խնդիր սեռի զօրութ̄ իմացեալ ներգործական բային, որում ուղղական խնդիր է գոլն. որպէս թէ ասէր. Միայն անձանց գոլ հաստատացուք զհիմն քո. Ըստ այսմ է եւ այս.

Որով յայտ է՝ 'ի կարեւորացն զսա գոլ. || Այ̄ թէ մի 'ի կարեւորացն գոլ ծանիցուք զսա.

ԺԵ. Նոյնպէս եւ ընդունելութ̄ էական եւ կրաւորական բայից՝ յորժամ ունիցի առ ընթեր զանուն ինչ հայցական, ոչ է պարտ համարել տէր ընդունելութ̄ զհայցականն, այլ խնդիր ներգործականին որ կայ անդ. Օր.

Տեսանիցէք զերկինս բացեալ. եւ զհրեշտակս աստուծոյ զի ելանիցեն եւ իջանիցեն. || Ուր հայցականն զերկինս՝

ոչ է տէր կրաւորական ընդունելութեան բայեալ, այլ
խնդիր սեռի քերականքեին, և ընդունելութին խնդիր
բնութեն նորին։ Իսկ այսմ են և սոքին։

Լուսոյ բացեալ շտեմարան բանին :
Կործէք փախուցեալ շնչաղեալն :
Գտանէ յանհնարին վտանգս եկեալ շնէոցն :
Օտարանոյ մեք ոչ յոյժ սատանայ եղեալ կեղծեաց :

—

## ՅՕԴՈՒԱԾ․ Է․

### Կիրառութիւն էական բայի․

ա․ Էական բայն իբրև արմատ այլ ամենայն բայից՝ նշանակութիւն իւր է կարի հանրական․ վասն որոյ կարէ առնուլ զամենայն հոլովս և զնախադրութիւնս, և միայն հայցական հոլովն ոչ պատշաճի նմա․

Ուղղական․ Օր․ Լոյս եմ որբոց ճշմարիտ, և հայր խնամողաց :
Լուծիչ հաշտ բազմութեան ազգաց :
Ձեռն գալստեանն քո մահն յոյն եղև :
Սեռական․ Օր․ Լուսոյ ընծայոյ էր արքայ և իշխան :
Թէպէտ և բազում որդիք լինիցին նորա :
Իւր է խորհուրդ և գիտութիւն․ և իւր է հանճար և զօրութիւն :
Գործիական․ Օր․ Գանձիւք եղիցի փրկութիւն մեր :
Անիրաւութեամբ էին խորհուրդք նոցա :
Եւ եղիցին գործք արդարութեան խաղաղութեամբ :
Պարառական․ Օր․ Բազում ամբոխ էր շուրջ :
Օրացն որ շրջեալ էին՝ էր պարգև :
Ընկալնիցիս դու, և ամենեքին որ շուրջ իցեն :
Պատմական․ Օր․ Եղև շնման ամբաստանութիւն :
Բանքս ամենայն ՚ի կարգի շաղկապեալ ծծելոյն է :
Մի թէ շեղելոյ ինչ փոյթ է աստուծոյ :
Բացառական․ Օր․ Յինէն եղև բանն այն :
Պատերազմաց սկիզբն յաղագս մարդկան եղև :
Գայր մեզ օգնութիւն յերկնից :

Տրական . որ͞պ. Տէր ինքնին եղիցի մեզ լոյս մշտնջենաւոր ,
'ի փրկութիւն են գործք աշխարհի :
Ձայն աստուծոյ եղև առ նա :
Ներգոյական . որ͞պ. Ահաւասիկ 'ի խորանի անդ է ,
Որ ինչ ծածկեալ է ո՛վ քննեցէ :
Բայց ոգիք արդարոց 'ի ձեռին ա͞յ են :
Նախադրութ͞բ . որ͞պ. Ամենեքին ընդ ապաշխարութ͞բ են .
Մինչդեռ պատրաստէր զերկինս ընդ նմա էի :
Եղեն մեծամեծ վնասք 'ի մէջ երկուց թշնամեաց :

Կարէ առնուլ և զհայցական , եթէ անունն զոր առնու , իցէ նշանակիչ ժամանակի . որ͞պ.

Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս :
Որպէս ընդ ձեզ զամենայն ժամանակս եղէ .
Եւ էր մովսէս 'ի լերին անդ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր :

ե͞ . Անուանք որք նշանակեն զքանակութիւն չափոյ , ժամանակի , կշռոյ , գնոյ , և այլն , յայլ և այլ հոլովս կարեն լինել խնդիր էական բային . Աստի միօրինակ ասի , Բարձրութիւն նորա էր վաթսուն կանգուն կամ կանգնոյ , կամ 'ի կանգնոյ , կամ կանգնաւ .
Երկայնութ͞ի նորա հազար ասպարէզ , կամ 'ի հազար ասպարէզ , կամ 'ի հազար ասպարիզէ :

զ͞ . Էական բայն բազում անգամ տայ զզօրութիւն դիմազուրկ բայի , որպէս նշանակեցաք ('ի յօդ . ա .) որպէս երևի և յայսմ.

Առ աստուած ոչ գոյր դառնալ , զաբրահամ ոչ էր յիշել , իսահակաւ ոչ էր աղօթել , իսրայելիւ ոչ էր պարծել . ‖ այ͞ն առ ա͞ծ ոչ էր մարթ դառնալ , յիշել , և այլն .

է͞ . Երբեմն երրորդ դէմն էական բայիս է և եղակի կամ յոգնակի՝ յարեալ ընդ յարաբերական դերանունն որ՝ վարի փոխանակ մասնական անուանս ոմն կամ ոմանք . որ͞պ. Են որ մեծացուցանեն զանձինս , և են որ խոնարհեցու-

ցանեն . ‖ որ ոմանք մեծացուցանեն զանձինս , և ոմանք խոնարհեցուցանեն .

Տայր պտուղ , էր որ հարիւրաւոր , էր որ վաթսնաւոր , և էր որ երեսնաւոր . ‖ որ ոմն հարիւրաւոր , ևն .

---

## ԳԼՈՒԽ . Ժ .

### Համաձայնութիւն նախադրութե̃ :

ա . Բուն նախադրութիւնք՝ որպիսի են առ , ընդ , ըստ , քան , իբրեւ . նոյնպէս ներքս , առանց , դէմ , միշտ յառաջեն քան զխնդիր իւրեանց . իսկ այլքն ամենայն կարեն դնիլ յետադաս . Օր . Ի բաջարանց չինի երթիջիր . Անմարթ էր զորբութիւն չանց առաջի արկանել : Զդատախազն՝ դատաւորին հանդէպ կացուցի :

Ծանօթութիւն . ա .

Երբեմն ’ի մէջ նախադրութե̃ և խնդրոյն անկանի բայ կամ անուն ինչ . զոր օրինակ .

Զխաչ առաքինութեն բարձին , և զհետ գնացին քրիս- տոսի . ‖ որ գնացին զկնի քրիստոսի .

Ուղխ չարի ’ի վերայ խորոխայր հասուցանել արտաքոյ .

Այսպիսի նախադրութիւնք եթէ ունիցին զնախդիր , բազում անգամ կրկնի առ խնդիրն և ս , զոր օրինակ .

Զմիմեանց չինի անհետ ’ի վ̃ր գայլին . ‖ որ զկնի միմեանց .

Նա չհետ երթային բազումք չպօղոսի և չբառնաբայ .

Յամենայն ժամ չբարեաց չհետ երթայք .

Յորժամ ’ի պէս պէս փորձութեց ’ի դէջ անկանիցէք .

Բայց երբեմն միոյն և եթ դնի . Օր .

Ամբ հասեալ էին յաստուծոյ իրաւանցն վերայ . ‖ փոխանակ , ’ի վերայ իրաւանցն աստուծոյ .

յԵրկուց քերովբէից միջոյ լինէր ազդեցութիւն . ‖ փխ ՚ի
միջոյ երկուց քերովբէից ․

Վայ մարդոյն այնմիկ յոր ձեռն գայցէ գայթակղութի․

Ծանօթութիւն . Է ․

Աւելադրութիւն՝ նոյն կամ նման նախադրութիւնք ուրեք տեսանին կրկնեալ . Օր ․

Խաղաղութի արասցուք ընդ արս ընդ ազգիդ այդմիկ .
‖ փխ ընդ արս ազգիդ ․

Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ ․

Զգալի այն ասի որ ընդ զգայարանաւս ՚ի ներքոյ անկանի․

Ոչ վասն աշակերտս գտանելոյ աղագաւ ․

Ծանօթութիւն . Ը ․

Նախադրութի՝ որ սովորաբար կրկնելի էր ՚ի բազում խնդիրս , տեսանի բազում ուրեք զի լռելեայն կայ ՚ի յետադասն ․ Օրինակ կրկնուե ՚ի խնդիրսն ․

Բազմեցին ընդ աբրահամու , և ընդ սահակայ , և ընդ յակոբայ ․

Յանդիմանեսցէ զաշխարհ վասն մեղաց , վասն արդարութեան , և վասն դատաստանի ․

Զի գեղեցկագոյն է քան զարեգակն , և քան զամենայն դիրս աստեղաց ․

Օրինակ լռելեայն իմացելոյ ՚ի յետադասն ․

Վասն ճանապարհորդութե աղաչէ զայն՝ որ և ոտն յոտանէ չկարէ փոխել , և ընչաւէտութե և գործոց և ձեռաց կորովութե ․ ‖ Որ վասն եղեալ յառաջնումն , լռելեայն կայ ՚ի յետինսն . փոխանակ ասելոյ , վասն ընչաւէտութե , և վասն գործոց , և վասն ձեռաց կորովութե ․

Որ եղեն յառաջ քան զիս և զքեզ . ‖ փխնկ , քան զքեզ ․

Նստաւ միածինն յերկինս ՚ի վերոյ քերովբէիցն , և յերկրի՝ անասուն կենդանեացն . ‖ փոխանակ , ՚ի վերոյ անասուն կենդանեացն ․

Երկինք և երկիր վասն մարդոյն, և մարդն՝ պատուիրա-
նին . || այ վասն պատուիրանին ։
Մի՛ իբրև զհամբերութիւն ձեռաց ամբարշտելոյն յախո-
րու, և զանիրաւութիւն բարեկամի տաղտկալի քեզ ե-
րևեսցի . || այ իբրև զանիրաւութիւն ։
Զայսպիսի ձևս՝ լաւելեայն իմասցես նախադրութիւք թէ-
ութիւն զնախադիր՝ 'ի յետադաս խնդիրն կրկնի նախնդիրն ։
Վայ 'ի վերոյ վայի, և գոյժ 'ի գուժի . || փոխանակ,
'ի վերայ գուժի ։
Գթայր 'ի նա իբրև հայր որդւոյ . || այ 'ի վերայ որդւոյ ։
Եկեղեցի անուն տիրապէս 'ի վերայ ժողովրդեան առ-
նու քան 'ի տան . || փոխանակ, 'ի վերայ տան ։

Ծանօթութիւն . Է ։

Նախադրութիւնք իբր, իբրև, որպէս, քան, սովո-
րաբար խնդրեն զհայցական, որպէս երևի յօրինակսն
անդ յառաջին մասին . այլ 'ի կարգի բանին յորին ընդ
այլ և այլ հոլովս, իբր զի մերձակայ անուանն կամ բային
այնպէս պահանջէ . || Երջանհոլով տրական . օր ։
Լոյսն որպէս ծառայէից հետամուտ լինէին ։
Դիւրագոյն լիցի երկրին սոդոմացւոց քան քաղաքին այնմիկ ։
Նախդրիւ տրական . օր . Փափագէ 'ի մահ քան 'ի կեանս ։
Պարտ իբրև 'ի հայրս գթալ 'ի նա, և իբրև որդի հնազանդիլ ։
Բացառական . օր . Երևեցան նոցա բաժանեալ լե-
զուք իբրև 'ի հրոյ ։
Իսկ նախադրութիւնք իբրև, որպէս, առանց պահանջ-
ման մերձակայ անուանն կամ բային, առնուն զսեռա-
կան կամ զտրական՝ նշանակելով նման . օր ։
Հնչիւն յերկնից եկեալ իբրև սաստիկ հողմոյ . || այ
նման հողմոյ ։
Իջանել անօթ ինչ իբրև կտաւոյ մեծի . || այ նման կտաւոյ ։
Սրտմտութի նոցա ըստ նմանութե օձի, որպէս իժի քարբի
զի խցեալ է զականջս իւր . || այ նման իժի ։

ժէ

Բայց խրատ տամ որպէս ողորմելւոց ուրուք 'ի տեսանել.
Նախադրութիւն զօրէն, որ սովորաբար առնու զսեռա-կան, ուրեք առնու և զայլ հոլովս, ունելով անդ զնշա-նակութիւն իբրև նախադրութեան. Պր.
Օրէն տարաշխարհիկ ոչ եդաւ 'ի գերեզմանի. || Պր իբրև զտարաշխարհիկ.
Կաշկանդեալ զօրէն երկաթագլխոց լինէր կապանօք. || Պր կաշկանդեալ լինէր իբրև երկաթագլխոց կապանօք.
Նախադրութիւն հանդերձ՝ որ գործածանի վարի սո-վորաբար, կայ ընդ սեռականի ևս. Պր.
Հանդերձ առանձին ծախուց և ռոճկաց.
Հանդերձ տասնեակ բիւրոց առաքելական գնդին.
Այսպիսի խառնուածք գտանին և յայլ նախադրու-թիւնս ինչ, զորս մարթ է ճանաչել 'ի կարգէ բանին.

## ԳԼՈՒԽ. Զ.

## Համաձայնութիւն մակբայի:

Մակբայն յայն սակս դնի 'ի բանի, զի զպարա-գայս ներգործութեանց յայտ արասցէ. Պր զորպէ-սըն, զորքանն, զտեղին, զժամանակն, եւն. Ուստի մակ-բայն ոչ միայն յարի 'ի բայս՝ այլ և յընդունելութիւնս, 'ի բայանուանս, և յածականս՝ որք զներգործութիւն ինչ ցուցանեն, որոց առաջի և զկնի կարէ դասիլ:

Օրինակութիւն. Ա.

Բազում անգամ լոկ անուանք պարզք և բաղադրեալք վարին 'ի բանի իբրև մակբայ. և այն պէսպէս օրինակաւ: Ուրեք առանց իրիք փոփոխութեան իւրեանց. Պր:
Միևնոյն գործոց բարութեան պարապ գտանել:

Զայդ արդար ատեցեր ։ Մի՛ թէ անիրաւ դատիցի Տր ։
Գնա՛ դու ՚ի ճանապարհս սրտի քո անօրէն ։
Ջերանելոյն առաջի իմ մի՛ երեւեսցիս ։

Սուրբք անուանք եւ դերանուանք խոկ փոփոխութ՟ իւիք մակբայանան ․ որ կամ հայցական նախդիր ունելով , կամ ․ , ․ ՚ի ծայրին , կամ զմասնիկդ իւն ․ որ՟ ։
Նորոգ ընթանային եւ բէբնա դառնային ․ Այսինքն երագաբար եւ թեթեւութ՟ ։
Զնոյն օրինակ ծառայք հանդերձ տերամբքն տանջեալ ․
|| որ՟ նոյնպէս , նովին օրինակաւ ։
Որք սակաւագոյնք հարին զմեզ , եւ յոլովագոյնք հարեալ դառն ՚ի մէնջ ․ || որ՟ սակաւ անգամ , յոլով անգամ ։
Որդեկելիս իմն այդեալ , արտասուելիս իմն յեղանակէ ․
|| այսինքն որդեկելի եղանակաւ , ողբական կերպիւ ։

Անուանք երբեմն նախադրութ՟ եւ վերին իբր մակբայ , որպէս՝ ըստ ժամանակ մի ․ ընդ աջմ ․ առ օրին ․ ըստ չափ ․ եւն ։ Նոյնպէս երբեմն կրկնութ՟ ․ որպէս՝ Ընդ ժամս ժամս ․ օր ըստ օրէ ․ ամ ամ ․ բերան ՚ի բերան ․ եւն ։

Ծանօթութիւն ․ Է ։

Յաւելադրութ՟՝ բազում անգամ նոյն կամ նման մակբայ կրկնի ՚ի միում բանի , սաստկութիւն տալով ասացուածոյն ․ որ՟ ։
Յանկարծակի յեղակարծում ծանր զամենայն քաղաքն ՚ի բուռն առնոյր ։
Յուցից արդ ազգաւս զհնոյն յիս տեսակ ։
Յուսալ վերջոյն անդրէն մտանելոյ նախապարգեւելոյն փառաւորութեանց դարձեալ հասանել ։

Ըստ այս ձեւ վերաբերի աւելն ․ Նորոգ նորոգ ․ առէգ առէգ ․ փոքր ընդ փոքր ․ ջոկ ջոկ ․ այս այս ․ մի եւ մի եւս ․ եւն ։

Ծանօթութիւն ․ Ը ։

Երբեմն դիմաւորաժանեալ մակբայն դնի ըստ եղեայն ․ որ՟ ։ Որպէս ես , նոյնպէս եւ դու ․ եւ որպէս զօրք իմ ,

զօրք քո . և որպէս երիվարք իմ , երիվարք քո : || Ուր
յերկու յետինսդ լծելեալն կայ նոյնպէսն . որ դիմա-
բաժանի որպէսին . իբր թէ ասէր , նոյնպէս զօրք քո .
նոյնպէս երիվարք քո :

Իսկ այլ ուրեք կրճատի մասն ինչ դիմաբաժանեալ
մակբային . օր . Բայց եթէ այսպէս և եթէ այն՝ 'ի փա-
ռս աստուծոյ կատարեսջի . || փխ. այնպէս :
Որպէս այժմ՝ նոյն և յայնժամ . || փխ. նոյնպէս :
Հայեաց յայսկոյս և յայն . || այսինքն յայնկոյս :

Ծանօթութիւն . Է :

Երբեմն 'ի բարդ մակբայն զատանի մի բառն 'ի
միւսմէն միջադրութեամբ այլոյ բառի . օր .
Մինչ նա դեռ կամէր քաջութիւն ինչ առնել . || փոխա-
նակ , մինչդեռ նա կամէր .
Մի համարիր այլ ինչ այդ տարրեալ առ քեզ յայտ-
նութիւն . || փոխանակ , այլազգ ինչ տարրեալ .

Բացասականս ոչ , չ , մ՛ , դնի երբեմն զկնի բային , եր-
բեմն 'ի վեր այլոյ բայի , կամ միջադրութեամբ այլոց բառից . օր .
Բայց դիտէի ոչ զնա . || այսինքն ոչ դիտէի զնա :
Զուլ 'ի մօր կաթն չհրամայէ եփել . || փխ. հրամայէ չեփել :
Լու ոչ մեռանիլ ես կարեն . || փխ. ոչ կարեն մեռանիլ .
Շնորհ՝ որոյ ոչ զեղումն գերազանց մնաց սահմանի .
|| փխ. որոյ զեղումն ոչ սահմանի :

Բացասականս ոչ՝ որ ընդ մասնական անուան ստոր-
րաբար անմնախնդիր վարի , իբր մակբայ յարեալ 'ի բայս
կամ յածական անուանս՝ վարի նախդրաւ և նախա-
դրութեամբ . օր . Մի խաբեսցէ զձեզ ոչ խօսել .
Անմտութեամբ գործեցի ոչ հաճոյն քո .
Ոչ ախորժելիս ստեղծչին կատարէ .
Որ զկենցաղս ըստ ոչ բնութեան տատանեալ շարժեաց .

Համեմատական մակբայքս առաւել , քան , փոխեն
երբեմն զդասաւորութիւն իւրեանց . զոր օրինակ .

Որքան յանձն իւր՝ առաւել 'ի նա էր յուսացեալ. ‖ Սուր-
գնելն էր. Առաւել 'ի նա՝ քան յանձն իւր էր յու-
սացեալ. Ռամկօրէն է և 'ի սոսին.

Որքան զաւետիս՝ զբօթ սիրեմք լսել. ‖ Փոխանակ, ըզ-
բօթ սիրեմք լսել քան զաւետիս.

Բուռն հարեալ քան զխնոց գործոց՝ զքաջ շնորհաց.
‖ Փոխանակ, բուռն հարեալ զքաջ շնորհաց՝ քան
զխնոց գործոց.

Ոյք են որ քան 'ի յանտի կենացն վրիպել՝ յաստեացս
զարհուրին. ‖ Փոխանակ, որ զարհուրին վրիպել յաստ-
եացս՝ քան յանտի կենացն.

Իսկ առաւել քան ոսկւով և արծաթով՝ ամօթխածութ̃
և պատկառանօք զարդարել զանձինս. ‖ Փոխանակ, ա-
ռաւել ամօթխածութ̃ քան ոսկւով. եւն.

## ԳԼՈՒԽ. Լ.

## Համաձայնութիւն շաղկապի:

Ապաքէն ցուցաք յառաջին մասին զպէսպէս տե-
սակս շաղկապին, և զգործ նորա՝ որ է կապել
զմասունս բանի ընդ միմեանս, և զբան ընդ բանի. Բայց
քանզի գտանին 'ի նոսա ինչ ինչ արժանի տեղեկութ̃,
զայնոսիկ ևս կարևոր համարեցաք նշանակել աստէն.

Կանոն. Ա.

Շաղկապքն պատճառական, անկատարական, թէա-
կան, 'ի յաջորդ հատուածի բանին պահանջեն զհամե-
մատեալ շաղկապսն վասն այնորիկ, սակայն, ապա, եւն.
բայց տեսանի բազում ուրեք լռելեայն թողեալ զմին
կամ զմիւսն. Գր.

Իսկ եթէ սկիզբն սուրբ, և զանգուածն. և արմատն,

ապա և ոստքն։ || Ուր յառաջին մասին պակասի ապա․ յերկրորդումն՝ պակասի Ըրէ․ և պարզաբար ասելի էր․ Իսկ եթէ սկիզբն սուրբ է, ապա և զանգուածն․ և եթէ արմատն սուրբ է, ապա և ոստքն։

Նուշէ էք դուք որդիք, առաքեաց զհոգի որդւոյ իւրոյ․ || այսինքն վասն այնորիկ առաքեաց։

Զի դու զգիտութի մերժեցեր, մերժեցից և ես զքեզ․ || այսինքն վասն այդորիկ մերժեցից և ես։

Թէպէտ փակեաց և կնքեաց զդրունս տմ եկեղեցեաց, նոքա զտմ տան եկեղեցի արարին․ || որ բայց նք զտմ տան։

Թէպէտ և որդի է, ուսաւ 'ի չարչարանաց անտի զհնազանդութի․ || այսինքն սակայն ուսաւ։

Ծանօթութիւն․ Ե․

Շաղկապս և՝ ուրեք դնի առանց հարկի․ որ․ Ի երկիւղի անկանելոյն զարհուրեալ և թմբրեցի․ Տէր մեր գթալով 'ի կինն այրի, և յարուցանէր զմիամօր որդի նորա․ Եր պատրաստեալ և մեռոյ ինձ։ Մինչդեռ աղօթեմ՝ և վրիպիմ․ 'ի յընթանալս խմում և կասիմ․ յարդարանալս իմ և մեղանչեմ։

Բազում ուրեք կրկնի և շաղկապն, և նշանակէ թէ այսպէս, և թէ այնպէս․ որ․ Որպէս մանանէ կորստեան և՛ զղջումն ուժգնապէս, և՛ մեղանչելն մոլեգնաբար․ || որ թէ զղջումն, թէ մեղանչելն։ Երկնաւորին քեզ պսակքն լինիցին և՛ ը վաստակոց, և՛ ը համբերութեն․ || որ թէ ը վաստակոց, թէ ը համբերութեն։

Սոյլն մօք կրկնի շաղկապն Նէպէտ․ զոր օրինակ։ Ընհամեմատ գտցէ զնա Նէպէտ մեծութեն, Նէպէտ բազմութեն․ Արժանի է չարչարանաց Նէպէտ այժմուս, Նէպէտ հանդերձելոյն․

Ծանօթութիւն․ Զ․

Շաղկապքս Նէ, չէ, ապաքէ չէ, իբր թարմատար կմ պատճառականին՝ անխտրաբար պահանջեն զդիմաւոր բայ․ որ․

Աղաչէր զնա ոմն փարիսեցի, զի ճաշ կերիցէ ընդ նմա :
Կամիմ զի գիտիցէ՞ դուք, եթէ առն ամ̃ գլուխ Քս̃ է :
Ապա ուրեմն վկայէք՝ եթէ կամակից էք գործոց հարցն
ձերոց : Որպէս զի տացէ նոցա վկայութիւն :

Սակայն երբեմն յաներևոյթ եղանակն դնի բայ այն-պիսեաց . Օ՛ր : Հրոյ զօրութի այն է՝ զի զանպիտան աղտ այրէ, և յառաջին պայծառութին ածել . || փոխանակ, սրբեսցէ, ածիցէ .

Բայց պօղոս աղաչէր՝ ըէ զմեկնեալն 'ի նոցանէ մի ա-նուլ ընդ ինքեանս . || փոխանակ, մի՛ առնուցուն :
Որպէս զի 'ի լուսն նստել, ըստ 'ի տուէ և 'ի գիշերի .
|| փոխանակ, նստցէ .

---

# ԳԼՈՒԽ · Ի.

Որ ինչ ասացաւ զհմառուէ համաձայնութե մասանց բանի ցայս վայր, բաւական են ուսանողաց առ 'ի գիտել զկանոնս համաձայնութե . Մնայ այսուհետև երկու ինչ կարևոր, Վերլուծութի և Շարադրութի . այսինքն նախ առաջին լուծանել զշարադրեալ բանս գրոց . երկրորդ՝ ինքնին յօրինել զբան 'ի գրոց բարբառ . զերկաքանչիւրոց առանձինն յօդուածովք խօսեսցուք յառաջիկայդ :

---

## ՅՕԴՈՒԱԾ · Ա.

### Վերլուծութիւն .

Վերլուծութի շարադրութե՝ է որոշումն իւրաքանչիւր բառից միոյ բանի, իբր տէր բայի, իբր բայ, իբր խնդիր բայի, իբր մակբայ, իբր շաղկապ, իբր բացայայտիչ, իբր յատկացուցիչ, իբր ածական, ևն :

Զվերլուծութիւն պարտ է սկսանել ի պարզ շարադրութեանց, յաւետարանէն, և ի նմանեաց. և ապա ձեռնահաս առնել առ լուծումն միջակ և խրթին բանից. որպիսիք են թուղթքն պօղոսի, աստուածաբանոյ նարեկացւոյն, և այլն.

Օրինակ պարզ շարադրութեան.

(1) Եւ իբրեւ եմուտ ի նաւն, գնացին զհետ նորա աշակերտքն իւր. (2) և ահա շարժումն մեծ եղեւ ի ծովուն, մինչեւ նաւին ծածկել յալեաց անտի, և ինքն ննջէր. (3) և մատուցեալ աշակերտքն յարուցին զնա և ասեն. Տէր փրկեա զմեզ զի կորնչիմք. (4) և ասէ ցնոսա, ընդէր վատասիրտք էք սակաւահաւատք. յայնժամ յարուցեալ սաստեաց հողմոցն և ծովուն, և եղեւ խաղաղութիւն մեծ.

Լուծումն.

(1) Եւ՝ շաղկապ բաղհիւսական. Իբրեւ՝ մակբայ ժամանակական եմուտին. Ի նաւն՝ տրական խնդիր եմուտին. Գնացին՝ բայ չէզոքական. Զհետ՝ նախադրութիւն. Նորա՝ խնդիր նախադրութեան, և երկոքին միանգամայն խնդիր գնացինին. Աշակերտքն՝ տէր գնացինին. Իւր՝ յատկացուցիչ աշակերտացն. (2) Ահա՝ մակբայ ցուցական եղեւին. Շարժումն՝ տէր եղեւին. Մեծ՝ ածական շարժմանն. Եղեւ՝ բայ էական. Ի ծովուն՝ ներգոյական խնդիր եղեւին. Մինչեւ՝ շաղկապ համեմատական. Նաւին՝ տէր ծածկելին. Ծածկել՝ բայ կրաւորական. Յալեաց՝ բացառական խնդիր սեռի ծածկելին. Անտի՝ ածական ցուցական, եդեալ փոխանակ ցուցական դերանուանս ցուցանէ. Ինքն՝ տէր ննջէրին. (3) Մատուցեալ՝ չէզոքական ընդունելութիւն վարեալ իւր բայ. Աշակերտքն՝ տէր մատուցեալ, յարուցին և ասեն բայից. Յարուցին՝ բայ անցողական. Զնա՝ խնդիր սեռի յարուցինին. Ասեն՝ բայ ներգործական, որոյ խնդիր սեռին զօրութեամբ դնի զայս. Տէր՝ կոչական անուն՝

տէր փրկեա՛ բային. Փրկեա՛՝ բայ ներգործական. Զմեզ՝ խնդիր սեռի փրկեա՛ բային. Զի՝ պատճառական շաղկապ. Կորնչեսցէ՝ բայ չէզոքական, որոյ տէրն է զօրութիւն դէ. (4) Լուէ՝ բայ ներգործական, որոյ տէրն է զօրութիւն նա, դ̃ յն. Ցնոտ՝ խնդիր ընդունել տէրին. Ընդէր՝ հարցական մակբայ էջին. Աստուածոյ՝ ուղղական խնդիր էջին. Է՝ բայ էական. Ամենահաստատ՝ կոչական տէր էին, որոյ դիմականն է զօրութիւն դուք. Յայնժամ՝ մակբայ ժամանակական յարուցեալին. Յարուցեալ՝ չէզոքական ընդունելութի վարեալ իբր բայ, որոյ տէրն զօրութիւն նո, որ միանգամայն է տէր առաքեցային. Առաքեցաւ՝ բայ չէզոքական. Հոգւոյն եւ ծածկոյն՝ տրական խնդիր առաքեցային. Եղև՝ էական բայ. Խաղաղութիւն՝ տէր եղեւին. Մեծ՝ ածական խաղաղութեին.

Օրինակ միջակ շարադրութեան:

Զպօղոսի համանուան վեհին եւ քաղաքակցի, երանի թէ եւ գործակցի յաւետարանն քրիստոսի, եւ ունողի եւ կրողի զպսակաւորուի չարչարանաց նորին 'ի մարմնի, ընթերցաք զգիր՝ յընդդիմադրութի ամբաստանողացն զքէն առ մեզ. որով եւ անզգուշալին բան ոչ գոլ ծանուցաւ հաւատարիմ. քանզի անմտաց և՛ ոչ զճաշակս առողջ իմաստութե՛ է այս:

Լուծումն:

Զպօղոսի՝ է յատկացուցիչ դիմական անուանս զգիր, ուր զ նախդիրն կրկնեալ է. Համանուան՝ ածական պօղոսին. Վեհին՝ յատկացուցիչ համանուան. Քաղաքակցի՝ ածական պօղոսին. Երանի թէ՝ միջարկութի. Գործակցի՝ ածական պօղոսին. Յաւետարանն՝ տրական խնդիր գործակցոյն. Քրիստոսի՝ յատկացուցիչ աւետարանին. Ունողի, կրողի՝ ածական պօղոսին. Զպսակաւորն՝ խնդիր

սեռի հրովին · Զարչարանաց՝ յատկացուցիչ պաշտաւոնէ · Նորին՝ յատկացուցիչ չարչարանացին · Ի մարմնի՝ ներգոյական խնդիր հրովին · Ընթերցօղ՝ բայ ներգործական, տէրն զօրութ̃ Դէ · Օգնէ՝ խնդիր սեռի ընթերցօղին · Յընդդիմադրութ̃՝ տրական խնդիր զօրութ̃ էրին, մի որ էր յընդդիմադրութ̃ · Ներգործանողաց՝ տրական խնդիր ընդդիմադրութ̃ · Օգնէ՝ պատճառական խնդիր ներգործանողացին · Նա Դէր՝ տրական խնդիր ներգործանողացին · Արոյն՝ յարաբերական կրօղն, և խնդիր ծառայութեան · Ընդգունելին՝ ածական բանին · Բան՝ որ ծառայութեան · Ի՝ բացառական մակբայ գոլին · Կոչէ՝ բայ էական, խնդիր ծառայութեան · Ծառայ՝ բայ կրաւորական, որոյ խնդիր սեռի զօրութ̃ ՚ի Դինչ · Հաստատէ՝ ուղղական խնդիր գոլին · Բանիւ՝ շաղկապ պատճառական · Նմա՝ սեռական խնդիր էին · Ի՝ բացառական մակբայ տաղային · Օծաւէ՝ խնդիր սեռի տաղային · Նորա՝ սեռական խնդիր էին · Է՝ բայ էական, վերաբերեալ իբր դիմադրութիւնք, իբր թէ անձն է · Նա՝ տէր էին ·

Օրինակ խոշորին շղագրութեան ·

(1) Հաշուեկելումն յոյժ ծայրագոյն պատուականութ̃ եւ խնդրեալ՝ յամենայնեցունց քերթողաց պարս, արժանաւոր է տուեալ մեզ զհրաշափառագոյն նուաղականութիւն նմա հատուցանել փառք ·

(2) Որ գեղեցկատարփելի իմն և յարդարուն հմտութք յառաջին՝ զբոլորիւքն գերազանցեաց քերթուածովք · այնքան՝ մինչ զի արձանակեալ ուրեմն յիւր դիւցազնական տաղսն, գեր ՚ի վերոյ զինքն սոսց լինել՝ գեր զհռչակելին և զկեցն ամ քերթողաց հոմերոս ·

(3) Նա մանաւանդ լուռ այնմ են, զի զերկնի ընութ̃ և զերկիր, միանգամայն զբովանդակ տարերց առ իրեար յարդարեալ յարմարագոյն խառնումն՝ քննութ̃ պարառեալ զեկոց բոլորեցուն ·

(4) Բայց ընդ նմին և զմշակականն հանգամանաց տեղեկութի, և զյոլով այլ ևս զկենցաղօգտակարագոյնս ախորժակացն: (5) Յորոց մի ՚ի նորա գիտնական վերաբերեալ խրատուց՝ առաջիկայս իսկ մեր հարցաքննեալ յայտնեսցի, զոր ասաց բայ. շամբուշ է՝ որ ընդ վեհագունին քան զինքն բերէ հակառակութե մեծ:

Պարզաբանութիւն քերականական:

Յամենավայելուչ պարս քերթողաց յոյժ ծայրագոյն պատուականութե հռչակելոյն Եսիոդեայ՝ առաւել արժանաւոր է հատուցանել միշտ զհրաշափառագոյն նաղաբանութի իբր վարկ:

Որ գեղեցկատարափալի և յարդարուն հմտութեն յառաջեալ՝ այնքան գերազանցեաց զբոլոր քերթուածովք, մինչ զի ՚ի դիւցազնական տաղս իւր արձանակէլ թբ արձանագրեալ՝ ասաց զինքն լինել դեր ՚ի վերոյ քան զհոմերոս հռչակաւորն և վեհն ամենայն քերթողաց:

Իսկ մանաւանդ թէ այնմ ևս գերազանցեաց, զի զընութի երկնի և երկրի, միանգամայն և զյարադրեալ յարմարագոյն խառնուածս բովանդակ տարերաց առ իրեարս՝ քննութե պարատեսեալ զեկոյց բոլորեցուն:

Բայց ընդ նմին զեկոյց զտեղեկութի մշակական հանգամանաց, և զայլ ևս յոլով կենցաղօգտակարագոյնս ախորժակաց, այսինքն բարուց:

Յորոց ՚ի գիտնական խրատուց նորա մինն թբ մի խրատն ՚ի վեր բերեալ և առաջիկայս իսկ հարցաքննեալ ՚ի մէնջ՝ յայտնեսցի մեզ. այն՝ զոր ասաց. շամբուշ է նա՝ որ ըդ մեծ հակառակութե բերէ ընդ վեհագունին քան զինքն:

Լուծումն:

(1) Հռչակելոյն՝ ընդունելութի կրաւորական՝ ածական ենթակայ, համաձայն նմին հոլովով. Յոյժ՝ ածական

ծայրագունին · Ծայրագոյն՝ ածական պատուականութեան · Պատուականութեան՝ գործիական խնդիր հաւանելոյնին · Նորոգեալ՝ որական խնդիր հաստատունելին · Յանձնաձայնելոյն՝ ածական պարոնին · Ի երկնաւորայ՝ յատկացուցիչ պարոնին · Պարոն՝ ներգոյական խնդիր հաւանելոյնին, որոյ նախադիրն կայ ՚ի վերայ անձնաձայնելոյն · Արժանաւոր՝ խնդիր էին · Էին՝ էական բայ · Առաւել՝ ածական արժանաւորին · Մինչ՝ ժամանակական մակբայ հաստատունելին · Օհրաշափառագոյն՝ ածական նաղաբանութեան · Նմա՝ աւելադրութեան կայ իբր խնդիր հաստատունելին, ՚ի պարզաբանութիւն եղիտեայ · Հաստատունել՝ է տէր էական բային է · Ազատ՝ ուղղական խնդիր հաստատունելին, որ փակէ յինքեան զնշանակութիւն իւրոյ նախադրութեան ·

(2) Որ՝ յարաբերական եղիտեայ, և տէր ցասանելոյ, գերաղանեայ, արճանաչեալ, ատայ, և զեկոյց բայից · Գերեզմանարկել՝ ածական հնարեցին · Իմն՝ մասնական ածական գերեզմանարկելոյն · Յարդարուն՝ ածական հնարեցին · Հնարեցն՝ խնդիր ցասանելոյն · Յասանել՝ չեզոքական ընդունելութեան վարեալ իբր բայ · Օտարելոյն՝ ածական տերբաձայնին · Գերաղանեալ՝ չեզոքական բայ · Իերբ ածայն՝ պարառական խնդիր գերաղանեային · Այնչափ՝ Մինչ զի՝ համեմատական մակբայ գերաղանեային · Մինչ զի՝ համեմատական շաղկապ · Արճանաչել՝ ներգործական ընդունելութեան վարեալ իբր բայ · Աստէն՝ մակբայ տեղական կամ ժամանակական · Յետ՝ յատկացուցիչ իմ ածական տաղին · Գեղեցկանշան՝ ածական տաղին · Տաղն՝ ներգոյական խնդիր արճանաչեալին · Գեր ՚ի վերայ՝ ուղղական խնդիր լինելին · Օրինակն՝ խնդիր սեռի տալին · Լինել՝ ուղղական խնդիր տալին · Գեր՝ նախադրութի · Օհաշակելին և զեհն՝ են ածականք հանդերձին · Հանդերձ՝ հայցական խնդիր գեր նախադրութեան, և ՚ի միասին խնդիր գեր ՚ի վերայն · Ածնայն՝ ածական տերբաձայնին · Իերբաձայ՝ սեռական խնդիր հաւանելի և վեհ ածականաց ·

(3) Մանաւանդ՝ շաղկապ համեմատական · Ըսփ՝ նախա-
դրութի · Այնմ՝ տրական խնդիր ըսփին, և երկրքին միան-
գամայն խնդիր գերաղանցեային, որ զօրութե կրկնի ·
Լուս՝ շաղկապ բաղհիւսական · Օ է՝ շաղկապ պատճա-
ռական · Օքերհնէ՝ յատկացուցիչ բնուէն · Ինուէ՝ խըն-
դիր սեռի պարապետէալին · Օքերէրէ՝ յատկացուցիչ
բնուէ, ուր զ նախդիրն աւելադրութե կրկնի · Մէանգա
նոյն՝ մակբայ հաւաքական պարապետէալին · Օքէվան-
տակ՝ ածական տաբէրայ · Տարէրըշ՝ յատկացուցիչ էաա-
նուինին · Իա էրէարա՝ նախադրութե խնդիր ըարատրէլին ·
Յարատրէալ՝ ածական էաանուինին · Յարիարագոյն՝ ածա
կան էաանուինին · Պրննուբէ՝ խնդիր պարապետէալին ·
Պարապետէալ՝ ներգործական ընդունելութի վարեալ
իբր գերբայ · Օէնոյն՝ բայ անցողական · Իուըրէյուն՝
տրական խնդիր ըէնոյին ·

(4) Այլ՝ շաղկապ բաղհիւսական · Ինդ՝ նախադրութի ·
Լեգն՝ խնդիր նախադրութե, և վերաբերին առ պարապետէալ
ըէրէնոյն · Լու՝ շաղկապ բաղհիւսական յարի առ այլն ·
Օ էլանէանն՝ ածական հանգանանայն · Հանգանանայ՝
յատկացուցիչ տէըէնուէ · Տէըէնուէ՝ խնդիր սեռի պա-
րապետէալ ըէնոյին · Լու՝ շաղկապ, յարելի է այլոցն ·
Օ յոըոփ՝ ածական էէնյաղօգատէարագուէն · Այլու՝ շաղ
կապ բաղհիւսական · Օ էէնյաղօգատէարագոյն՝ խնդիր
սեռի պարապետէալ ըէնոյին · Իխարծանոյն՝ տրական խըն
դիր էէնյաղօգատէարագուէն ·

(5) Յորոյ՝ յարաբերական էէնյաղօգատէարագուէն, և
խնդիր մասնականիս Գ · Աէ՝ մասնական անուն՝ որ ըայ
նեայէ բային · Ի նորա՝ յատկացուցիչ իրաստայն ·
Պիտանական՝ ածական իրաստայն · Ա էրաբէրէալ՝ կրաւո
րական ընդունելութի վարեալ իբր բայ, որոյ խնդիր սե-
ռին ’ի ձեռն իմանի զօրութե · Խրատայ՝ իբր բացայայտիչ
ըորոյին, ’ի բացառական հոլով եդեալ համաձայն նմին,
որոյ նախդիրն է կայ ’ի յատկացուցչին նոր · Ալաշէնայ՝

տեղական մակբայ հարցաձայնութեան. Իսկ՝ ստորասական մակբայ հարցաձայնութեան, կամ եղեալ իբր զարդ. Մեզ՝ խնդիր ցուցանելոյ բային. Հարցանէին՝ կրաւորական ընդունելութիւն վարեալ իբր բայ, որոյ խնդիր սեռին ՚ի մէնջ իմանի զօրութ̃բ. Ցուցանելոյ՝ բայ կրաւորական, որոյ տէրն է Գ խրատն որ ՚ի վեր անդր բացառական հոլովով եղեալ է իբր խնդիր ածականին իւրոյ մասնական անուանն Գ. Օր՝ յարաբերական Գ խրատուն, և խնդիր սեռի առէոյն. Առէք՝ բայ ներգործական, ո̃րն զօրութ̃ նա, ո̃ր Եսիոդոս. Եւս՝ շաղկապ թարմատար. Շամբուն՝ ուղղակ̃ն խնդիր էին. Էր՝ էական բայ, ո̃րն զօրութ̃ նա. Որ՝ յարաբերական զօրութ̃ եղեալ նախին, և ո̃ր բերէին. Ընդ՝ նախադրութի. Վեհագունքն՝ տրական խնդիր ընդին, և երկրորդին ՚ի միասին խնդիր բերէին. Առ՝ նախադրութի. Օձենն՝ խնդիր տանին, և երկրորդին ՚ի միասին խնդիր բաղդատական ածականին վեհագոյն. Բերէր՝ բայ ներգործական. Հաւաստաբերան՝ յատկացուցիչ վեհին. Սէն՝ անորոշ հայցակ̃ն խնդիր սեռի բերէին:

—

ՅՕԴՈՒԱԾ . Բ.

Ոչ է բաւական ուսանողին գիտել զվերլուծութի շարադրութե̃ այլոց, այլ և պիտոյ է ինքնին կարել զբանս ըստ կանոնի քերթողաց: Յայս կարևոր է նախ՝ մտադիւր ընթեռնուլ զհմտաշունչ գիրս, և զմատենս երևելի հեղինակաց. ո̃րք են, Եզնիկ, Եղիշէ. Շնորհալին, Իգնատիոս, Սարգիս, Լամբրոնացին, և այլք:

Երկրորդ՝ ՚ի մատենագրութե̃ց նոցին ընտրել զմինն, որ առաւել ախորժելի թուի ինքեան, և զայն յաճախ ընթեռնուլ, մինչ զի բանքն ՚ի միտս իւր տպաւորեսցին. և ապա կրթիլ ՚ի յօրինել զբանս, հետևելով սովորական ոճոյ մատենագրին, և որչափ կարողութիւն է՝ նմանօղ լինել նմին.

Բայց յոյժ մեծապէս փոյթ ունել պարտի բացայայտութե̃, և զգուշանալ 'ի խորախօս բանից, և'ի խրթին և պատիպատ ոճոյ, որք տանջեն մեծապէս զընթերցօղսն և տաղտկացուցանեն։

Նապքէն որպէս տեսանի 'ի նախընթաց յօդուածի, երեք են գլխաւոր տեսակք քերականական շարադրութեան․ Պարզ, Միջակ և Խրթին։

Պարզ շարադրութի̃ է, յորում մասունք բանին պահեն զբնական դասաւորութի̃ իւրեանց ընդ սովորական ոճոյ։

Միջակ է, յորում դասաւորութի̃ բանից փոքր ինչ այլայլի հանդերձ խոտորմամբ ոճոյ։

Խրթին է, յորում մեծապէս այլայլի դասաւորութի̃ բանից և ոճն սովորական։ Զայսոսիկ մարթիս տեսանել 'ի միում յայսմ օրինակի։

Պարզ շարադրութիւն.

Որ ոք կամիցի կրթել զինքն իմաստասիրական հմտութե̃, և մթերել 'ի հոգին զկենցաղօգուտ շահեկանութիւն որք են 'ի նմանէ, յաւէտ հարկաւոր է նմա 'ի բաց տանել զանձն 'ի կենցաղական զբաղմանց, և անդադար պարապիլ յուսումն կարևորաց։

Միջակ շարադրութիւն։

Որ կամիցի ոք զինքն իմաստասիրական կրթել հմտութե̃, և զկենցաղօգուտ շահեկանութիւն որ 'ի նմանէ՝ մթերել 'ի հոգին, նմա յաւէտ է հարկաւոր 'ի բաց զանձն 'ի կենցաղական զբաղմանց տանել, և անդադար յուսումն կարևորաց պարապել։

Խրթին շարադրութիւն։

Որ իմաստասիրական կրթել ոք զինքն կամիցի հմտութե̃, և զառ 'ի նմանէ զկենցաղօգուտն մթերել 'ի

հոգւոյն զշահեկանութիւն, ՚ի բայց զանձն յաւէտ հարկաւոր է նմա ՚ի կենցաղականն տանել զբաղանաց, և անդադար ՚ի կարևորացն պարապել ուսմանն.

Ուստի ըստ քերականաց ոչ վասն խրթութե բառից կմ գաղտնութե իմաստից շարադրութի ինչ սոսի խրթին, այլ վն տարբեր դասաւորութե բառից ՚ի հասարակ կանոնաց համաձայնութե. Իսկ բաժանումն շարադրութե, ՚ի վսեմ, հեզակապ, զարդարուն, ազնիւ, շքեղ, գերապանծ, և այլն, վերաբերի առ ճարտասանս.

Պարզ շարադրութին սովորաբար ՚ի գործ ածի ՚ի սոսկ պատմականս, ՚ի խրատաբանութիւնս, յընտանի նամակս, և յայլ այսպիսի որ հասարակաց գիտելիք են.

Միջակ շարադրութին՝ ՚ի նամակս առ արգոյ անձինս, յատենական ճառս, ՚ի գովեստ և ՚ի պարսաւ, և յայլ այսպիսիս.

Խրթին շարադրութին՝ ՚ի կարճառօտ ներբողս, կամ յարձանագրութիս, յերգս, ՚ի նախերգանս գրոց, երբեմն և ՚ի վիպասանութիս և ՚ի բանաստեղծութիւնս, մանաւանդ առ իմաստունս գրեալ.

## ԳԼՈՒԽ. Թ.

## Վերծանութիւն։

Վերծանութին է ըստ պատշաճի ընթեռնուլ և գրել զբանս.

Ընդ սովոր անկանի և յարմարագրութին, որ է հըմտութի գրելոյ զիւրաքանչիւր բառս սեպհական տառիւք ըստ սովորութե նախնեաց. Օր.

Մարդ, որ է [illegible]. և ոչ մարթ, որ է կարելի.
Ձախ, որ է [illegible]. և ոչ ցախ, որ է [illegible].

Ժէ

Սնօթ , որ է կապ · և ոչ անօդ , որ է հաստառըչ : Դայր , որ է կըշկադատող · և ոչ գայր , որ է վար ետե : Սեր , որ է նուհայեր · և ոչ սեր , որ է կայմակ : Հեղուլ , որ է թափօտել · և ոչ յեղուլ , որ է շրջել · ևն :

Ահա 'ի սոսին որպէս յայտնի երևի , նշանակութի բառից փոխի գլխովին , և այլ ինչ նշանակէ :

Այսպէս և այլ բաղում բառք՝ որք եթէ սեպհական տառիւք ոչ գրեսցին , կորուսանեն զիմաստ իւրեանց , և լինին անիշան ձայնք · օրինակ իմն , Ջուրն գրեսցի չուր · քունն՝ գուն · ձիւնն՝ ցիւն · փարթամն՝ բարթամ · վարդն՝ վարթ , ևն :

Հմտութի յարմարագրութե կարևոր է յոյժ հետևողաց ուսման · և զայն ուսուցանէ հեղինակութին բառարանաց :

Գլխաւոր մասունք վերծանութե կրկին են , Առոգանութի և Տրոհութի · զորոց ասասցի համառօտիւ ուրոյն ուրոյն յօդուածով :

---

## ՅՕԴՈՒԱԾ · Ա·

Առոգանութին է յարմարաւոր հնչումն ձայնի 'ի կարդալն : Առոգանութին լինի նշանագրութբ · իսկ նշանք որ այժմ 'ի գործ ածին 'ի քերականական առոգանութեան՝ են սոքին :

### Շեշտ :

Շեշտ կամ շեշտանշան ( ՛ ) 'ի գործ ածի առ ձայնաւոր տառ , որոյ ձայնն սուր հնչէ յարտաբերելն :

Շեշտն դնի 'ի հրամայական բայս · որպ · Աղաչեա՛ , մի՛ աղաչեր՝ աղաչեսցէ՛ · լո՛ւր · տե՛ս · Թողջի՛ր · խորհեա՛ց · ուսարո՛ւք · մատո՛ · զօրացի՛ · ևն :

Եթէ հրամայական բայն ունիցի յառաջ քան զինքն այնպիսի բառ՝ ընդ որում 'ի միասին վարի , յայնժամ դնելի է շեշտն 'ի յետին վանկին նախընթաց բառին · որպ ·

Երա՛նք արք · ուրա՛խ լերուք · զմտա՛ւ ածէք, ածէ՛ք զմտաւ · մեծամա՛յն կարդացէք · պի՛նդ կալարուք · բո՛ւռն հարէք · ևն ։

Շեշտն դնի ՚ի վերայ դիմազուրկ բայից · որք յան-ուանէ և յէական բայէ լինեն կազմեալ, զորս կոչեն Բնական անդէմ · ոպ · Կարևո՛ր է · մա՛րթ է · չա՛տ է · զգուշալի՛ է · իմաստնո՛ց է ։

Բայց եթէ բայն լինի նախադաս, շեշտն դնի ՚ի վր բային · ոպ · Է՛ կարևոր · է՛ զգուշալի · է՛ պիտանի · ևն ։

Կոչական անունն եթէ լինի միայնակ՝ յառաջնում վանկի դնի շեշտն · ոպ · Ա՛րքայ · ը՛նկեր · ո՛րդեակ · բա՛րեկամ · ե՛ղբայր ։

Իսկ եթէ կոչականն կրկնեսցի, շեշտն դնի ՚ի յետին վանկ առաջնոյն · ոպ · Աբրահա՛մ աբրահամ · յակո՛բ յակոբ · սաւո՛ւղ սաւուղ · ևն ։

Բայց երբեմն յերկուսին ևս դնի կամ ՚ի վերջն, կամ ՚ի սկիզբն · ոպ · Սեղա՛ն սեղա՛ն · երկի՛ր երկի՛ր · յա՛կոբ յա՛կոբ · մա՛րթա մա՛րթա ։

Շեշտն դնի և ՚ի դերանունս · ոպ · Ո՛ւ ես հայր մեր ։ Ո՛վ է որդի իմ ։ Ա՛յս է ծուխ բարկութե իմոյ ։ Ի՛մ է խորհուրդ և զգուշութի ։ Նորա՛ է ծով ։

Բացասական մակբայքս ո՛չ, մի՛, և հարցական անուանքս՝ ո՛վ, զի՛նչ, յորում տեղւոջ և կայցեն ՚ի բանի, իւրեանց ունին զշեշտն ։

Բութ ։

Բութ կամ ընթանշան (՝) դնի անդ, ուր պիտոյ է փոքր մի ցածուցանել զձայնն ։ Բութն սովորութի եղև դնել ՚ի վր դասական կամ կրկնական մակբայից, նախ՝ Երկրորդ՝ Դարձեալ՝ · և առ շաղկապսն, այդ՝ այն ոչ՝ այլ՝ ։

Դնի ևս ՚ի վերայ բառի՝ որ զատանելի է ՚ի յաջոր-դէն · ոպ · Ահա՝ մարդդ հանդիսատ է ։ ‖ Որ առանց բութի ընթեռնուլ Ահա մարդդ, չէ՛ ուղիղ ։ Ըստ այսմ

են և ոտքն․ Շնորհեաց զմարմինն՝ յովսէփայ․
Պատմեաց քահանայապետն զբանսն՝ պօղոսի․

Դնի և ՚ի վերայ անկատար մասին ինչ բանի․ օր․ Որ խոնարհի՝ խոնարհեցուցանէ զդևս․ և որ ոչ խոնարհի՝ խոնարհի ՚ի դևաց․ Որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ․

Ահա յայտնի և ՚ի նմանս՝ ուր ստորակէտ մարթ էր դնել, վասն փոքր միջոցի բառիցն դնի բութ․

Պարոյկ։

Պարոյկն (՞) կամ ոլորակ (՞) դնի ՚ի վր զարմացական միջարկութե․ օր․ Ո՜վ՝ զիա՞րդ գեղեցիկք են ոտք աւետարանչացն խաղաղութե․

՚Ի վերայ հարցական մակբայից․ օր․ Ո՞ւր էիր մինչ ես հիմունս արկանէի երկրի։

՚Ի վերայ հարցական անուանց․ օր․ Ո՞վ է դա որ թագուցանէ յինէն զխորհուրդս․

Դնի և ՚ի կոչականս․ օր․ Ո՜վ անմիտք և հեղգասիրտք․

՚Ի հարցական բանս պարոյկն դնի ՚ի վր այնր բառի, ուր եղանակ հարցմանն ձևանայ․ ուստի կարէ դնիլ այլազգ քան զսովորականն՝ ըստ տարբեր սովորութե ընթերցողաց․ օր․ Եթէ բարբա՞ռ հանգոյն նմա որոտայցես․

Զոր մարթ է այլազգ պարուկել․ օր․ Եթէ բարբառ հանգո՞յն նմա որոտայցես․ Այսպէս, իսկ յանձի՞ն կալայց արդեօք․ նմ, իսկ յանձին կալա՞յց արդեօք․

Երկար։

Երկար նշանն (՛) դնի ՚ի վերայ միջարկութե․ օր․ Բա՛ւ է․ վա՛շ վաշ․ և երբեմն ՚ի վր բառից ինչ՝ ուր եղանակ կրից բացատրի․ օր․ Երուսաղէ՛մ երուսաղէ՛մ․

Ենթամնայ։

Ենթամնայն (-) է նշան միաւորութեան տառի կամ վանկի․ զոր սովորութի է դնել ՚ի գրատարձի․

Գրադարձ կամ Տողադարձ ասի, ուր տառ ինչ կամ վանկ բառին կայ 'ի վերջ տողին, և մնացեալ մասն անցեալ է 'ի սկիզբն յաջորդ տողին։

Կանոն գրադարձի՝ է ուղիղ բաժանումն հեգից կամ վանկից. որ է ըստ այսմ օրինակի։

Կանոն. ա. Յանկք որք բաղաձայնիւ սկսանին՝ յանջատելն իւրեանց բաղաձայնն ոչ է դնելի 'ի վերջ նախընթաց տողին, այլ 'ի սկիզբն յաջորդ տողին։ Այս թիւր է անջատումն, ամ-օք, կար-եօք, գնաց-աք, լաւ-ութի. այլ՝ ա-մօք, կա-րեօք, գնա-ցաք, լաւու-թիւն.

Կանոն. բ. Եթէ բաղաձայնն իցէ բնական առաջին վանկին, որպիսի են նոյնութ բարդեալք, բաղադրեալք, այլազգ անջատելն։ Աստի ոչ է պարտ անջատել, մե-ծակն, լայ-ներես, բա-ցօթեայ, կայ-ծառ, ա-նողորմ, ա-պերախտ. այլ՝ մեծ-ակն, լայն-երես, բաց-օթեայ, կայծ-առ, ան-ողորմ, ապ-երախտ.

Կանոն. գ. Եթէ երկու բաղաձայնք իցեն կից, բաժանի մին 'ի սպառուածն՝ և միւսն 'ի սկիզբն տողին. որ։ Ըն-սա, ան-կաւ, եր-կիր, որ-դւոյ. Իսկ եթէ բազում իցեն բաղաձայնք, մին և եթ անցանէ 'ի սկիզբն. որ. Թարգ-ման, երկ-չոտ, խորա-կաճաշ, ձանձ-րոյթ.

Կանոն. դ. Եթէ 'ի մէջ բազում բաղաձայնից լուելեայն մտանէ ը, 'ի տողադարձին դնի ներգործութ. որ. Զը-քաւոր, սըփ-ռել, տըր-տում.

Կանոն. ե. Եթէ երկու ձայնաւոր իցեն կից, ձայնաւորն դնի միայնակ 'ի սպառուած նախընթաց տողին, այլև 'ի սկիզբն յաջորդին. որ. Ե-օծ, է-ակ, լի-ով, ատէ-ին, առնէ-ին, մարի-ամ.

Այսպէս բաժանին և վանկքն, յորս գոյ տառս յ. որ. Գոյ-ակ, կայ-ուն, բայ-ից, արքայ-ական.

## ՅՕԴՈՒԱԾ. Բ.

### Տրոհութիւն.

Տրոհութիւն է՝ զբառս և զհատուածս բանին որոշել 'ի ձեռն կիտից՝ վասն անվթար ցուցանելոյ իմաստիցն. իսկ կէտքն են երեք. Ստորակէտ, Միջակէտ, Վերջակէտ.

Ստորակէտն ( , ) դնի 'ի ծայր անկատար բանից.

Միջակէտն ( . ) դնի 'ի ծայր հատուածոյ բանին. որ թէպէտ ունի ամբողջ զիւր իմաստն, բայց մասն է այլոյ բանի.

Վերջակէտն ( : ) դնի 'ի ծայր կատարեալ բանի. և զկնի նորա այլ բան սկսանի նոր գլխագրով. Կատարեալ բանն յատկաբար կոչի Տուն, որ և Պարբերութիւն ասի.

Սովորութիւն է դնել ստորակէտ, եթէ 'ի բանի մակբայ կամ շաղկապ ինչ 'ի կախ թողու զսկսեալն. որպէս. եթէ, յայնժամ, որպէս, նոյնպէս, երբ, և զի, և այլն. Կամ ուր բանըն սկսանի յարաբերականաւ, կամ դրադէմ բայիւ. որպէս. Եթէ իցէ արդարև որդի Աստուծոյ, պաշտպանեսցէ նմա. Զի որ զիմաստութիւն և զխրատ անարգէ, թշուառական է. Այլ կամ զհուր, կամ զհողմ, կամ զօդ արագ, կամ զաստեղաց շրջանս աստուածս համարեցան.

Այնպէս անկատար մնան իմաստք բանին, ուր առ բազում հատուածս բանի կայցէ մի բայ. զոր օրինակ. Ո՞վ մեկնեսցէ զմեզ 'ի սիրոյն Քրիստոսի, նեղութի՞ւն, թէ անձկութի՞ւն, թէ հալածա՞նք, թէ սո՞վ, թէ մերկութի՞ւն, թէ վի՞շտ, թէ սո՞ւր. Այնպէս եթէ 'ի միում պարբերութեան կան այլ և այլ անուանք ածականաւ և յատկացուցչաւ, կամ զանազան բայք խնդրով իւրեանց, դնի ստորակէտ. որպէս. Հարին զնա 'ի հարուածս մեծամեծս, և ջնջեցին զնոսա, և զմնացորդսն 'ի հարկի կացուցին. Զի 'ի մէջ աստուծոյ արարածոց՝ 'ի գարշութիս եղեն, և 'ի գայթակղութիս որդւոց մարդկան, և յորոգայթս ոտից անզգամաց:

Յարգեն զթշուառուն̃, և պարսաւեն զյաջողուածս. ծաղր առնեն զանուն բախտի, և զփառաւորուն ապ-պանեն յոյժ. սիրեն զանշքութի̃ հանդերձից, և յարգեն զանարգն քան զպատուականս. գովեն զմահ, և պարսաւեն զկեանս:

Օրինակ ըստ պատշաճի կետադրութե̃ յո̃մ սրբագիր մատեանս յայտնի տեսանի, յոր սակս չէ պարտ յաճախել օրինակս. բայց դիցուք զմի ևս.

Որ ընդունի զորդին, ընդունի և զկեանս. և որ ոչ ընդունի զորդին, և ոչ զկեանս ընդունի:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI- 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԱԽՃԱՆ.

# ՑԱՆԿ

Գլխաւոր բանից պարունակելոց ՚ի բովանդակ քերականութեան։

## ՄԱՍՆ Ա.


Անուն և բաժանումն նորա . . . . . . . . 3։
Անուան պարագայք . . . . . . . . . . 4։
Անուանք մասնականք . . . . . . . . . . 34։
Անուանք հանրականք . . . . . . . . . . 37։
Անուանք հարցականք . . . . . . . . . . 38։
Անուանք թուականք . . . . . . . . . . 40։
Դերանուն և բաժանումն նորա . . . . . . 43։
Բայ և պարագայք նորա . . . . . . . . . 55։
Ընդունելութիւն և պարագայք նորա . . . 111։
Նախադրութիւն և տեսակք նորա . . . 116։
Մակբայ և տեսակք նորա . . . . . . . 131։
Շաղկապ և տեսակք նորա . . . . . . . 142։
Միջարկութիւն և տեսակք նորա . . . . 148։


## ՄԱՍՆ Բ.


Համաձայնութիւն դիական անուանց . . . 154։
Բացայայտիչ և բացայայտեալ . . . . . 154։
Յատկացուցիչ և յատկացեալ . . . . . . 159։
Դիական անուն խնդիր դիականի . . . 163։
Դիական անուն խնդիր ածականի . . . 168։
Խնդրառութիւն բաղդատական անուանց . . 173։
Խնդրառութիւն մասնական, հանրական, հարցական և թուական անուանց . . . . . 174։

Համաձայնութիւն ածական անուանց . . . 176
Համաձայնութիւն մասնական, հանրական, հարցական և թուական անուանց . . . . 186
Համաձայնութիւն դերանուան . . . . 196
Համաձայնութիւն յարաբերականին . . . 206
Դիմորոշ յօդք . . . . . . . . . 213
Համաձայնութիւն բայի . . . . . . 218
Տէր բայի . . . . . . . . . . 219
Խնդիր բայի . . . . . . . . . 226
Խնդիր սեռի ներգործականի . . . . . 227
Խնդիր սեռի կրաւորականի . . . . . 232
Խնդիր բնութեան բայից . . . . . . 233
Խնդիր բնութ՟ ներգործակ՟նաց և կրաւորականաց 235
Խնդիր բնութեան չէզոքականաց . . . . 238
Կրաւորութիւն դիմաւորակ բայից . . . 243
Համաձայնութիւն աներևոյթ բայից . . . 244
Կրաւորութիւն էական բայից . . . . . 249
Համաձայնութիւն նախադրութեան . . . 251
Համաձայնութիւն մակբայի . . . . . 254
Համաձայնութիւն շաղկապի . . . . . 257
Վերլուծութիւն . . . . . . . . 259
Շարադրութեան տեսակք . . . . . 267
Վերծանութիւն . . . . . . . . 268
Առոգանութիւն . . . . . . . . 269
Տրոհութիւն . . . . . . . . . 273



[illegible]

[illegible]

